



ՄԱՐԴԿԱՅԻՆ ԼԵԶՈՒԻՆ

Ե Ի

ԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՈՒԼՆ ՎՐԱՅ

ՔՆՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՄԸ

101
-86

USPH 44.007 1961 2.

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԼԵԶՈՒԻՆ

ՍԿԶԻՆ, ՀԱՆԳՐՄԱՆՈՒՄ, ՄԻՈՒԹԵԱՆ ՈՒ ԲԸՓՆՄԱՆ

Ե Ի

ԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՈՒԱՅ ՎՐԱՅ

ՔՆՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՄԸ

Գ Ր Ն Ց

Հ. ՊՕՂՈՍ Վ. ՅՈՎՆԱՆԵԱՆՑ


ՄԻՒԹ. ՈՒԹՏԵՆ



ՎԻԷՆՆԱ

ՊԱՇՏՊԱՆ Ս. ԵՍՏՈՒԱԾԵԾՆԻ ՎԱՆՔԸ

ԹԵՂ. 1857.



REPORT OF THE

COMMISSIONERS OF THE

LAND OFFICE

FOR THE YEAR 1883

AND THE PROCEEDINGS OF THE

LAND OFFICE

FOR THE YEAR 1883

THE STATE OF NEW YORK

A $\frac{\pi}{12673}$

ՄԱՐԳԿԱՅԻՆ ԼԵԶՈՒԻՆ

ՍԿԶՐԱՆ, ՀԱՆԳԱՄԱՆԱՑ, ՄԻՈՒԹԵԱՆ ՈՒ ԲԱԺԱՆՄԱՆ

ԵՒ

ԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՈՒԱՅ ՎՐԱՅ

ՔՆՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ

«Խորհուրդ եւ Լեզու... եւ» (Ցեր մարդոյն),
իմանալ նորոք... Սիբու. ժ. Ե. 5:

ՈՒՍՄԱՆՅ ու գիտութեանց՝ ուստի եւ մարդուն
մտաւոր յառաջադիմութեան՝ բարձրագոյն
կրթութեան եւ արհեստութեան սկիզբն
ու հիմն է Լեզուն: Ինչ որ արտաքուստ
կամ գրով կ'աւանդուի, յառաջագոյն մտաց
մէջ պիտ'որ ծնանի՝ հասունանայ ու կատարելու-
թեան հասնի, որ ետքն ալ իբրեւ ուսմանց ու
հմտութեան նիւթ աւանդուի: Բայց այն հոգեկան
ծնունդը կամ արդիւնքն ինչ միջոցով կրնայ
արտաքուստ երեւալ՝ խորհողէն ուրիշին անցնիլ
ու աւանդուիլ. միայն Լեզուով: Ուրեմն մարդ-
կային կենաց արհեստագոյն վիճակի մէջ մտնելու
ու յառաջադիմութիւն ընելու սկզբնական կա-
րեւոր միջնորդն ու յառաջացուցիչը՝ Մարդկային
Լեզուն է, որուն հանգամանացը վրայ շատ հիմ-
նական ու հարկաւոր անդեկութիւններ կան, զո-
րոնք աւանդելը մեր աս համառօտ գրութեան
նպատակն է:

ԳԼՈՒԽ Ա.

Մ-ԴԴԳ-ԳՆ ԵՆ-ԻՆ -ԳՆԵԶ:

1. ԻՆՆԵՒՐ մարդուն ունեցած անգին ու սքանչելի ձիրքերուն մէկն է՝ Խօսելու Կրօնը: Բիշէ, այսինքն մտաց խորհուրդներն ու գաղափարները, կամքին փափագներն ու սրտին զգացմունքն արտաքին կարգաւորեալ ու կենդանի նշաններով, որ է ԵՄ-ՊԵՆ ԵՆ-ԳՆ ու Խօսելու ուրիշներու յայտնի ընելու զօրութիւնն ու ընդունակութիւնը: Այն, բանն իր իմացողութեամբը կամ մտածելու կարողութեամբը մարդն ամէն մարմնաւոր ու անբան արարածներէ վեր կը վերցընէ ու հրեշտակներու նման կ'ընէ. բայց քանի որ մարդ մարմնոյ հետ կապուած է ու աշխարհքիս վրայ կ'ապրի՝ իր միտքն ու խորհուրդներն իրեն մեծ օգուտ չէին ըներ՝ թէ որ խօսելու կարողութիւն չունենար, որով կարող ըլլար ան խորհուրդներն ուրիշներու յայտնելով՝ բանաւոր արարածի մը վայելուչ ընկերական կեանք անցընել: Գարձեալ՝ ըսա Ս. Ակուինացոյն «Ղեզուն Բանին բուն բնական գործիքն է», ուստի եւ իրաւամբ կ'ըսուի՝ որ մարդ աշխարհքիս վրայ լեզուով կամ խօսելով կը խորհի, ու խօսքերը կարգով կանոնով զուցելով խորհիլ կը սորվի. ասոր համար պէտք է ըսել՝ որ խուլ ու մունչ մարդն իր բանն ու իմացողութիւնը չիկրնար կատարելագործել ու իր բանին կատարեալ գործածութեանը հասնիլ. ինչու որ չիկրնար խօսիլ: Արեմն թէ որ լեզուն կամ խօսիլը բանին օգնիչը, մտաց խորհուրդները յայտնելու մէկ հատիկ գործիքն ու անոր թարգմանն ու միջնորդն է՝ զինքն ուրիշ մտաց հաղորդելու համար, հարկ է ըսել որ ԵՄ-ԳՆ մարդուս երկրի վրայ ունենալու ժամանակաւոր երջանկութեան գլխաւոր պատճառներուն մէկն է, ու մարդն Աստուծոյ մասնաւոր

չնորհակալութիւն ընելու պարտական է՝ որ իրեն մտաց հետ մէկտեղ խօսելու կարողութիւն ալ տուաւ, որով մարդկային ընկերութեան հիմք կը դրուի, ու առանց որոյ մարդիկ ընկերական կեանք չէին կրնար վարել:

2. Աս ըսածնիս աստուածային Յայտնութիւնն՝ ըստ սուրբ Գրոց պատմութեան մեզի կը ցուցընէ, ու այս յայտնութենէն կրնանք հասկընալ՝ որ խօսելու կարողութիւնը մարդուն Աստուծմէ տրուած բնական ձիրք մըն է. անանկ որ՝ եթէ խօսելու ձիրքը մարդուն բնութեանը մէջ մասնաւորապէս հաստատուած նախնական կարողութիւն ու ձիրք չըլլար, մարդ ինք իրմէ՝ ոչ իր մտաց հանճարովն ու ոչ արտաքին հարկէն ստիպուած՝ խօսելու գիւտը, կամ իր լեզուն՝ ներքին խորհուրդներն եւ զգացմունքը յայտնելու համար գործածելու ճարտարութիւնը կրնար հնարել: Թէպէտ եւ ասիկա իրրեւ անժխտելի ճշմարտութիւն մըն է, սակայն լեզուի սկզբնաւորութեան կամ մարդկան խօսելու սկսելուն վրայ հեթանոսաց ու ետքէն հաւատացելոց մէջ այլեւայլ կարծիքներ եղան: Ոմանք կարծեցին՝ որ առաջին մարդիկ բոլորովին մունչ ծնած կամ ստեղծած ըլլալով, (Աստուծմէ բնականապէս խօսելու կարողութիւն առած չըլլալով,) քիչ մ'ատեն անասնոց պէս այրերու եւ անտառներու մէջ իրարմէ զատուած ու առանց ընկերակցութեան կամ ընկերական յարաբերութեանց կ'ապրէին, ու միայն աննշան եւ խառնակ ձայներ կը հանէին, մինչեւ որ վայրենի գիշատիչ անասուններու վախէն ու այլեւայլ ստիպիչ պատճառներէն եւ մանաւանդ իրարու փոփոխակի օգնելու հարկէն յորդորուելով իրարու հետ միացան եւ ընկերակցութեամբ ապրելու սկսան: Ասկից ետքը սկսան կամաց կամաց իրենց ձայնն աւելի որոշակի եղանակաւորելու եւ՝ իրր սովորութեամբ կամ դաշնադրութեամբ մը՝ որոշ ձայն մը իրր

իրենց աս ու ան գաղափարին՝ կամ աս ու ան արտաքին առարկայի մը որոշիչ նշան ընելով՝ լեզուն կամ խօսքը կազմելու :

3. Աս կարծիքն ունեցան հնոց մէջէն Գիոգորոս սիկեղացին ու Վիտորուվիոս, երկուքն ալ գրեթէ Քրիստոսի ծննդեան ժամանակները: Գիոգորոս սիկեղացւոյն խօսքերն ասոնք են¹. «Նախ եւ առաջ ծնած մարդկան համար կը յիշեն (մատենագիրք)՝ որ վայրենի ու անասնոց նման կեանք կը վարէին, իրարմէ զատուած ու ցրուած արածելու համար դուրս կ'ելլէին ու ամէն համեղ խոտն ու ինքնաբոյս ծառերու պտուղները կ'ուտէին: Ու տեսնելով՝ որ գիշատիչ կենդանիներէ կը հալածուին՝ իրարու փոփոխակի օգնելու սովորելով ու վարժելով ու անոնց վախէն իրարու հետ ընկերութեամբ ապրելու ստիպելով՝ կամաց կամաց իրենց համադրիներուն հետ աւելի սերտ ծանօթութիւն ընելու սկսան: Ի սկզբան միայն խոտն ու աննշան ձայներ կը հանէին, ետքէն կամաց կամաց բառերը յօդելով ու յարմարցընելով կ'արտաբերէին, ու նշաններով ամէն մէկ տեսնուած իրը ծանուցանելով՝ վերջապէս ամէն բանի վրայ խօսելու տեղեակ եղան:» Ասկից ետքը մարդկան լեզուոյն պլեւայլութիւնը ցուցընել ուղեւով ասանկ կը գրէ. «Բայց ընդհանուր երկրի վրայ սոսափսի մարդկան ժողովներ կամ ընկերութիւններ կազմուելով, ու անոնց ամէն մէկն՝ ինչպէս որ ըստ դիպաց կը յարմարէր՝ բառեր յօդելով, մէկը մէկալէն տարբեր խօսքով (լեզուով) կը վարէր: Եւ այս նախկին մարդկան ժողովքները կամ ժողովուրդներն ամէն ազգաց սկզբնաւորութիւն ըրին: . . . Սովորութիւնը մարդկան ամէն բանի մէջ ուսուցիչ եղաւ. ինչու որ ինքն այս հանճարեղ կենդանին ձեռուրներով, խօսքով

¹ Մատենագիրք. Պատմ. Գի. Ա. Հատ. Ը:

ու մտաց լրջութեամբն իբր միջնորդներով ամէն բանի վարժեցուց եւ ամենայն իրաց հմտութեամբը կրթեց:,,

4. Իսկ Վխորուվիտս հռոմայեցին ասանկ կը խօսի¹. «Մարդիկ՝ ըստ հին սովորութեան՝ անասնոց պէս անտառներու, այրերու ու ձորերու մէջ կը ծնանէին, ու դաշտերու վրայ կերակրելով կ'ապրէին: Երբ որ խիտ առ խիտ ծառեր եղած տեղ մը՝ ասոնք զօրաւոր հովէ ու փոթորկէ մը սաստիկ շարժելով ու իրենց ճիւղերն իրարու քսուելով ու զարնուելով՝ կրակ հանեցին, այն մարդիկն՝ որ հոն ներկայ էին՝ բոցին սաստկութենէ զարհուրելով սկսան փախչիլ հեռանալ: Բայց երբ որ բոցին սաստկութիւնն անցաւ, սկսան կամաց կամաց կրակին մօտենալ, ու տեսնելով՝ որ անիկա մարմնոց համար մեծ դիւրութիւն մըն է, սկսան տկարացած կրակին վրայ փայտ դնել. ու ետքէն անիկա ուրիշ մարդիկ ալ տեսնելով եկան հոն ժողուեցան, ու նշաններով իրարու կը ցուցնէին՝ թէ անկից ինչ օգուտներ կրնան գրանել: Աս մարդկան ժողովքին մէջ մէկուն ձայնը մէկալէն տարբեր բերնէն կ'ելլէր ու կը հնչէր. բայց ըստ հարկի երկայն ատեն իրարու հետ մէկտեղ մնալով՝ քանի մը բառեր կերպաւորեցան կազմուեցան. ետքէն աւելի գործածական իրերն անուանելով, աս դիպուածը սկիզբն եղաւ անոնց ըստ պատահման խօսելու, եւ ասանկով իրենց մէջ լեզուն (խօսիլն) հնարեցին:,,

5. Եւ կտանտիտս հեթանոսութենէ քրիստոնէութեան դարձած իմաստուն փիլիսոփան, չորրորդ դարուն սկիզբները, իրմէ առաջ ու իր ատենն ըլլող անհաւատ փիլիսոփաներուն՝ մարդկան նախնական հանգամանացն ու խօսելու սկսելուն վրայ ունեցած անդէպ կարծիքները ծաղրե-

¹ Ասան Ճարտարապետ. Գի. Բ. Հատ. 3-5:

լով ու զրելով յառաջ կը բերէ ու կ'ըսէ՝
 "Փիլիսոսփաներէն ո՞՞նչ կը գնեն՝ որ մարդիկ ի
 սկզբանէ երկրէն ծնած ըլլալով՝ անտառներու մէջ
 ու դաշտերու վրայ թափառական կեանք կ'անցը-
 նէին, ու իրարու հետ ամենեւին խօսելու կամ
 իրարանց կապով մը միացած չէին, այլ տեղե-
 ներն ու խոտը խուցերու տեղ ու լեռանց խո-
 սոյններն ու այրերը տունի տեղ ունէին, ուստի
 եւ դազաններու եւ զօրաւոր կենդանիներու աւար-
 եղան: Ապէն այն դազաններէն միտաւորուած-
 ները կամ վերաւորուելու մտա ըլլողներն իրենց
 վերահաս փոանցը տեսնելով՝ խելքերնին գլուխ-
 նին եկաւ, ուրիշ մարդիկներու քով փախան
 ապաստանեցան ու անոնց վերակացու թիւեր ինզրի-
 ցին, եւ նախ անոնց ակնարկութեանցը հնազան-
 զելու պատրաստական կամք ունենալն յայտնե-
 ցին. Ապէն խօսիլ սկսելու՝ կամ խօսելու սկզբունքն
 ընելու փորձն ըրին, ու ամեն մէկ իրի անուն
 դնելով կամաց կամաց խօսելու պայմանը կատա-
 բեցին, (իբր թէ լեզունին բացուեցաւ, խօսելու
 վարժեցան) . . . : Ա՛հ, մարդու անվայել հանձար-
 ներ, որոնք պատիտի անդէպ ու յիմարական ա-
 ռասպելներ հնարեցին . . . իբր թէ մարդիկ ոչ
 երբեք իրարու հետ պիտ'որ միարանէին (ընկե-
 բական կեանք վարէին) եւ ոչ խօսելու պայմանը
 պիտ'որ գտնէին, թէ որ անտառները զիրենք
 չցիշտակէին: Արդ այս ամենայն ուրիշ փիլիսո-
 սփաներու յիմարական բանդագուշանք ելին. Ա-
 լով, ինչպէս ալ իրք են, իրենք լսին՝ որ չէ թէ
 անտառոց յափշտակութիւնը պատճառ եղաւ մարդ-
 կան իրարու հետ ընկերանալու, հասցա մանաւանդ
 նոյն իսկ մարդկութիւնը, որով եւ իրարու հետ
 միարանեցան, որով հետեւ մարդուն բնութիւնն ա-
 ռանձնութենէ կը փախչի ու հարդրակցութիւն

¹ Համ Եստուածէ. Եսէման. Գլ. Զ. Ըստն Ելնա. Գլուխ. Գլ. Ժ.

և քնկերութիւնը կը փնտռէ: Քայց աս երկու կարծիքին մէջ մեծ տարբերութիւն մը չկայ. թէպէտ եւ երկուքին բերած պատճառներն այլ եւ այլ են, բայց իբր նոյն է . . . Ինչու որ չէ թէ ամէն դի երկրէն մարդիկ ծնան կամ դուրս ելան . . . , հասցա մի միայն մարդ Աստուծոյ կազմուեցաւ . . . : Աւստի եւ ո՛վ որ անխելք չէ նէ՛ կը տեսնէ ու կ'իմանայ՝ որ ի սկզբան անանկ ժողովք կամ բազմութիւն մարդկան չեղաւ, ու ո՛չ երբեք երկրիս վրայ անանկ մարդիկ եղան՝ որոնք տղայութեան հասակէն ետքը խօսելու կարող չըլլային:»,

6. Էթանոս փիլիսոփաներուն եւ մատենագիրներուն այսպիսի անդէպ կարծիքները յառաջ բերելէն ետքը կ'ըսենք՝ որ քրիստոնէական կրօնին երեւնալովը Յայտնութեան վրայ աւելի պայծառ լոյս տարածուելով, նոյն իսկ բնական լուսով ճանչցուելու ճշմարտութիւններուն աւելի եւս պայծառանալուն վրայ բնաւ չենք կրնար տարակուսիլ: Իսկ անկից առաջ՝ մանաւանդ հետեւնոսաց ու իրենց փիլիսոփաներուն համար պէտք է ըսենք՝ որ աս աստուածային Յայտնութեան լուսէն եւ ուրիշ միջոցներէն զուրկ ըլլալով՝ մարդկային ազգին նկատմամբ եղած շատ պատմական ճշմարտութեանց ծանօթութեանը չկրցան հասնիլ: Եւ եթէ անոնց մէջէն ոմանք աս նիւթիս վրայ քանի մը բանաւոր ու հաւանելի ենթադրութիւններ հնարեցին նէ՛ անոնք ալ իրենց՝ մարդկային բնութեան վրայ բրած խորունկ զննութիւններէն յառաջ եկան եւ ոչ թէ ստոյգ անցից ու իրաց տեղեկութենէն: Գիտորոսին կարծիքը՝ թէ մարդիկ գիշատիչ կենդանեաց վախէն ստիպելով՝ իսկ Վիարովիոսին կարծիքը՝ թէ յանկարծ բորբոքած կրակը տեսնելով՝ իրարու հետ քնկերացան ու անով խօսիլը հնարեցին, զուտ առասպելներ են: Ասոնք ասանկ երեւելի նիւթի մը մէջ ամենեւին

իրբև փկլիստոփայ շխարհեցան ու շլաակեցին, այն-
պիսի երևելի ու սքանչելի յասկութիւն մը որ
է լեզուն խոսելու համար գործածելն ու ան-
սածն եւ խնայածը խոսքով բացառելն ի բնէ
ի մարդն հաստատած համարելով, հապա այն-
պիսի շնչին ու երևակայական պատճառներէ յա-
ռաջ եկած կարծելով: Երկուքն ալ ինչպէս նաեւ
ամեն իրենց նմանները՝ թէ որ քիչ մը ժամա-
նակ ետքն ապրած ու աշխարհքին մէկ գին կերպ
կերպ գիտերուն ծաղկիլը անանելէն ետքը՝ Եւ-
րիկայի եւ ուրիշ նոր գանձած երկիրներուն
բնակչացը մէջ մտած ըլլային ու անմէկն որ ա-
մէնքն ալ իրենց յասուկ լեզուն ունին, յար-
դութեամբ կը խօսին ու ամէն բան կարգաւորեալ
խօսակցութեամբ կը յայտնեն, եւ սակայն փայ-
րենութեան ու անկրթութեան փնտրի մէջ գրա-
նուելով դեռ ոչ կրակին ու ոչ ուրիշ կենաց
կարեւոր գիտերուն անզեակ եղած են, ան ա-
սեն իրենց այն առասպելական կարծիքները մտքեր-
նէն ալ չէին անցըներ¹:

7. Ինչ եւ իցէ, հեթանոս փիլիսոփաներու
համար, ինչպէս են Գիոզորոս, Քիարուֆոս ու
նմանները, յայտնութեան ու քրիստոնէութեան
լուսէն զուրկ ըլլալուն՝ եւ բնական լուսին աչ-
դեցութեան ալ ըստ պատշաճի՝ Տրտեւելով՝
այսպիսի սխալ կարծիքներ ունենալին կըմար ան-

¹ Խաչերքուս հաստատութեան համար հոս մի փայտ սքանչ
յառաջ ընթերց: Երբ որ Մակեդոն Բարդուղայմէն Եւնիֆե
հարաւայթն սփիւմուսին մէջ Մարտիանոս (Գաղղոյ) կայմա-
րը գտաւ ձէ. անակաջ փայտնի բնակիչները զեւ կրակը
չէին անձնար, բայց իրենց յասուկ լեզուն ունին ու կը
խօսէին: Մակեդոն հոն հասած ամեն ասոց բնակարան-
ները կրակի տուաւ. երբ որ փայտնիներն ան զարհուրելի
անտարանն ու իրենց բնակարաններուն սցիկ մեկնի գա-
նալը տեսած ձէ՝ անկիւ ահալին բարձր մը Սուկարելով
իրենց լեզուովը Եղեց կը յայտնէին ու անկիւ զարհուրելով
կը փախչէին քանդով. որ շրջալ թէ փրկուց ալ իստեմն ու
փարաւէ: Ինչ աստիճանի փայտնութեան մէջ էին. եւ
սակայն կարգաւորեալ լեզու ունին ու կը խօսէին:

բասիր ըլլուիլ: Բայց քրիստոնեայ փիլիսոփայից
 ու քննողաց համար, ինչպէս են Ռիքարդ Սիմոն
 ու Ռոբրպրթըն անգղիացիին, աններելի յանդգնու-
 թիւն՝ մանաւանդ թէ մեծ մոլորութիւն է այս-
 պիսի կարծիքի մը հետեւիլը: Ասոնց մէջէն առա-
 ջինը՝ Ռիքարդ Սիմոն, տասնուեօթներորդ դարու
 մէջ մատենագիր մը, իր մէկ մատենին մէջ (ՔՆՆ-ի.
 Գ-Դ. 2-ի. Կ-Դ. Գ. Ժ. Գ. Ի- 2-ը.) չէ թէ
 միայն Գիոգորոսին ու Ախարուփիոսին կարծիքն
 ընդունելի կը սեպէ, հապա նաեւ կը ջանայ անի-
 կա Ս. Գրիգոր Նիւսացւոյն խօսքովը (Գ. Ի. Ը-Դ. Դ.
 Ե-Ն. Ժ. Բ.) հաստատել: Բայց աս մարդուն այս-
 պիսի անհիմն ու անվայելուչ կարծիքը Ս. Գրի-
 գոր չէ թէ միայն չի հաստատեր, հապա՝ ինչպէս
 իր գրուածքէն յայտնի կը տեսնուի՝ նոյն իսկ ան
 տեղն՝ ուր Սիմոն կը կարծէ թէ սուրբ վարդա-
 պետն իր աս կարծիքն ունի, ինչպէս նաեւ իր
 ուրիշ գրքերուն մէջ, անոր ներհակը յայտնա-
 պէս կը սորվեցընէ: Իսկ երկրորդն՝ որ է Ռոբ-
 րպրթըն՝ (Ը-Ն. Դ. Ի. Դ. Ե. Զ. Է. Ը. Թ. Կ. Ը.)
 աւելի երկիւղածութեամբ կը խօսի ու կ'ըսէ.
 "Իրաց բնութեան համեմատ միայն դատաստան
 ընելով ու Յայտնութիւնը շնկատելով, որն որ
 աւելի ապահով առաջնորդ է, մարդ կը ստիպի
 Գիոգորոսին ու Ախարուփիոսին կարծիքն ընդու-
 նիլ:", Բայց ասով Ռոբրպրթըն չի կրնար արդարա-
 նալ. Գիոգորոս ու Ախարուփիոս իբր հեթանոս
 կրնան կշտամբութենէ ազատ մնալ, ինչու որ
 ասոնք միայն բնական լոյսն իրենց առաջնորդ ու-
 նենալով՝ ասանկ երեւելի նիւթի մը մէջ անմը-
 տադիր գտնուած ու սխալած են ալ նէ, յայտնի
 է որ անոր հետեւութիւնները չեն իմացած: Սա-
 կայն անիմանալի բան մըն է որ մարդ մը՝ ինչ-
 պէս Ռոբրպրթըն՝ Յայտնութիւնն ընդունելէն ու
 անոր գլուխ ծռել յանձն առնելէն ետքը կարե-
 նայ ըսել թէ իրաց բնութիւնն ան յայտնութեան

Հակառակ սկիզբներ մեզի կ'ազդէ կամ կը ցուցնէ: Բանը կամ մարդկային բնական լոյսն ու Յայտնութիւնն երկու այլ եւ այլ միջնորդներ կամ ջրանցներ են՝ որոնք մի եւ նոյն ազդիւրէ բղխած ջուրը մեզի կը հասցընեն, ու միայն կը տարբերին անիկա մեզի հասցընելու եղանակին մէջ: Յայտնութիւնը մեզ բուն ազդեր աւելի մօտ կը տանի ու անոր աւելի մաքուր բղխումը մեզի կու տայ. իսկ բնական բանը (մարդուն անկմանէ ետքը) մեզ անկից աւելի հեռու կը բռնէ ու ան բղխումն աւելի տարբեր նիւթերով խառնած ընդունելու փասնդի մէջ կը դնէ. միայն թէ աս խառնուրդները միշտ կրնան զտուիլ ու մաքուր բղխումներէն զատուիլ ու դուրս ձգուիլ: Ասկից կը հետեւի որ բանին ճշմարիտ լոյսը չիկրնար շիտկէ շիտակ ու բոլորովին յայտնութեան լուսին հակառակ բլլալ, ուստի եւ լեզուաց սկզբան վրայ բանը յայտնութեան հակառակ կարծիք մը չիկրնար յառաջ բերել եւ ցուցընել: Աւրեմն ան մարդն որ բնական գործքերը մեկնելու համար Յայտնութեան հակառակ բլլող գրութիւն մը երեւակայելու կամ ընդունելու կը յանդգնի՝ ճշմարիտ օգուտ ու ստոյգ տեղեկութիւն մը չստանալէն ի զատ նաեւ յանդուգն հակառակորդ կը սեպուի ամենէն աւելի փաւերական վկայութեան մը՝ որն որ բանի մը ճշմարտութեան համար նոյն իսկ ինքն ամենայն ճշմարտութեանց հեղինակն Աստուած տուած է: Եւ ահա այսպիսի ենթադրութիւն մըն է ըսելն՝ որ մարդուն լեզուն կամ խօսիլն Աստուծմէ իրեն իր ստեղծման ատեն տրուած բնական ձիրք մը չէ, հապա մարդիկ ետքէն ի հարկէ ու ի պարագայից ստիպելով անիկա կամաց կամաց կերպաւորած են:

8. Ա երբ յիշուած երկու մատենագիրներէն ի զատ կան ուրիշ քանի մը Յայտնութեան Հետեւող փիլիսոփաներ, որոնք աս կարծիքին ըստ

նկատմանց ինչ պաշտպան եղան: Ինչպէս Մաւ-
պերտիոս կը գնէ՝ որ մարդկային ազգն ի սկզբան
առանց լեզուի էր, մինչեւ որ մարդիկ շատնա-
լով ու այլ եւ այլ ձիւղեր բաժնուելով կամաց
կամաց մասնաւոր բարբառներ գտան: Սոյնպէս
եւ Ռոտիէ գաղղիացին ու Մուրրէյ անգղիացին
եւ ուրիշ քանի մը քննիչներ այսպիսի կարծիք-
ներու շեղեցան: Յ. Յ. Ռուսոյ ու անկից ետքը
Վոլնէյ՝ անհաւատութեան զարնող բնապաշտ փի-
լիսոփաները՝ զմարդն իբրեւ Եպիկուրեանց ըսած
“Մունչ ու տգեղ անասունը” կը նկարագրեն.
ու Վոլնէյ կ'ըսէ. “Մարդն իբրեւ գիպուածով
մը վայրենի ու խառն ի խուռն երկրի մը վրայ
ձգուած, որրի մը պէս բոլորովին լքուելով այն
անձանօթ ձեռքէն՝ որն որ զինքը դուրս հանած
էր”, հարկ եղաւ որ ինք իրմէ ընկերական կենաց
առջի հիմնական սկզբունքը հնարէ գանէ: Ըսոր
ու նմաններուն կարծիքը՝ հին Եպիկուրեանց հա-
մեմատ՝ մարդկային լեզուին ի հարկէ ստիպուած
դուրս ելլելը, ու նախ եւ առաջ անասուններու
ձայնին պէս աննշան՝ անյօդ հնչիւններէ սկսելով
կազմուիլը ցուցնել կ'ուզէ: Ինչպէս ան Եպիկու-
րեանց մէկը՝ Վուկրեաիոս՝ իր հետեւեալ տողե-
րուն մէջ կը յայտնէ¹.

“Եթէ պէտպէս զգացմունք անասուններն կը ստիպեն
Որ նաեւ համբ ըլլալով՝ հանեն պէս պէս ձայն ներսէն,
Որչափ եւս իրաւ է որ մարդիկները կարենան
Չառ զառ ձայնով նշանել իրքն իրարու աննման:”

9. Ըս կարծիքին վրայ առանձինն ու երկայն
կը գրէ² վերը յիշուած Յ. Յ. Ռուսոյ, իր քննու-
թիւններուն հիմ գնելով՝ թէ մարդը վայրենու-
թեան վիճակի մէջ յառաջ եկած կամ ստեղ-
ծուած է. ու մարդիկ իրարու հետ ի սկզբան

¹ Գի. Ե. Տուն 1086:

² Խօսք վասն սկզբան եւ հիմանց անհաւատարութեան ի մէջ
մարդկան. Մասն Ը.

անդ ուրիշ կապակցութիւն կամ ընկերակցութիւն չունեցան՝ բայց միայն որն որ անբան կենդանեաց հետ ալ ունէին, այսինքն անտառներու մէջ իրարու մօտ բնակիլ առանց ընկերական կապի մը: Բայց յիրաւի նկատելու արժանի բան մըն է՝ թէ Ռուսոյ այսպիսի անարժան ու անվայել կարծիքէ մը ինչ հետեւութիւն կրցաւ հանել՝ մարդկային լեզուին կամ մարդուն խօսելուն սկիզբը գտնելու համար: Եր գրած սկզբան կամ հիման վրայ հաստատուն կենալով՝ ամէն կերպ մեկնութիւնները փնտռեց, ամէն տեսակ կարելի դժուարութիւնները յուզեց, ու ամէն դիպաց հազարաւոր հակառակութիւններու եւ ընդդիմութիւններու հանդիպելով, եւ ուրիշներուն աս կտորիս մէջ հնարած կարծիքներուն անտեղութիւնը տեսնելով ստիպեցաւ այս խնդիրն առանց լուծանելու թողուլ: Թերթերնուս անձկութիւնը մեզի չիներեր հոս իր աս կտորիս վրայ գրածներն երկայն խօսքերով յառաջ բերել. միայն ընթերցողներուն աս բանիս վրայ գաղափար մը տալու համար՝ իր խօսքերուն մէկ երկու փոքր հատուածը հոս դնելը: “Ես ալ շատերուն հետ կրնայի ըսել, կ’ըսէ, որ լեզուները՝ հարց մարց ու զուկրներուն ընտանեկան կենակցութեան մէջ ծնան (սկսան). բայց աս ըսելով՝ չէ թէ միայն առջեւնիս ելած ընդդիմութիւնները չէինք լուծեր, հապա նաև անոնց սխալմունքին մէջ կ’ընայինք՝ որոնք բնութեան կամ բնական վիճակին վրայ խօսիլ ուզելով՝ անոր մէջ անանկ գաղափարներ կը խօթեն՝ որոնք ընկերութենէ կամ ընկերական կեանքէն առնուած են, ու կ’ենթադրեն որ ընտանիք (գերգաստան) մը միշտ իրարու հետ մէկ տեղ ժողովուած մի եւ նոյն բնակարանի մէջ կ’ապրի, ու անոր ամէն անգամները կամ անձերն իրենց մէջ անանկ ներքին ու տեւողական միութիւն մը ունին, ինչպէս որ հիմայ մեր մէջը կայ,

ուր մեր իրարմէ ունենալու այլ եւ այլ շահերը մեզ իրարու հետ կը կապեն: Բայց եկ ու նայէ որ այն նախնական (ըստ Ռուսոյի՝ բնական վայրենական) վիճակի մէջ մարդիկ ոչ տուն, ոչ հիւղ ու բնաւ եւ ոչ մէկ սեպհական ստացուած ունենալով՝ ամէն մէկն ըստ գիպաց կը մնար ու կը նստէր՝ ուր որ կը հանդիպէր, եւ շատ հեղ միայն գիշեր մը, . . . եւ իրարու հետ կը միանային ինչպէս որ պատահումն առիթն ու փափագը կ'ազդէր, առանց հարկ մ'ըլլալու՝ որ խօսքը կամ լեզուն իրենց իրարու հասկըցընելու բաներուն թարգմանը կամ յայտնիչն ըլլայ: Ետքէն դարձեալ դիւրութեամբ իրար կը թողուին ու իրարմէ կը հեռանային: Իսկզբան մայրն իր զաւակներն իր կաթովը կը սնուցանէր իր շահուն համար, (այսինքն իր կաթին առատութենէ ներդուծիւն չքաշելու համար), ետքը սովորութիւնն ան զաւակներն իրեն սիրելի ընելով՝ ալ անկից ետեւ անոնց կաթ կու տար իրենց պիտոյիցը կամ սննդեանը համար: Երբ որ ասոնք քիչ մը մեծնալով իրենք իրենց արօտը գանելու շտապութիւն կը ստանային՝ կը փութային իրենց մայրը թողուլ. եւ որովհետեւ իրարմէ բաժնուելէն ետքն իրար նորէն գտնելու համար ուրիշ միջոց չունէին՝ բայց իրար աչքէ չկորսուցընելն՝ իրար աչքին առջեւն ունենալը, կամաց կամաց ան աստիճանի կը հասնէին՝ որ ալ իրար չէին ճանչնար, իրարմէ կ'օտարանային: Աս ալ պէտք է նկատել՝ որ տղան աւելի հարկաւորութիւն ունենալով իր կարօտութիւնները յայտնի ընելու, ուստի եւ իր մօրն աւելի շատ բան իմացընելու եւ ըսելու՝ քան թէ մայրն իր զաւակին, պէտք էր որ ինքն աւելի աշխատէր նոր գիւտեր ընելու, ու ան լեզուն՝ որն որ կը բանեցընէր՝ ըստ մեծագոյն մասին իր հնարքն ու գիւտն ըլլար. եւ ահա աս բանը լեզուաց թիւն այնչափ կը շատցընէ՝ որչափ որ խօ-

սող անձանց թիւը շատ է. որուն նաեւ կ'օգնէ իրենց վարած աստանդական ու թափառական կեանքն, որն որ ամենեւին բարբառի մը ատեն չիտար արմատանալու եւ հաստատութիւն գտնելու: Ասան զի թէ որ ըսուելու ըլլայ՝ թէ մայրը զաւկին կը սորվեցընէ կամ կը թելադրէ (բերանը կը դնէ) խօսքերն՝ իրմէ աս ու ան բանը խնդրելու համար, ասիկա կը ցուցընէ՝ թէ ֆինչպէս արդէն կերպաւորուած լեզուները կը սորվեցուին, բայց չիցուցընէր թէ ֆինչպէս պէտք է ան լեզուները կազմել:»

10. Ուսոյ պսպիսի եւ ուրիշ հնարքներէն մարդուն խօսելու սկսելուն՝ կամ մարդկային լեզուին սկզբնաւորութեան կերպին վրայ լոյս մը շտեմնելով, նաեւ յայտնութեան մեղի աս խաւարին մէջ բնական լուսոյն համեմատ ցուցըցած լուսաւոր ճամբուն մէջ մանելը յանձն շտեմնելով, աս անպտուղ աշխատանքէն ետք կեցաւ ասանկ ակամայ խոստովանութիւն մ'ընելով. «Ես (այսչափ զննութիւններուն մէջ) ետեւէ ետեւ առջեւ ելլող դժուարութիւններէն զարհուրելով, ու համոզուելով՝ որ գրեթէ ապացուցեալ անկարելութիւն մըն է՝ որ ֆինչերը զուտ ու միայն մարդկային միջոցներով ծնած ու հաստատուած ըլլան, աս դժուարին առեղծուածին լուծումն անոնց կը թողում՝ որոնք կը համարձակին անոր դրաղելու. այս ինքն թէ՛ որն աւելի հարկաւոր էր՝ արդէն միացեալ ընկերութիւն մը լեզուներուն կազմութեանը համար, չէ նէ արդէն գրտնուած լեզուներն ան ընկերութիւնը կազմելու եւ հաստատելու համար:» — Ասկից աւելի որոշ կերպով չէր կրնար մէկն այն անկարելութիւնը յայտնի ընել՝ որն որ մարդուն առջեւ կ'ելլէ լեզուաց սկզբնաւորութիւնն այն յիմարական ենթադրութենէ յառաջ բերելու ջանացած ատեն թէ «մարդ աշխարհքին սկզբանք ժամանակ վայ-

ըննի վիճակի մէջ էր, ինչպէս որ ամէն փիլիսոփայական (կարծուած) միջոցները բանեցընող Թուսոյ բրաւ: Երանի թէ իր փիլիսոփայական գննութիւններէն ու խորհրդածութիւններէն ընդունելի հետեւանք մը չի կրնալուն հանել՝ քայլ մ'ալ աւելի առաջ գացած ըլլար, ու յայտնապէս տեսնելէն ետքն որ «Ղեզուաց սկիզբը երբեք չի կրնար գտնուիլ՝ մարդը վայրենութեան վիճակի մէջ ստեղծուած ենթադրուելու ըլլայ նէ», իր այն անդէպ ենթադրութիւնը բողբոլփն մէկ դի ձգէր, ու անիկա՝ ինչպէս որ իրօք ալ է՝ ծածաղելի կեղծիք մը սեպէր:

11. Արդ մենք այսպիսի ենթադրութիւններն ու անհիմն կարծիքները մէկ դի թող տալով՝ հոս քանի մը հիմնական խորհրդածութիւններ ընենք: Ղեզու մը ուրիշ բան չէ՝ բայց եթէ աղդի մը (կրնանք ըսել նաեւ՝ ընդհանուր մարդկային ազգին կամ ընկերութեան) յատուկ եղած սովորութիւններուն բովանդակութիւնը՝ ամէն խորհուրդները կամ մտածութիւններն ու արտաքին նշաններով շերեւցած զգացմունքը յայտնի ընելու՝ բացատրելու համար: Աս բացատրութիւնը մէկ մարդուն ներքին մտածութիւնն ու զգացմունքը մէկալին հաղորդելու միջոց կամ միջնորդ մըն է: Ըստ այսմ ամէն լեզու յառաջունէ կազմուած ընկերութիւն մը կ'ենթադրէ, որն որ իրբեւ ընկերութիւն այսպիսի հաղորդակցութեան ու հաղորդելու միջնորդի մը կարօտութիւն ու հարկաւորութիւն ունենայ, ու որն որ այլ եւ այլ յաճախ կրկնուած գործողութիւններով այնպիսի սովորութիւններ հաստատած ըլլայ՝ որոնք իր լեզուին ամբողջութիւնը կը կազմեն կը կացուցանեն: Գարձեալ մեր ճանչցած մարդկային կարելի միջոցներով կազմուած ընկերութիւն մը հաղորդակցութեան միջոց մը յառաջագոյն կ'ենթադրէ, որպէս զի ընկերակիցներուն դէպ իրար ու-

նեցած պարտքերը կարենան յառաջունէ որոշուիլ ու հաստատուիլ, որ ետքն ալ նոյն պարտքերուն կատարումը մէկ անգամը կամ ընկերը մէկայէն պահանջելու իրաւունք ունենայ: Ասկից կը հետեւի որ եթէ մէկն ուղելու եւ ջանալու ըլլայ հաստատել՝ որ առաջին մարդկային լեզուն ու առաջին մարդկային ընկերութիւնը պարզ մարդկային հնարքներով հաստատուած են, պէտք է որ զնէ թէ աշխարհք ու ազգ մարդկան ի յաւիտենից էին, ուստի եւ այն ճշմարտութիւնը մերժէ՝ որ յատկապէս առաջին կամ նախաոր ընկերութիւն ու նախաոր լեզու մը կայ կամ եղած ըլլայ: Ինչ անհիմն կարծիք, որն որ իր մէջը հակասութիւն բովանդակելէն ի զատ՝ ուղիղ բանի ու անհամար վաւերական վկայութիւններու հակառակ կ'ելլէ, որոնք աշխարհքիս սկիզբը կամ ստեղծուիլը յայանապէս կը հաստատեն:

12. Հայտնի բան մըն է՝ որ եթէ մարդիկ հեղ մը առանց լեզուի կամ խօսելու ապրիլ սկսած ըլլան՝ անկից ետքն ո՛չ երբեք պիտ'որ կարենան խօսիլ: Երբ որ մարդ քանի մը լեզու գիտէ՝ անոնցմէ կրնայ ուրիշ լեզու մ'ալ հնարել հանել. բայց թէ որ ամենեւին լեզու մը չի գիտեր՝ ո՛չ երբեք լեզու մը պիտ'որ ունենայ ու գիտնայ, բայց եթէ ուրիշի մը խօսիլը լսելով անկից սորվի: Խօսելու միջնորդը (լեզուն) գործիք մըն է, որն որ պարապ ու անօգուտ կը մնայ՝ ցորչափականջին կամ լսելիքին տպաւորութենէ չիշարժիր ու չիգրգռիր: Արդէն յայտնի բան մըն է որ ի ծնէ մունչերուն լեզունին գործածել չկարենալնուն պատճառն իրենց բնական խլութիւնն է. եւ փորձով ալ տեսնուած է՝ որ մարդկային ընկերութենէ բոլորովին զատուած ու անտառներու մէջ պզտիկուց ի վեր առանց մարդկային խօսք մը լսելու կեանք անցընող մարդիկ չէին կրնար յօդաւոր ձայներ հանել կամ խօսք մը ուղիղ


արտարերել, հասպ միայն այն կենդանիներուն ձայնին իրենց ձայնը կը նմանցընէին՝ որոնց մօտ անտառներու մէջ ապրած էին, առանց ամենեւին մարդկային խօսքին նմանութիւն մը ցուցընելու. ու ետքն երբոր մարդկան մէջ մտան, մեծ գժուարութեամբ բուն մարդկային լեզուն՝ որն որ կը լսէին՝ սորվեցան, ան ալ շատ անկատար¹: Ասով յայտնի կ'ըլլայ՝ որ բոլորովին սխալ ու անհիմն կարծիք մըն է համարիլը՝ թէ մարդը զուտ բնական լեզու մ'ունի, ուստի եւ երկու երեք մարդ իրենք իրենց մնալով՝ առանց մարդկային խօսք մը լսելու՝ կրնան լեզու մը հանձարել ու խօսիլ:

13. Ազգիպատացիք իրենց լեզուն ամենէն հին լեզուն կը կարծէին, որովհետեւ՝ ինչպէս Հերոդոտոս կը պատմէ², զիրենք աշխարհքիս ամենէն հին ու առաջին ազգը կը համարէին: Բայց իրենց Փսամմեաիկոս թագաւորը (իր 656 տարի Քրիստոսէ առաջ) հնարք մը մտածեց աս կարծիքը սառնագելու համար: Երկու նորածին տղաք այժեբու հովուի մը յանձնեց, որ զիրենք ամէն մարդկային ընկերութենէ զատած՝ իր հովուականաց մէջ պահէ. բայց ամէն զգուշութիւնն ընելով

¹ Յամի 1661. Աթուանիոյի անտառներուն մէկուն մէջ երկու տղաք դանուեցան, որոնք կ'երեւար որ ինք տարեկան ու երկու տրեակ ըլլան, ու արջերու հետ ընկերակցութեամբ կ'ապրէին: Մեծ գժուարութեամբ անոնցմ մէկը բռնեցին ու թագաւորին բերին. եւ թիշ մը ետքը Քոզմանիոյի եպիսկոպոսը զինքը մկրտեց. Ահհայ թագուհին ալ իրեն կնքամայր եղաւ: Թեպէտ եւ աս տղուն լսելու ու խօսելու գործարանները մանաւանդ լեզուն ամենեւին պակասութիւն մը չունէին, բայց այնչափ տարի անսանոց մէջ բնակած ըլլալուն՝ ամենեւին մարդկային խօսք մը չէր արտարերել. ու պատմիչը կ'ըսէ՝ որ ետքն ալ չ'իրջայ խօսիլ սորովիլ:

Ար պատմուի նաեւ՝ որ Հնդկաստանի կամ Մզուլի թագաւորներուն մէկը՝ Մէլապոսին Ազգիպար (Ախպար) անունով տղայ մը երկար ասեմ ամէն մարդկային ընկերութենէ հեռու ու ամենեւին առանց մարդկային խօսք մը լսելու մնացանել տուաւ. ու երբ որ տարիներ անցնելն ետքը մարդկան մէջ մտաւ՝ ամենեւին բառ մը չէր կրնար արտարերել, ու մեծ գժուարութեամբ խօսիլ սորվեցաւ:

² Պատմ. Գիրք Բ. Համ. Բ.



որ մարդու ձայն կամ խօսք մը չլսեն, հասկա
 ինքն երբեմն երբեմն այծերն իրենց քովը տանի՝
 որ անոնցմէ կամ խմեն սնանին: Աս ասանկ ըրաւ
 Փսամմեաիկոս՝ որ տեսնէ իմանայ՝ թէ տղաք խօ-
 սելու տարիքնին հասած ատեննին ինչպիսի ձայն
 կը հանեն կամ խօսք կ'արտաբերեն: Երկու տարի
 անցնելէն ետքն՝ երբոր հովիւը հեղ մը ան տղոց
 կեցած տեղւոյն գուռը բացաւ ներս մտաւ նէ՝
 երկուքն ալ մէկէն ձեռքերնին իրեն տարածած
 սկսան կանչել Պէ+. անկից ետքն ալ երբ որ
 իրենց քովը կ'երթար, աս հնչիւնը կը հանէին.
 կամ թէ ըսենք՝ աս բառը կ'արտաբերէին: Հո-
 վիւն աս բանը թագաւորին ծանօցց, որ քննեց
 հարցուց՝ թէ որ ազգին լեզուին մէջ աս Պէ+
 բառը կայ. եւ գտաւ որ Փոխգացւոց լեզուին
 մէջ՝ Հ-ը կը նշանակէ. ուստի եւ՝ կ'ըսէ Հերո-
 դոտոս՝ Եգիպտացիք առանձինն աս գիպուածին
 պատճառով տեղի տուին ու հաւանեցան՝ որ Փոխ-
 գացիներն իրենցմէ հին են, իբր թէ Փոխ-
 գացւոց լեզուն մարդկան բուն ու առաջին լե-
 զուն է: Բայց ո՞վ շիտեսներ ու շիմանար որ ա-
 սիկա ոչ ուղիղ հետեւութիւն մըն էր, ու ոչ
 աս հնարքէն շիտակ ծանօթութիւն մը կրնար
 ելլել մարդկան առաջին կամ նախնական լե-
 զուին վրայ. ինչու որ այն տղոց արտաբերած կամ
 հանած ձայնը Պէ+՝ ուրիշ բան չէր բայց եթէ
 այծերու ձայնին նմանութիւն մը, որն որ ան
 տղաքը մինչեւ ան ատեն լսած էին, ուստի եւ
 լ-ը սորվելով՝ անիկա լեզուով կ'արտաբե-
 րէին, կամ աւելի աղէկ ըսեմ՝ ձայնով կը հըն-
 չեցընէին:

14. Այս ամէն ծանօթութիւնները յայտնի
 կը ցուցընեն՝ որ եթէ մարդ Աստուծակ իրեն բնա-
 կան հանգամանացը ու բանաւորութեանը համա-
 ձայն առանձին կարողութիւն առած չըլլար՝ իր
 ներքին խորհուրդներն ու զգացմունքն արտաքին

յօգաւոր ձայնով ու կանոնաւորեալ խօսքերով յայտնի ընելու, ուրիշ գրգիռ կամ հարկ մը զինքը չէր կրնար այն աստիճանի կամ վիճակի բերել՝ որ խօսելու գաղափարն ստանայ, լեզուն՝ մտաց խորհուրդներն ու սրտին զգացմունքը յայտնելու գործիք մ'ընէ: Եւ եթէ ասի կարելի բան ըլլար, կամ թէ մարդիկ այսպիսի ճամբով խօսելու սկսէին, պէտք էր որ երկրիս մէկ դին ըլլող մարդիկ տեսակ մը լեզու հնարէին, իսկ անոնցմէ հետո ու զատ ըլլող գիւերու մարդիկն ուրիշ լեզու մը հանէին, որով եւ որչափ ժողովք մարդկան կը գտնուէր՝ այնչափ ալ տարբեր լեզուներ գտնուէին. եւ ո՛ր կը մնար լեզուաց սկզբնական միութիւնն՝ որն որ դժուարաւ կրնայ մէկը հիմակ ուրանալ, մանաւանդ որ ըստ սուրբ Գրոց վկայութեան ինչպէս ընդհանուր մարդկային ազգին մէկ մարդէն սկսած ըլլալը՝ նոյնպէս ալ ամէն լեզուներուն ի սկզբան ան առաջին մարդուն խօսած մի միայն լեզուին ծնունդն ու ճիւղերն ըլլալը տարակուսի տակ չիկրնար իշնալ: —

15. Մինչեւ հիմակ ըսածնիս մեզի առաջնորդեցին ու մեզ բերին բուն հիմնական կերպով մարդկային լեզուին սկզբան կամ մարդուն խօսելու սկսելուն վրայ Յայտնութենէ դուրս հիման համեմատ կարեւոր տեսութիւններն ու խորհրդածութիւնները գրելու պայմանին: Մարդկային կրթութեան կամ յառաջադիմութեան երեւոյթներուն՝ այսինքն արտաքին գործքերուն ներքին ու հոգեկան կապակցութեան հարկաւորութիւնն ու անոր անմիջապէս ի սկզբան անդ (մարդուն ստեղծման ատեն) սկսած ըլլալը՝ ընդհանուր պատմութեան ճարտար կապակցութեամբ մը յառաջ բերած դիպուածներէն աւելի յայտնի ու պայծառ կը ցուցուի լեզուի ազդեցութենէն, որն որ ամէն մարդկային հաղորդակցու-

Թեան միջնորդն է: Աւստ միջնորդը կամ միջոցը մարդկային հնարքով գանուած՝ կամ մարդկեղէն գիւտ մը չէ, ինչպէս որ մարդկան իրարու հետ ընկերութեամբ ապրիլը կամ մարդկային ընկերական կեանքն ալ մարդկեղէն գիւտ չիկրնար համարուիլ: Աեզուին կամ խօսքին գոյութիւնն, ինչպէս ամէն կենդանական շարժմանց սկզբնական գոյութիւնն անմիջապէս բնութեան Արարչէն արուած բնական աուրք մըն է: Աեզուաց սքանչելի կազմութիւնը մարդկային միտքն իր բուրբ սրութեամբն ու ճարտարութեամբը չէր կրնար ինք իրմէ հանճարել կամ հնարագէտ ճամբով մը ստանալ: Արիշ արարածներուն կամ անբան կենդանիներուն վրայ իրենց բնութեան սեպհականութիւններն՝ ինչպէս մարդուն վրայ խօսիլը կամ լեզուն՝ իրենց բնական բերումը կամ ազդումը կրնուի. ու չիկրնար ուրացուիլ՝ որ կենդանեաց բնական գործբերուն՝ ինչպէս մեղուին ու սարդին (մամուկին) գործուածներուն մէջ ու այլ եւ այլ ազգաց լեզուին յորինուածոյն մէջ շատ նմանութիւն կայ: Աեզուն խորհրդածութեան պատշազատ գատման կամ ընտրութեան հետեւութիւն ու գործ չէ, հապա՛ ինչպէս մեղուներն իրենց փեթակն առանց արիշէ սորվելու գեղեցիկ կարգով ու գրեթէ մաթեմատիկական շարժանքութեամբ՝ տեղոյն ու իրենց բնութեանը համաձայն եւ ըստ ամենայն բնական պահանջմանց կը շինեն. ասանկ ալ մարդկային ազգը բնական հարկաւորութեան ու իր բնութեանը համեմատ լեզուն ամէն հիմնական ձեւերովն ու յարաբերութիւններովն կը յորինէ ու կը խօսի: Ամէն գրեխաւոր առանձին լեզու իր նախնական ու անխառն մաքրութեանը մէջ ըստ իր կերպարանացը կամ ձեւոյն արհեստական յորինուած մըն է. եւ այս յորինուածն արտադրող կամ կազմող անձինքն ոչ անոր օրէնքն ու կանոններն ուսմամբ սորված

ենն ու ոչ խորհրդածութեամբ ընտրած իրենց սեպհականաց են, հասցա առանց օրէնք մը մտածելու կամ գիտնալու բնական ազգամբ արտադրած են: Խօսքը՝ մարդկային լեզուին կազմութիւնն ու անոր մէջ ամէն մարդկային կենաց պատշաճ ըլլող յօրինուածութիւնը կամ կապակցութիւնը մարդուն սակզման առեն Աստուծմէ բնդունած խօսելու կարողութեան ներդրածութիւնն է:

16. Աս կտորիս վրայ գրող խմաստնոց մէջէն Կուիլ. Հումպոլտին խօսքերը յառաջ կը բերենք, որն որ ասանկ կ'ըսէ՝. «Վեզուն մարդկութեան խորքերէն յառաջ կու գայ, ու ոչ երբեք կը ներէ մեզի կարծել՝ որ անիկա ազգաց սեպհական մէկ գործը կամ յօրինուածն ըլլայ»: Ասանկ սկիզբ դնելէն ետքն՝ ուրիշ տեղ մը իր աս նիւթիս վրայ գրած խօսքերն ասանկ կը վերջացընէ. «Վեւի ընտրելի կը համարիմ անհասանական բան սեպել՝ որ լեզուաց ծագումը հոգւոյն նկատելու եւ ուրիշ բարձր կարողութիւններուն ծնունդն ու պատուին ըլլայ, ու ամէնքն ալ մեքենական միակերպ ընթացք մ'ունենան՝ որով քոյլ առ քոյլ պինդ կոպիտ ու անզարդ սկիզբէն մինչեւ իրենց վերջին կատարելութեան երթման հասնին. բան թէ անոնց կարծիքը մերթել՝ որոնք լեզուաց սկիզբն Աստուծոյ անմիջական յայանութենէն յառաջ եկած կը սեպեն: Ասոնք կ'ըսեն՝ որ գոնէ աստուածային կայծ մը նոյն իսկ պինդ անկատար ու անարդ բարբառներուն մէջ իր լոյսը կը շողացընէ»: Ասով յայանի կը ցուցընէ աս հմուտ լեզուագէտն ու քննիչն որ լեզուներն իրենց ծագումն ու յառաջացումը հոգւոյն անձանութ կամ գաղանի (ի սկզբանէ Արարչէն իրեն արուած) զօրութենէն կ'առնեն: Եւ ուրիշ տեղ մը յայանի խօսքերով կ'ըսէ. «Վեզուն պէտք է որ մարդուն

1 Ի Եստափոր. Գր. Ասան Գափ բարբառոյ:

իրբեւ բնածին (ձիրք մը) մտածուի. ինչու որ անհնարին բան մըն է՝ որ մարդ իր պարզ մտածութեամբը կամ իր իմացողութեանը ներգործութեամբն անիկա հնարէ:,, Սակայն աս ալ կը հասկըցընէ՝ որ լեզուն իրբեւ թէ ի մարդն հեղեալ գերբնական պարգեւ մը չէ, հապա իր բնական կարողութենէն յառաջ եկած բնական ձիրք մը՝ բնական՝ եւ ըստ գիտման Արարչին հարկաւոր ներգործութիւն մըն է:

17. Խօսելու կարողութիւնն ու լեզուն խօսելու համար գործածելը մարդուն բնութեանը մէջ ի բնէ գտնուելուն, Աստուծմէ իր ստեղծման ատենն իրեն տրուած մասնաւոր ձիրք մ'ըլլալուն, ու չէ թէ մարդիկ անիկա ի հարկէ ստիպուած գտնելուն կամ իրենց խորհրդածութեամբը հնարած ըլլալնուն վրայ զօրաւոր վկայութիւն մը կ'աւանդէ մեզի սուրբ Գիրքը, ուր նախաստեղծ մարդուն խօսելու սկսելուն առաջին յիշատակը կը գտնենք: Հոն՝ Ծննդոց գրքին (Գլ. Բ. 19—20.) մէջ ասանկ կը պատմուի. Աստուած ամէն անբան արարածներն ու դեռ միայն առաջին մարդն Ադամ ստեղծելէն ետքն եւ իր ընկերն Եւա ստեղծելէն առաջ՝ ամէն կենդանիներն Ադամայ առջեւը բերաւ՝ կամ անոր ցրցուց՝ որ անոնց անուններ դնէ: «Աժ զնոսա առ Ադամ տեսանել զինչ կոչեսցէ զնոսա . . . : Եւ կոչեաց Ադամ անուանս ամենայն անասնոց:», Ադամ ալ ամէն մէկուն՝ ի հարկէ իր Արարչէն առած բնական մտաց տեսութեանը կամ նկատմանը համեմատ՝ իրենց արտաքին կերպարանքին նայելով ու ձայններնուն եւ թերեւս շարժումներնուն միտ զնելով՝ յարմար անուններ դրաւ: Հնոց մէջէն աս բանիս վրայ մեր հին Քերականին մեկնիչը (Յովհաննէս Երզնկացի) ասանկ խորհրդածութիւն կ'ընէ. «Նախ Ադամ քերդելով (ըստ բնութեան յօրինելով) ետ անուանս ամենայն էից (անկեն-

դան եւ կենդանի էակաց) ըստ բնութեան տեսակին եւ ըստ բարուց, այս ինքն ոմանց ըստ իրին, ոմանց ըստ գործոյն, եւ ոմանց ըստ ձայնին:,, Նաեւ Արդան վարդապետ մեկնիչը՝ Ծննդոց գրքին աս գլխուն մեկնութեանը մէջ Ա. Եղիշէ վարդապետէն եւ ուրիշներէն առնելով կը ցուցընէ՝ որ Աստուած կենդանիները մարդուն առջեւը բերելով ու անոնց անուն դնել տալով, իբր թէ իրեն խօսելու՝ լեզուն գործածելու սկիզբ ընել տալով, ուզեց որ Ադամ իր բնական հանձարը յայտնէ. «Քանզի արար զնա, կ'ըսէ, բանաւոր եւ իմաստուն փշելով ի նա շնորհս», որով կ'ուզէ աս վարդապետը ցուցընել, ինչպէս իր՝ աս Տունին մեկնութեանը մէջ գրած խօսքերէն յայտնի կ'ըլլայ, թէ մարդուն բանականութեանն առանձին սեպհականութիւն մըն է խօսելու կարողութիւնն ու խօսիլը: Ասով յայտնի կ'երեւայ՝ որ դեռ աշխարհքիս վրայ մի միայն մարդ եղած ատեն՝ իրերն անուանելը, կամ մտաց ներքին խորհուրդներն ու գաղափարներն արտաքին կենդանի նշանով կամ լեզուով ու բառերով բացատրելը մարդուն իր կարողութեանցը համաձայն իր Արարչէն շնորհուեցաւ: Եւ ասիկա ոմանք ասանկ կը մեկնեն. որովհետեւ Աստուած (ինչպէս սուրբ Գրքին խօսելու եղանակէն յայտնի կ'ըլլայ) գրախօին մէջ Ադամայ մարմնաւոր տեսլեամբ կ'երեւար, ուստի եւ մարմնաւոր խօսքով իրեն հետ կը խօսէր, անոր միտքը զարթուց որ իր խօսելու կարողութիւնն ի գործ դնէ՝ բանեցընէ:

18. Արեմն խօսիլը մարդուն բնութեանը մէջ հաստատուած անանկ կարողութիւնն ու սեպհականութիւն մըն է՝ որ մարդ աշխարհքիս ամեն արարածներուն մէջ իբրեւ ամենէն գերագոյնն ըլլալով՝ այն յատկութենէն չէր կրնար բնազուրկ մնալ, անիկա իր բնութեանը գլխաւոր

սեպհականութիւններուն մէկը պէտք էր ըլլալ, ինչպէս ուտելը՝ խմելն ու քնանալը: Մանաւանդ որ, (ինչպէս Աստուծոյ խօսքն ալ կը ցուցնէ, որ՝ ըսաւ. «Ոչ է բարւոյք մարդոյդ հոն իննել»), մարդուն ընկերական ըլլալն իր ստեղծման ատեն իրեն բնութեանը մէջ սահմանուած ըլլալով, խօսող ըլլալը՝ լեզուն խօսելու ու անով խորհուրդները յայտնելու համար գործածելը վայրկեան մ'ալ իր վրայէն չէր կրնար պակսիլ. վասն զի ընկերութիւնն առանց խօսքի չիկրնար երեւակայուիլ: Ընկերութեան մէջ ապրելու սկսող մարդը պէտք է որ իր սկսելու ատենը խօսելու կարողութիւն ունենար՝ խօսէր: Եւ անիկա մարդուն իրրեւ բանաւոր արարածոյն՝ որ հոգիէ ու մարմինէ միացած էակ մըն է՝ բնական կատարելութեանը չէ թէ օգտակար հասցահարկաւոր էր: Եւ ամենարուեստ ու բարերար Արարիչն որ աս արարածը բանաւոր ու մտաւոր ստեղծեց՝ հարկաւորապէս իրեն խօսելու ձիրք ալ պէտք էր տալ՝ որ զինքը մտօք ճանչնայ ու լեզուով իր մեծութիւնը պատմէ: Ըստ այսմ մտաց Ս. Գրիգոր Լուսաւորիչ իր վարդապետական խօսքին մէջ՝ զեղեցիկ կարգով կը ցուցնէ՝ որ Աստուծոյ մարդուն,, Զկենդանական շունչն իմաստակիր մտաւորութեան բանաւորութեան ազգեցութեան,, փշած ատենը՝ գիտաւորութիւնն ու կամքն ան էր՝ որ մարդն իր բանաւորութեամբը կամ մտօքն իր արարիչը ճանչնալով՝ «Անդէն Աստուծոյ բարերարութեան արարչութեանն ընտանի եւ մերձաւոր գիտակ եւ ՊԱՏՄԻՉ լինիցի:», Ըսել կ'ուզէ՝ որ Աստուած մարդուն մտաց հետ խօսելու (պատմելու) կարողութիւն ալ տուաւ՝ որ չէ թէ միայն իր արարիչը մտօք ճանչնայ, հասցա լեզուով ալ անիկա գովէ ու իր սքանչել-

¹ Ծնունդը, Բ. 18.

² Առ Ագաթ. Պատմ. Հայ. Համ. ԻԳ. Էջ 203.

իւրը պատմէ: Երջանիկ Հօրերնուս աս խօսքէն կ'իմացուի՝ որ ինքը մարդուն խօսելու կարողութիւնն իր ստեղծման ասնն իրեն տրուած ըլլալուն վրայ ըստ պատմութեան սուրբ Գրոց բուրովին համոզեալ էր:

Յիրաւի Ծննդոց գրքին առջի գլուխներուն խօսքերն, ուր մարդուն՝ իբրեւ Աստուծոյ ամէն արարածներուն պսակին ու իր արարչին մէջ եղած ընտանեկան ու մտերիմ յարաբերութիւնն ու վարմունքը կը նշմարի, յայտնի վկայութիւն են՝ որ Աստուած մարդն իր ամենակալ ձեռքովն ու հրամանովը ստեղծելէն ետքն՝ անոր կարողութեանց գործադրութեանը՝ կատարելութեանը՝ ու իր բարձրագոյն կրթութեանն ամէն կերպով խնամ տարաւ: Եւ աօիկա կը հաստատուի խօսելու կարողութեան նկատմամբ՝ կենդանիներուն՝ ինչպէս նաեւ ուրիշ ամէն էակներուն անուն դնելու համար իրեն տուած իշխանութենէն: Աստուծոյ մարդուն համար աս կտորիս մէջ ունեցած խնամքին վրայ Մովսէսի սրբազան պատմութենէ գուրս՝ բայց անոր համեմատ եւ անոր հետ միաբան՝ նաեւ արտաքին ամենահին ազգաց գրքերն ալ, ինչպէս Հնդկաց Ալեգայ ըսուած ու Արեաց կամ Զանդիկ ազգին Զենդաւեստայ ըսուած նուիրական մատեանները ակզեկութիւններ կու տան: — Աւրեմն աս գլխուն վերջ տալով կ'ըսենք՝ որ Ազգուն ու խօսիլը մարդուն ստեղծմանը ասնն իրեն իբր բանաւոր արարածոյն ամէն ժամանակ կարեւոր ու սեպհական ձիրք ու կարողութիւն մը բարեբար արարչէն իր բնութեանը մէջ տրուելուցաւ ու հաստատուեցաւ:

ԳԼՃԻԽ Բ .

Մ-ԲԴԻ-ՅԻՆ Ե-Ի-ՆՆՈՐ Ե-Ն-ԻՆ Է-ՆԳ-Ն-ՆԻՆ :

1. ԽՈՍԻԼԸ բանաւոր մարդուն յատկութիւն կամ սեպհականութիւն ըլլալուն լեզուին գործածութիւնն՝ իրոյ խօսիլը ներքին ու արտաքին՝ հոգեկան ու մտքնական կամ գործիական է : Իրաց գաղափարներն՝ աչաց ու ականջաց եւ ուրիշ զգայարանաց միջնորդութեամբը՝ մտքին մէջ տպաւորուելէն ետքն արտաքին նշանով դուրս ելլելու համար արտաքին սրտաշաճ գործարանի կարօտ են, որն որ ներքին բնական տպաւորութեանց ազդեցութեանը հետեւելով՝ իր կանոնաւոր շարժմամբը մտաց ամէն խորհուրդներն ու զգայարանաց ներքին տպաւորութիւններն ըստ կարի անոնց համապատասխանող կամ զանոնք յայտնող բառեր կազմելով արտաբերէ, ու զանազան բառերու՝ ան մտաց խորհուրդներուն համաձայն կանոնաւոր կարգաւորութեամբը կատարեալ խօսք մը կազմէ : Արեւմն խօսիլը յառաջ մտքէն պիտ'որ սկսի. միտքն առարկաները պիտ'որ ըմբռնէ, հասկընայ, ծանշնայ ըստ արտաքին տպաւորութեանց, ու անոնք իրեն նման բանաւոր մարդու մը հաղորդելու համար ի բնէ իրեն սեպհական ըլլող գործիքը՝ միջոցը բանեցընէ : Չայնն աս բանիս հարկաւոր է, ու իրր թէ միջնորդ (օգին վրայ կրող, տանող) է. լեզուն ալ հնչումը կարգով կանոնով ու հարկաւոր գարձուածքներով լսեցընելու համար՝ այլեւայլ կանոնաւոր շարժուածքներ պիտ'որ ընէ, որ մտքին ըմբռնումները՝ գաղափարներն եւ ներքին զգացմունքն արտաբոստ շխտակ յայտնուին եւ ուրիշի հաղորդուին : Ասկից ինք իրմէ կը հետեւի որ լեզուն ու խօսիլը մարդուն բնութեան մէջ արարչէն անկուած բնական կարողութեան ներգործութիւնն է. բայց աս կարողութիւնն (ինչպէս ուրիշ ամէն բնական կա-

բողութիւնները՝ բնական զարթուցիչ բնական միջոց ալ ունի ներգործութեան ելլելու՝ իրօք ի գործ դրուելու համար։ Արդ խօսելու կարողութեան գործունեաց բլլալուն կամ գործելուն զարթուցիչն ու միջոցն է լսելիքն (ականջը)։ լսելով՝ կարողութիւնը պիտ'որ գրգռի՝ զարթնու՝ գործունեաց բլլայ, աստիճան աստիճան գործելու սկսի, ինչպէս վերը (ԳԼ. Ա. 12.) նշանակեցինք։

2. Վայց առաջին կամ նախաստեղծ մարդկան խօսիչ սկսելու կերպին վրայ վերը (ԳԼ. Ա. 17.) գրածներնէս ի զատ հոս աս ալ առանձինն կը ծանուցանենք՝ որ արարիչն առջի մարդը ստեղծած ատենն իրաց գաղափարները մտքին մէջ բնդունելու կարողութիւն տուաւ, ու երբ որ անոր ընկեր մ'ալ տուաւ նե՛ ի հարկէ իրեն մտքը լուսաորեց ու կամքին մէջ փափաղ մը անկեց իր ներքին իմացմունքն ու զգացմունքն այն իր ընկերին հաղորդելու։ Եւ Ադամ իր բնածին բերմամբն աս փափաղը կատարելու համար իր լեզուն գործածելու՝ ներքին մտքն ու կամքը խօսքով իր ընկերին ալ յայտնելու սկսաւ։ ինչպէս յառաջ քան զայն կենդանեաց անուն զնելու ատեն ըրած էր. այսինքն յօդաւոր հնչիւններ հանելով՝ ու լեզուն խօսելու համար գործածելով։ Եւ որովհետեւ առջի մարդուն ընկերն ալ նոյնպէս բնածին կարողութիւն ունէր՝ ամեն բան մտօք ըմբռնելու, հասկընալու, իր մտքին մէջ անոնց գաղափարները յարմարցընելու եւ արտաբուսաւ նոյները յայտնելու ու խօսքով բացատրելու. անոր համար երկու կողմանէ լեզուն բանեցընելով՝ իրենց մտաց խորհուրդները սկսան իրարու հաղորդել։ Աս նախաստեղծ մարդկան խօսած լեզուն եղաւ սկզբնական մարդկային ընդհանուր լեզուն, որն որ լեզուի մը հարկաւոր եղած կատարելութիւններն ունէր, եւ արիչ բան չէր բաց կեթէ՛ ինչպէս հիմակ ու ամեն ատեն է՝ մարդկային բնա-

կան գործողութիւն մը, խօսելու կարողութեան ներգործութիւնը:

3. Ըստ ամէն բանէն առաջ քննելու եւ հասկընալու բաներնիս աս նախաւոր կամ առաջին լեզուին հանգամանքն է, թէ ինչ աստիճանի կատարելութեամբ կը խօսուէր, եւ թէ ինչպէս իր ներքին կատարելութեանը համար հիմակուան խօսուած կամ գտնուած խառն լեզուներէն շատ տարբեր էր: Ասոր վրայ իմաստուն փիլիսոփան Փր. Շլէկէլ ասանկ կ'ըսէ՝. «Մեր հիմակուան զգայութիւններովն ու գործարաններովը չենք կրօնար ամենեւին առջի մարդուն խօսած լեզուին պինդ հեռու ըմբռնումը կամ գաղափարն ունենալ. ըստ ամենայնի այնպէս՝ ինչպէս որ չենք կրօնար ըմբռնել՝ թէ ինչպէս յաւիտենական հոգիները կամ հրեշտակներն երկինքին մեծատարած ընդարձակութեան մէջ իրենց խորհուրդները լուսոյ թեւերուն վրայ անմիջապէս իրարու կը հասցընեն ու կը հաղորդեն: . . . Բայց թէ որ աս անհասանելի բարձրութենէն դարձեալ մեզի ու առջի մարդուն՝ ինչպէս որ ասիկա իրօք էր՝ վար իջնալ կ'ուզենք, ու միտք կը դնենք այն ամենէն հին մարդկային գրաւոր յիշատակարանին (Ծննդոց գրքին) պարզ ու անզարդ պատմութեանն՝ որ կը հասկըցընէ՝ թէ ինչպէս Աստուած մարդկան լեզու կամ խօսիլ սորվեցուց . . . , կը տեսնենք՝ որ այն պատմութիւնը մարդկային բնական զգացմանց ամենեւին հակառակ չէ: . . . Այս պատմութիւնը խորունկ մտք ու իմացողութեամբ մտածելով՝ կը հասկընանք որ անով կը ցուցուի ու կը բացատրուի՝ թէ Աստուծմէ անմիջապէս մարդուն շնորհուած՝ հաղորդուած ու աւանդուած խօսքով՝ նոյն մարդն իրրեւ բոլոր բնութեան վրայ իշխող ու թաղաւոր՝ մանաւանդ թէ յատկապէս ամէն երկրաւոր արարածոց վրայ իրր Աստուծոյ փոխա-

¹ Փիլիսոփ. Լեզուի եւ Բանի:

նորդը դրուեցաւ . ինչպէս որ իրօք աս պատիւն ի սկզբան անդ իր ստեղծման ատեն իրեն համար սահմանուած էր : Արասցօք մարդ ըստ պատկերի մերում եւ ըստ նմանութեան, եւ իշխեսցէ . . . ամենայն երկրի¹ :»

4. Աս խօսքերը մարդկային նախաւոր լեզուին սկզբնական կատարելութիւնն ընդհանրապէս կը յայտնեն . որոնց համեմատ՝ Այխհօֆ գերմանացի երեւելի լեզուագէտը խորունկ քննութեամբ յառաջ երթալով ասանկ կը խօսի² . «Լեզուն կամաց կամաց յաջողած գիւտ մը, երկայն խորհրդածութիւններու պտուղ չէ, հապա հողւոյն ներքին ընդունակութիւնն է, ու անոր հետ մեկտեղ Ամենակալին կամօքն՝ որն որ ամէն էակն ի բարի վախճան ստեղծեց, դուրս ելաւ : Առանց աշխատելու լեզուին սկիզբը կամ ծագումը փնտրուելու՝ որն որ անիմանալի կամ անքննելի բան մըն է, ինչպէս հողիին մարմնոյն հետ միանալը, կրնանք այն կերպարանափոխութիւնները մասամբ իմն ճանչնալ, որն որ ատեն ատեն մարդկային լեզուն ունեցաւ, մինչեւ որ դարէ ի դար ետք երթալով՝ իր սկզբնական կերպարանքը կամ ձեւը մասամբ իմն իմանանք : . . . Մարդկային ազգին սկզբան կամ տղայութեան ատեն լեզուն՝ որ մտաց խորհրդին թարգմանն է՝ պէտք է որ պարզ ու ամէն մէկ բառը կարճ ու ազգու եղած ըլլայ . ան ատեն ամէն մէկ հնչիւնը մէյ մէկ պատկեր էր, ու ամէն մէկ պատկերն ամէն մէկ իրին երեւեցուցիչը : Ան ատեն միայն հիմնական հնչիւնները բառական էին մարդուն ամէն զգացմունքը յայտնելու . ինչու որ խօսելու գործարաններուն կատարելութիւնն ու իրենց արտաքոյ կարգի փափկութիւնն անտարակոյս աւելի փոփոխմունքներ ու կերպ կերպ դարձուածներ ընելու յարմարութիւն

¹ Ծնունդք, Ա. 26 :

² Համեմատու. լեզուաց Եւրոպ. եւ Հնդկ : Յառաջարան :

ու գիւրութիւն ունեին, որն որ դարե ի դար
 աւելի պակսեցաւ, ու հիմնոյ բոլորովին անհետ ե-
 գաւ: Չպնտար գրերն իրենց քաղցրահնչիւն
 (անուար) ելեւեջքին՝ կամ աստիճաններուն մէջ
 հագւոյն խորքէն բոխած ձայներ էին. իսկ հաս-
 առառուն ու աւելի յոգսորեալ կազմութիւն ու-
 նեցող բազմաձայններն ամեն մէկ խորունկ ապաւո-
 րութիւնը կը յայանէին, ու մի միայն դուրսու-
 քով կամ արտարերութիւնով մտքին խորհուրդը
 կը հաստատէին: Ասանկով ներքին ու անտարտի-
 սրինաց փոյլ հաստատուած միարանութիւն մը
 արտարին աշխարհքը հոգեկանին հետ կը կա-
 պակցէր, ու խտրով այս հոգեկան աշխարհքն
 արտարուստ կը յայանէր: Աս խտրն ի հարկե-
 պն զգացմանց նման էր՝ որոնցմէ յասաջ կու գար-
 հեղ ու մեղմ հնչիւնները՝ մեղմական զգացմունք-
 ները կը յայանէին, իսկ խիստ ու ազգու ձայնե-
 րը՝ ցաւագին ու տխուր կամ անտարտ զգաց-
 մունքները՝ ներքին շարժմունքները՝ խռովութիւն-
 ները կը ցուցնէին: Գեղեցկութիւնը, թեթեւու-
 թիւնը կամ գիւրութիւնն ու զորութիւնը՝ խտրե-
 րը (զգացմանց համեմատ) այլ եւ այլ կերպով
 շեշտելով ու հնչեցնելով՝ յարմար կ'ըլլային կը
 բացատրուէին. ու ամեն մէկ վանկը գրեթէ ե-
 րամ շատկան նշանախեց (ճոք — ձայնաւշան) մըն էր,
 որուն նշանակութիւնը հիմակ ալ պնշտի գարեք
 անցնելէն ետքն՝ երբեմն կը հասկընամք ու կ'ըմ-
 բրանենք: Բայց հիմակ որչափ որ ալ աշխատուի
 ու փորձեր բլուրին՝ անհնարին բան մըն է ցու-
 ցնելը հագւոյն բնութեան հետ ունեցած սա ա-
 մեն գաղձակաւորութիւններն, ու բացատրելի թե-
 ինչպէս ամեն իրաց ձեւը՝ շարժումն ու գոյնը
 շուտ մը բնութեանը ներքին զգայութիւնն այլ եւ
 այլ կերպով կը գրգռէր ու կը զարթուցանէր:
 Ար հասկընամք՝ որ ի սկզբան անդ լեզուին բա-
 սերը պէտք է որ քիչ ու ամէնքն ալ միաբանկ

եղած ըլլան՝, ու առ փանկերուն ամեն մէկ բա-
 րագրիչ մասը կամ տարրը՝ որն որ նշանուոր ա-
 սարկաց մը կը նշանակէր, այլ եւ այլ կապակ-
 ցութեան մէջ մտնելով ուրիշ շատ նման առար-
 կաներու փրայ գործածուելու սկսաւ, ու ասանք ալ
 դարձեալ ուրիշ նման իրաց հիմնական ձեւերուն
 կարմնութեանը կ'օգնէին. եւ ասանկ միշտ յառաջ
 երթալով՝ նոյն հնչիւնները զանազան իրարմ
 տարրեր իրերու հետ կը կապակցէին, որոնց
 սկզբնական ծագումը կամ ուսկից անձանցած ըլ-
 լաինին՝ ի սկզբան անդ յայտնի կար ալ նէ՝ ետ-
 քէն կամաց կամաց անհետ եղաւ: Այսպէս մարդ-
 կեղէն հոգւոյն՝ այլ եւ այլ իրերն իրարու հետ
 համեմատելու եւ նմանցընելու՝ ի բնէ ունեցած
 բերումն իրեն օգնեց՝ մտաց ընդարձակ ու ան-
 սահմանելի խորհարկները կապարտորուած խոս-
 քերու մէջ բախանդակելու, իրր ընդհանուր օրի-
 նաց ու կարգի հետեւելով, ըստ որոյ մասամբ իմն
 իրարու նման ու համեմատ իրերը հաստատ դա-
 սերու կը բաժնուին:՝

Ծ. Այս խօսքերուն համեմատ կ'ըսենք՝ որ աշ-
 խարհքին սկզբան մարդկային ազգն եւ մասնաւո-
 ըսպէս առաջին մարդն՝ որ «բոս ցառակերի եւ
 նմանութեան Աստուծոյ», ստեղծուած էր, ամեն
 իրերն իրենց էութեանն ու ներքին բնասրու-
 թեանը (նկարագրին) համաձայն, ամեն գործքերն
 իրենց պատճառին փրայ կամ իրենց պատճառով,
 ուստի եւ ամեն երեւոյթները ներքին կապակցու-
 թեան մը մէջ՝ Աստուծոյ նկատմանը համեմատ կը
 նկատէր ու կը տեսներ. (չէ թէ՛ ինչպէս որ մենք

՝ Եւսր համար է՝ որ մի եւ նոյն գլխուոր յեղէն՝ (ինչպէս
 Յարեթի յեղէն) եղած այլ եւ այլ ազգաց լեզուներուն
 ազգակցութիւնը քննելու ասան՝ ամեն մէկ բառին գլխուոր
 սրբնուոր զանելու կ'աշխատուի, որն որ գրեթէ միշտ միա-
 զանէ՝ ու ամեն համազգի լեզուաց մէջ գրեթէ նոյն է:
 Ասիկա ամեն լեզուաց մի եւ նոյն նախուոր լեզուն ծնած
 ըլլալուն ապացոյց է. ինչպէս թիշ մը ետքը պիտ'որ գրենը:

Տիմակ ամէն բան մեծ աշխատութեամբ համեմա-
 տելով, քննելով, գործքի մը սրտածառը փնտռե-
 լով ու երկու երեւոյթ իրարու հետ կապակցե-
 լով կը նկատենք ու կ'ըմբռնենք, ուստի եւ ամէն
 բան իբր թէ փորձառութեամբ կ'իմանանք ու կը
 հասկընանք): Այսպէս ալ պէտք էր որ նախաւոր
 լեզուն հոգեկան նկատմանց ու զգացմանց կեն-
 դանի բացատրութիւնն ըլլար, ու իբր աստուա-
 ծեղէն բարձրագոյն նկատման մէկ գրոշմը (նմա-
 նութիւնն) երեւար: Ըստ այսմ՝ միափանկ արմա-
 տական բառերու կամ բառից արմատներու (բու-
 ներու) շարժումը գումար մը բաւական էր՝ հիմնա-
 կան պարզ գաղափարները բացատրելու, որոնց
 մէջ ամէն ներքին ու արտաքին երեւոյթները (կա-
 բրելի դէպքերը) կը բովանդակէին: Քայց այսպիսի
 բառի բուն կամ արմատ մը մասնաւոր առարկա-
 ներու եւ երեւոյթներու վրայ պատշաճցուելու
 եւ ի կիր առնուելու ատեն իր վրայ շնչաւոր
 դիրքին յաւելուած մը աւելցընելով, աս կամ ան
 ձայնաւորն ու բաղաձայնն արտաբերութեան մէջ
 իրարու յաջորդելով կամ իրար փոխանակելով՝
 երբեմն նաեւ անոնք իրարու հետ կապակցելով՝
 կրնար շատ նշանակութիւններ ստանալ. որոնց ա-
 մենուն մէջ ալ չէ թէ միայն բառին արմատին
 հիմնական գաղափարն իբրեւ գլխաւոր կամ տի-
 բոզ կը պահուէր, հասցա իր վրայ եղած փոփո-
 խութիւններուն կենդանի նշանակութիւնը՝ մին-
 չեւ ցոյննդ վերջին կամ բարակ աստիճանը ճա-
 նաչելի կը մնար: Արդէն ըսելու հարկ չկայ՝ որ
 առաջին մարդկան խոսելու գործարանները շատ
 յաջողակ ու դիրքաթեք էին: Ամէն մէկ բառի
 բունն իր բաղմամբիւ ու դիրքաւ բաղմանալու ա-
 ծանցմունքներովը (ճիւղերովը) կենդանի ամբողջ
 (բովանդակութիւն) մը կը կազմէր, որուն ամէն
 առանձին մասանց նշանակութիւններն ու յարա-
 բերութիւնները հոգեկան պայծառ կապակցու-

Թեան մէջ կը գտնուէին. ուստի եւ ամենեւին հնչիւն մը առանց նշանակութեան ու պատահական չէր: Աս պայծառութենէ ու բացայայտութենէ ի զատ, որով ամէն մէկ բառ իր մէջը պարունակուած բարձրագոյն նկատումը (խմաստը) կը յայտնէր, առանց կարծեաց նաեւ ձեւաւոր խօսակցութեան կերպը կամ մանաւանդ պլարանութեամբ ու նմանարանութեամբ խօսելու օրէնքն աս նախաւոր լեզուին մէջ մտած էր, որուն միջնորդութեամբն իրարու նման ըմբռնումները կամ գաղափարներն իրր համեմատութեան կերպով իրաց բացատրութիւնը սաստկացրնելու համար իրարու տեղ կը գործածուին, կամ իրարու հետ կը փոխուին. ինչպէս հիմակ ալ աշխարհքիս ամէն լեզուներուն մէջ կը բանեցուի: Ուստի եւ անտարակոյս ան ատեններէն սկսուած էր քաջասրբօրին --է--ծ ըսել, ամուրին ու հաստատունին՝ երէ-նէ-յ, արամականին ու տխուրին՝ -է-, ը--է, հեզին ու անուշ բնութիւն ունեցողին՝ է--ն, ք--ք-է-ի, --չ--նէ, եւ այլն, ըսել: Ինչու որ նկատելը մարդուն միտքը համեմատութեան կը տանի, իսկ համեմատութիւնն պլափոխութեամբ ու պլարանութեամբ աղէկ՝ պայծառ ու զգայի կերպով կը բացատրուի:

Աս ու պսպիսի հանգամանքներով էր մարդկութեան նախաւոր լեզուն, ինչպէս որ խմաստուն քննիչք ան արմատէն ելող լեզուներուն քննութենէն ըստ կարի կրցան մակարեբել ու իմանալ. որուն վրայ աս մեր գրութեան մէջ վերը գրածներնէս աւելի քննութիւն ընելն ու տեղեկութիւն տալը պատշաճ չերեւար. գուցէ յաջորդ յոգուածներուն մէջ աս կտորիս վրայ քանի մը տեղեկութիւններ ալ կարենանք տալ:

ՄՐԻՆԻՆ ԼԵՂՈՒՆ ԻՆՏԵՆՍԻՎ ԴԻՍԿՆԻՆԸ:

1. ՄԻՆԵՆԻ Տիմայ մարդկային լեզուին վրայ գրածներնէս կրնար յայտնի իմացուիլ՝ որ աշխարհքիս սկզբան մարդուն խօսելու սկսած ատենը հարկաւորապէս մի միայն լեզու կար. նախաստեղծ մարդկան խօսած լեզուն իրենց զուկրներն ալ կը խօսէին ու աս լեզուն շատ ժամանակ անփոփոխ յառաջ կ'երթար: Ասիկա անտարակուսելի ճշմարտութիւն մըն է. բայց խօքերնուս ընթացքը կը պահանջէ՝ որ հոս մարդկային լեզուին սկզբնական միութեան վրայ քանի մը անդեկութիւններ տանք:

Օ՛ննդոց գրքին տասնումէկերորդ գլխուն (չ-ճ. 1.) մէջ Մովսէս իր ետքէն պատմելու երեւելի դիպուածներուն իրրեւ բնաբան ու յառաջաբան աս խօսքերը կը գրէ. «Աւ էր ամենայն երկիր լեզու մի եւ բարբառ մի ամենեցուն.» բոլոր երկրիս վրայ ամէն մարդիկ մէկ լեզու՝ մի եւ նոյն բարբառն ունէին¹: Նոյեան ընտանիքին ամէն անդամները մէկ հօր զուկրներն ըլլալով՝ իրր աւելորդ բան մը պէտք էր սեպուիլ մասնաւորապէս ծանուցանելն՝ որ աս ընտանիքին ամէն անձինքն ալ մի եւ նոյն լեզուն ունէին: Բայց եթէ ան գրքին նախընթաց տասներորդ գլխուն մէջ գրուածները մտադրութեամբ կարդալու ըլլանք, ուր Մովսէս կը պատմէ՝ որ ան մէկ ընտանիքէն եօթանասուն երկու ցեղք ելան, կրնանք ու պէտք ենք ըսել՝ որ որովհետեւ այն նուիրա-

¹ Թէպէտ եւ Մովսէսին աս խօսքերը առանձինն ջրհեղեղէն ետքի մարդկան համար է. բայց դիտուելու անկնիւրջ նոյնը ջրհեղեղէն առջի ատեններուն համար ալ աս հասարակ կ'իմանան, որովհետեւ՝ ինչպէս ետքը խօսքերնուս ընթացքին մէջ պիտ'որ գրենք՝ մարդկային սկզբնական լեզուին մինչեւ Նոյի ու ջրհեղեղի ատենն նոյն մտացած ըլլալուն վրայ գժուարու կրնայ տարակուսուիլ:

կան պատմութիւնը Մովսէս անանկ ատեն մը գրեց՝ երբ որ աշխարհքիս վրայ արդէն շատ ու պէս պէս լեզուներ կը խօսուէին, ու միանգամայն իր գրածներն ալ իրրեւ աշխարհքիս ընդհանուր ու վաւերական պատմութիւնը մինչեւ ետքի դարերու եւ ազգերու պիտ'որ հասնէին. անոր համար այն նշանաւոր ու հիմնական խօսքերն իրրեւ առաջնորդող եւ ուղեցոյց ան ասուածեղէն մատենին մէջ գրեց, որպէս զի ետքի ժամանակներու լեզուաց քննութիւններն եւ ազգաց ծանօթութիւնն ու պատմութիւնը հաստատուն ռանկոյի մ'ունենան, եւ պատմիչներն ու լեզուաց քննիչները խառն ի խառն ու միմապատ բաւիղներու մէջ իրենք զիրենք կառավարելու առ ձեռն պատրաստ միջոց մը գտնեն:

2. Մովսիսեան մատենին աս վճռական խօսքը Յայանութեան հետեւողներուն մտքէն մարդկային լեզուին միութեանը վրայ ամէն տարակոյսը հարկաւորապէս կը փարատէ, ու նոյն իսկ այն Յայանութենէ դուրս ալ բնական առողջ մտաց լոյսն ու առաջնորդութիւնն աս ճշմարտութիւնը դիւրաւ կը ցուցնէ: Եւ յիշուի գիտնոց մէջ առ հասարակ աս բանիս վրայ տարակոյս հանող դժուարաւ կրնայ գտնուիլ. նա եւ աս ալ ստոյգ է՝ որ աշխարհքիս վրայ ետքէն դուրս ելած պլ եւ պլ լեզուներու բազմութիւնն առողջ միտք ունեցողներուն ոչ ինչ կամ քիչ տարակոյս պատճառած է մարդկային լեզուին սկզբնական միութեան վրայ: ¹ Բայց զարմանալին ան է՝ որ գիտութեանց ծաղկելու սկսելէն ետքն ալ այնչափ դարեր անցած

¹ Մեզի մեծ զարմանք կը պատճառէ Յ. Քրիս. Առեւտուելին կարծելն՝ որ պլ եւ պլ լեզուները մարդիկ երկրիս պլ եւ պլ գիւրն իրենցմէ հնարած բլուն՝ իբր անկախ նախաւոր միակ լեզուէն. բայց իր խօսելու կերպէն կ'երեւայ՝ որ ինքն աս գրութիւնը չէ թէ իրրեւ իր քննութեանց պատճն. պլ երբ կարծիքական կամ անհաստատ գրութիւն (էփ-թեւ) մը կը գնէ:

են, ու լեզուագէտներն եւ լեզուաց քննիչներն իրենց քննութիւններուն մէջ երկու կամ երեք լեզուի իրարու հետ ունեցած նմանութիւնը տեսած ատեննին՝ այն գլխաւոր ու հիմնական խորհուրդը միտումնին չէին բերեր կամ չէին դիտել որ այդ նմանութիւնը կամ ազգակցութիւնը նոյն լեզուներուն մէկ արմատէն՝ մարդկային սկզբնական մի եւ միակ լեզուէն յառաջ եկած ըլլալուն նշանն ու ապացոյցն է: Անոր քննիչներուն ինչպէս նաև սուրբ Գրոց մեկնիչներուն գրեթէ ամէնքն ալ երկայն ատեն (կրնամ ըսել՝ մինչև անցած դարուն ետքերն) աս պարագային միտ չգնելով՝ երբ որ երկու գլխաւոր կամ մայր լեզուներու մէջ իրարու հետ նմանութիւն մը կը գտնէին, կը ջանային ցուցնել որ անոնցմէ մէկը մէկալէն ելած է. ինչու որ անանկ կը կարծէին թէ երկու լեզուի մէջ իրարու հետ նմանութիւն չիկրնար ըլլալ՝ բայց եթէ երբ որ մէկը մէկալէն ուղղակի (ուղիղ գծով) յառաջ եկած ըլլայ:

Աս ընթացքով այն հին քննիչները նախաւոր լեզուին միութիւնը անտարակոյս ընդունելէն ետքն՝ Աբրաքսեցւոց ու Քաղզէացւոց լեզուներուն մէջ նմանութիւն ու ազգակցութիւն գտնելով՝ մէկը մէկալէն ելած է կ'ըսէին, մանաւանդ Աբրաքսեցերէնին աւելի հաստատութեամբ այն առաջնութիւնը կու տային, միանգամայն անիկա մարդկային նախաւոր լեզուն կը գնէին. ոմանք ալ անիկա միայն սեմական լեզուներուն (արարերէնին, ասորերէնին, եւ այլն) մայր կը համարէին: Այսպիսի կարծիքներ հանողներ եղան նաև Պարսից ու Հնդկաց եւ Գերմանացւոց լեզուներուն նկատմամբ, անոնք իրարու եւ ուրիշ լեզուներու հետ բաղդատելով, ու անոնց նմանութենէն ոմանք հնդկերէնը պարսկերէնի ծնունդ ըլին, ոմանք պարսկերէնը՝ յունարէնէն լատիներէնէն

եւ Իտալիայի Հին լեզուներէն ելած կարծեցին . աւելի պարսկերէնի ու գերմաներէնի նմանութիւնը շատերուն պատճառ տուաւ անոնց մէկը մէկաբն ճայր սեպել : Գերմաներէնը յունարէնի ծնունդը բողոքներ ալ գտնուեցան : — Աս ամէն լեզուաց քննիչները կամ անոնց ծանօթութեան հետամուտ ըլլողները, Գաղղիացւոց՝ Անգղիացւոց՝ Գերմանացւոց եւ Իտալացւոց մէջ, ուրիշ արդիւնք կամ պտուղ մը չցուցուցին, բայց միայն իրենց ճանչցած լեզուներուն մէջ եղած Տէրունական աղօթքին կամ Հոյ Տէրին թարգմանութիւնները մէկտեղ ժողովել ու հրատարակել . անանկ որ մինչեւ անցած դարուն վերջերը 100 ու ալ աւելի լեզուաւ աս աղօթքին թարգմանութիւնները մէկ գրքի մէջ ժողովուած ու տպուած կը գտնուին : Բայց որովհետեւ այսպիսի ժողովածոյքներու հնդինակ ըլլողներուն գործքն ուրիշ բան չէր՝ բայց եթէ իրենցմէ առաջ հրատարակուած քաղուածոյքներն օրինակել՝ անոնց սխալներովը մէկտեղ, ու քանի մը լեզուներ ալ վրան աւելցրնել . անոր համար լեզուաց ներքին գիտնական հանգամանացը նկատմամբ ու անոնց նկարագիրն իմանալու համար ամենեւին օգուտ ու օգնութիւն մը չեղաւ ու չէր կրնար ըլլալ : Ինչու որ, ինչպէս յայտնի է, այսպիսի մէկ՝ իր մասնաւոր հանգամանացը պատճառաւ յատուկ ոճ ու պայման ունեցող կարծ աղօթքի մը թարգմանութիւնը շատ լեզուի մէջ բնական պէտք էր ըլլալ, ու չէր կրնար ամէն մէկ լեզուին յատկութեան վրայ գաղափար կամ փորձ մը տալ :

3. Տասնութեաներորդ դարուն սկիզբներն Եւրոպայի քանի մը գաւառներուն մէջ գասական հնագիտութեան ուսումը յարգ ստանալէն ետքը՝ Յ. Սկալիգէրին, Յ. Վիպսիոսին, Ի. Կալաւրոնին եւ նմաններուն աշխատասիրութիւնները շատերուն պատճառ տուին լեզուագիտութեան սահ-

քննութիւններով ու համեմատութեամբ, ուսկից ամէն բարբառներն իրարու մերձեցընելու կամ իրարու հետ կապակցելու համար ապահով պայմաններ ու կարգեր սահմանուէին, ու լեզուի փիլիսոփայութեան ամէն կերպ նկատութեանը (թէ որի) համար դրական հիմունքներ ցուցուէին:

4. Սոցց է որ անցած դարուն մէջ Լատինատիտ շէրվաս սոցանիացի յիսուսեան արեղան անձամբ ու իր ընկերակցաց օգնութեամբն աշխարհքիս զանազան կողմանց ազգերուն լեզուներէն օրինակներ ժողվելով՝ լեզուներն իրարու հետ համեմատելու եւ անոնցմէ հետեւանք մը հանելու ցանաց: Բայց աս մարդն աս գիտնական ծիւղին համար հարկաւոր ըլլող լեզուաց հմտութիւնը չունենալուն՝ այլ եւ այլ լեզուաց բառերու կամ քերականական փոփոխութեան մը նմանութիւն տեսած ատենն՝ երկու կամ երեք լեզուի իրարու հետ ազգակցութիւն ունենալը կը մակարերէր ու կը վճռէր: Շատ հեղ իրեն համար նշանագիր մ'ալ բաւական էր՝ մէկ լեզուի բառի մը մէկալ լեզուին բառին հետ (որոնց երկուքն ալ նոյն նշանագիրն ունէին,) նոյն ըլլալը սահմանել: Իր քննութեանցը կամ գրուածոցը մէջ բռնած ոճն անանկ ցրուած ու վերացեալ է ու ան քննութիւններէն հանած հետեւութիւններն անանկ բռնական են, (ինչպէս նշանագրի մը համար բերած օրինակներնէս յայտնի կ'ըլլայ,) որ լեզուաց ազգակցութիւնն ու սկզբնական միութիւնը գտնելու համար գրեթէ ոչ ինչ օգուտ կը մատակարարեն: Թէպէտ գիտունք կը խոստովանին՝ որ իր բազմաթիւ գրուածոցը մէջ ազգագրութեան համար քանի մը նիւթական նոր տեղեկութիւններ կը գտնուին, որոնք ուրիշ գրոց մէջ մինչեւ նոր ատեններս չէին գտնուեր:

Նոյն անցած դարուն վերջերը (1784) Կալկազայի մէջ Անգղիացւոց ձեռքով "Ասիական Ըն-

կերութիւնը, հաստատուելով՝ արեւելեան ու հա-
րաւային Ասիայի լեզուաց ծանօթութիւնն ու ա-
նով անանց հիմնական քննութիւնը տարածուելու
սկսաւ: որովհետեւ աս բնկերութիւնն ան կոչ-
մանց լեզուներուն ու բարբառներուն վրայ, որոնք
մինչեւ ան ասեմն եւրոպացւոց գրեթէ բոլորովն
անծանօթ էին, քերականութիւններ ու բառա-
գիրքեր գուրս հանեց: Ան ասեմնէն սկսուեցաւ
«Արեւելեան լեզուներ», բռնելով չէ թէ միայն սե-
մական բարբառներն իմանայ, հասցա նաեւ աւելի
ընդարձակ նշանակութեամբ ամեն ասիական լե-
զուներն՝ ինչպէս նաեւ Ափրիկէի ու Աֆիանիայի
մէկ մասին լեզուները բովանդակել: Հենաց (Չի-
նաց) լեզուն՝ որ առաջ անմատչելի կը կարծուէր՝
սկսաւ Գաղղիացւոց ջանքովք յայտնի բլլայ ու ծա-
նուցուիլ: Իսկ Ամուրքիտ լեզուն, որ հնդկացին-
գերմանական կամ հնդկացին-եւրոպական բառած
(յարեթեան) լեզուաց գլխաւորը կը համարուի,
Անգղիացւոց աշխատութեամբք սկսաւ մշակուիլ
ու անոր ծանօթութիւնը Հնդկաստանէն եւրոպայի
գիւմնոց մէջ մանել: որով լեզուաց քննութեան
եւ համեմատութեան նոր միջոցներ գուրս ելան:

¹ Ամուրքիտ կը նշանակէ Կոստանդնուք, ու շատ ճիշդ
գննութեանց հնդկացին-գերմանական կամ հնդկացին-եւ-
րոպական լեզուներուն ամենէն շինն ու հարուստն է: շատ
շին ասեմներ Հնդկաստանի մէջ կը բաներ, բայց հիմայ բո-
լորովն գաղթած է, միայն Հնդկաց բուրձներն ու գիտամեծերն
անիկա կը սորովն ու գիտեն: Արամեաններուն սրբազանն ու
չազանի կամ Խորհրդական լեզուն ասիական է, որով իրենց
Պեղաց բառած կրճական մասեանները գրուած են: Թե-
պեա եւ լեզուացեալք հիմակ աս Ամուրքիտ լեզուն ամեն
հնդկացին-եւրոպական լեզուներու մայր կը սեպեն: բայց
պեալք չէ պնայեա կարծել որ ասոնք անկից ելած են, հա-
պա՝ թէ անիկա արտադրչ կարգի հարստութիւնն ու կա-
տարելութիւնն մ'անեմալով՝ ամեն յեղակից լեզուներուն
տարբերքը մասնաւոր կերպով մը իր մէջ կը բովանդակէ:
Իր նշանաւորներուն (պարբերին) թիւք յիտան է, ու մինչեւ
քսան զանկէ միացած բազմաթիւք բառեր շատ ունի: Ան
նշանաւորները նոյն լեզուին մէջ Յեւեմալով կ'ըսուին, որ
կը նշանակէ Պէր տարածանց (գիշտովք): որովհետեւ շատ
կարգաւորեալ ու ժողկուշ են: լեզուին նկարագրին համե-

5. Վեղուաց քննութիւնը կամ Համեմատութիւնը քիչ մը աւելի գիտնական կերպով յառաջ անելու մէջ սկզբնական արդիւնք մը կրնայ սեպուիլ երկու գերմանացիներուն՝ Եւֆէ. Քրիստափ. Կաւելունկին ու Ե. Սեւեր. Գաղեսին «Մէթոֆիզիկ» (Մէթոֆիզիկ)՝ կամ Ընդհանուր Լոգոսոփոսոփան, անուամբ (1806—1817.) Հրատարակած ընդարձակ մատենանք, որուն մէջ առաջ Եսիայի այլ եւ այլ վեղուաց, ետքէն Եւրոպայի ու վերջն Եւրոպիկէի ու Ամերիկայի վեղուներուն յիշատակութիւնն ու Համեմատութիւնը կը անմուխ, որոնց փորձերուն Համար ըստ մեծի մասին Հոչ Բը ազօձքին 500 վեղուաւ թարգմանութիւնները գրուած են։ Ես գործն այ յիշումս՝ սեպի կատարեալ շեկրնար ըսուիլ։ բայց գիտնոց մէջ իբր ազգաց ու վեղուաց ծանօթութեան Համար օգտակար աշխատութիւն մը կը սեպուի։

Վեղուաց գիտնական ու Հիմնական քննութեան մէջ մեծ քայլ մը անուակցու առ դարուս սկիզբներն առաւելապէս երեւելի Պարր գերմանացիին ջանքովն, որն որ Սանդրիտ վեղուին ուսումը մշակելու եւ տարածելու մէջ առաջինն եղաւ, զա-

մաս, ու ճախեն զեղ ի աջ կը գրուին։ Իր գրականութիւնը կամ մատենագրութիւնը շատ հին է. Մէջ Քրիստոսակ Հարիւրուս ար գարեք առաջ շարադրուած գրքեր կան. մինչեւ քրիստոսակական կրօնին սկզբան ասեմները զեւ իր պայծասութեան մէջ էր ու կը ծաղկէր. ունեցած մատենաները՝ զհրատարար թանաքիտական, (սեռակ տեսակ թանաքիտական,) փիլիսոփայական, աշխարհագրական, պատմական, կրօնական եւ ուրիշ գիտնական նիւթերու փայլ են։ Իր Հարստութիւնն ու յարմարանքն կատարելութիւնն ու փայլելիութիւնն եւրոպայի գիտնոց, մանաւանդ Լնդգրացոց ու Փերսիանացոց, մեծապէս յարգու եղած է անոր Հետապնատութիւնն եւ ուսումը մշակելու։ Եւ մինչեւ հիմակ իր փայլն ու այլ յեղածութիւններ ու բառապիրքեր յարմարած ու Հրատարակուած են։

¹ Կաւելունկ իր բազմալեզուեան մատենին առ «Մէթոփիզիկ» անունը գրու է յիշատակ երեւելի Մէթոփիզիկ (Մէթոփիզիկ) Պանտափ թագաւորին, որ մեր Երեսուցեա թագաւորին փեսան էր, ու հոնց մէջ մէկ Հասիկ եղաւ, որ թանուերկու վեղու գիտեր ու կը խոսեր։

Նիկայ ուրիշ շատ լեզուներու հետ համեմատելով: Բայց իր աւելի մեծ արդիւնքն եղաւ՝ այլ եւ այլ (մանաւանդ հնդկացիներու-եւրոպական) լեզուներն իրարու հետ ճշգիւ ու գիտնական կերպով համեմատելու օրէնքը հիմնելն ու ցուցնելը: Աս ճիւղն աւելի եւս մշակեց հռչակաւոր լեզուագետը Կուիլ-Հումպոլտ, ու աս երկու իմաստնոց բրած սկզբնաւորութիւնն եւրոպացի գիտնոց մէջ աշխարհքիս բազմաթիւ լեզուաց գիտնական քննութիւնն ու համեմատութիւնն ուսման երեւելի մաս մ'ըրաւ:¹

6. Տարակոյս չկայ որ աշխարհքիս այնչափ բազմաթիւ եւ իրարմէ բոլորովին տարբեր լեզուները քննելն, իրարու հետ համեմատելն, իրենց ազգակցութեան ու նմանութեան գլխաւոր կէտերն ու սահմաններն որոշելը, ու անով ամենուն մէջ մէկ գլխաւոր արմատին հետքը գտնելով՝ մի միայն լեզուէն յաւաջ եկած ըլլալնին հասկնալը, ոչ քիչ ժամանակի ու ոչ վեր ի վերայ քննութեան գործ կրնար ըլլալ: Բայց հարկաւոր եղած քննութիւններն ըստ ամենայն ճշդութեան ու լեզուագիտութեան կանոնացը պահանջածին համեմատ յաւաջ տանելէն ետքն՝ անկից ելած հետեւանքն ու ստոյգ տեղեկութիւնները ամենուն

¹ Լեզուաց գիտնական քննութիւնն երկու կարգի կը բաժնուի, կամ երկու ճամբով կը յառաջանայ. Բոստօն կամ Նաւաթօն, ու Եւրօպայէն կամ արաբօն. որ կրնայ նաեւ Նի-թօն ու Կիւրօն ըսուիլ. առաջինը՝ լեզուաց բառերուն արմատը, ծագումն ու կազմութիւնը կը քննէ, կը համեմատէ ու կ'որոշէ. երկրորդը՝ քերականական հիմունքը, լծորդութիւնները, փոփոխումները, ձեւերն ու ասոնց համեմատութիւնը կը խուզէ ու կ'որոշէ. առաջինը լեզուաց ազգակցութիւնն անոնց բառերուն կազմութեանն ու յօրինումին եւ նմանութեանը մէջ կը փնտռէ, երկրորդը՝ անոնց քերականական ձեւերուն ու փոփոխմանց կերպերուն մէջ: Առաջին կերպ քննութեան ուսմանը մէջ ետքի ատեններս աւելի աշխատողներն եղան՝ Յ. Բլաբբրոթ, Մ. Երեան, Եւալուանկ, Ե. Պալպի, Յ. Համմեր, Փրիտ, Շլեկէլ, Եպէլ — Ռեմիզա, Կուիտտոֆ, Հումպոլտ, Վէնս Գլեննաթ, եւ այլն. իսկ երկրորդին մէջ Պորթ, Կուիլ-Հումպոլտ, Կուիլ, Ե. Շլեկէլ, եւ այլն:

միտքը կը համոզեն՝ որ մարդկային ազգին ամէն ցեղերուն մէջ խօսուած լեզուները մի միայն լեզուէն ծնած են: Աս տեղեկութեանց համեմատ ասանկ կը գրէ Աղեքս. Հումպոլտ. «Թեպէտ եւ քանի մը լեզուներ ի սկզբան անդ՝ կամ թէ որ շատ խորունկ շնկատուելու ըլլան՝ իրարմէ բոլորովին բաժնուած ու իրարու հետ ամենեւին չկապակցած կ'երևան. եւ իրացրնէ իրենց մէջ եղած մասնաւոր հանգամանքն ու յատկութիւններն արտաքոյ կարգի առանձնականութիւն մը կը ցուցնեն. սակայն ամէնքն ալ իրարու հետ նմանութիւն ու համեմատութիւն ունին. ու որչափ աւելի ազգաց փիլիսոփայական պատմութիւնն ու լեզուաց ուսումը կատարելագործութեան կը մօտենայ, այնչափ աւելի լեզուաց իրարու հետ ունեցած կերպ կերպ յարաբերութիւնները յայտնի կը տեսնուին»¹: Ահա ասիկ պսպիսի խորունկ եւ գիտնա-

¹ Հին լեզուաց չէ թէ միայն գիտնական քննութիւնն այլ եւ հիմնական ուսումը հիմակ Եւրոպոյի գիտնաց, մասնաւոր Անգղիացոց, Գաղղիացոց, Քերմանացոց ու Ռուսաց մէջ շատ կենդանութիւն ստացած է: Միայն յունարեւին, լատինեւին ու եբրայեցեւին ուսումը չենք իմանար, հապա նաեւ Եգիպտացոց հին լեզուին մէջ նազրոշմերու կամ խորհրդական նշանապրերու (հերոլիկ) ընթերցումը յաջողընելով ունոյն լեզուին ուսման համար քերականութիւն ալ յորինելով, այնպէս եւ քաղղեացեւին, փրինկեւին, ասորեւին, հին պարսկեւին, արարեւին, գրարար հայեւին, եւ այլն: Ըամբորդութիւններուն միջոցները հիմակ առջի մամանակներէն շատ աւելի պատրաստ ըլլալուն՝ գիտումը իրենց հայրենեացն ու անոնց հարուստ մասեւնագարաններուն ու թմանգարաններուն մէջ ձեռքերնուն տակը գտնուող հին լեզուաց յիշատակարաններովն ու թացորդներովը գոհ չըլլալով, երկայն ու դժուարին ճամբորդութիւններ կ'ընեն, այլ եւ այլ հին ազգաց յաջորդներուն մէջ կը մտնեն, ու անոնց պատմութեան հետ լեզուին ալ կը սորվին՝ որ այն հին լեզուաց քննութիւնն եւ ուսումը հիմնական կերպով ու յաջողութեամբ յառաջ տանելու կարող ըլլան: Աս վախճանաւ տերութեանց ու թաղաւորաց սգնութեամբը մեծ քաղաքներու մէջ ուսումնական ժողովներ ու ընկերութիւններ կը կազմուին. անանկ որ հին լեզուները սորվելու, քննելու եւ անոնց վրայ սուսոյգ տեղեկութիւններ եւ հմտութիւններ ստանալու ջանքն ու եռանդը՝ դարերնուս

կան քննութեանց աս դարուս մէջ ցուցրցած ար-
դիւնքն եղաւ յայտնեալ ճշմարտութիւն մը ներ-
կայ իրաց հանգամանքին ներքին ցոյցերովը գրե-
թէ ապացուցեալ ճշմարտութեան դարձընել, այս
ինքն հիմակուան բաղմամբ լեզուաց համեմա-
տութենէն մարդկային լեզուին սկզբնական միու-
թիւնը բացայայտ ցուցընել ու իրր անաարակու-
սելի ընել:

Իսկ այսչափ ստուգութիւն ստացուելու համար
հարկ եղած էր շատերուն՝ իրենց աս նիւթիս մէջ
բռնած ճամբան թողուլ կամ ունեցած կարծիք-
ներնէն ետք կենալ, ու նոր ծանօթութիւններուն
մատակարարած լոյսին մէջ իրենց ստոյգ կամ
դոնէ հասանելի կարծած գրութիւններուն սխալ
ըլլալը տեսնել: Ինչպէս, Եւրոպեացւոց լեզուն
մարդկային ազգին նախաւոր լեզուն ու քանի մը
ճանչցուած լեզուներու մայր կարծողներն՝ այլ եւ
այլ հետաւոր ազգերն օրէ օր աւելի ճանչնալով,
ու ասոնց լեզուներուն մէջ նոր նիւթեր ու դի-
տելու հանգամանքներ գտնելով, նաեւ ետեւէ
ետեւ նոր ու անջի լեզուներէն բոլորովին զատ
ու անկախ լեզուներ առջեւնին ելլելով, տեսան ու
հասկրցան՝ որ ճշմարտութիւնը կամ նոր ճանչ-
ցուած իրերուն հանգամանքը մովսիսեան պատ-
մութեան (մարդկային լեզուին միութեան) հետ

առաւելութիւններուն ու պարճանքներուն մէկը կրնայ
սեպուիլ: Քարափոր արձանապարտութիւնները, սեպանեւ
նշանապարտով իսկ փորուած արձանապարտը ու գրաւոր
հին (կես եզձեալ) յիշատակարանները գիտնոց առջեւ
հիմակ ամեն աստեղծութիւն աւելի մեծ յարգ ու արժեք
ունին: ուսկից մասնաւորապէս հին լեզուաց ուսումը յա-
ռաջ տանելու մեծ գրգիռ եւ քաջալերութիւն կը ստանան
ու սգնութիւն կը գտնեն: — Արմանք ու բախտութեամբ
բտել՝ որ մեր ազգին մէջ ալ փերջի տարիներս չէ թէ
միայն հին պարսկերէնին ու Սանսքրիտ լեզուին, եւ այլն,
այլ եւ Եզիպտացւոց հին խորհրդակամ կամ մեհենական
նշանապարտով յարիւսուած յիշատակարաններուն, ինչպէս
նաեւ սեպանեւ գրերով փորուած արձանապարտութիւննե-
րուն ուսմանը մտազիր ըլլողներ ու փոյթ տանողներ
երեւալու սկսած են:

միաբանելու գծուարութիւնները միշտ աւելի կը մեծցընէր: Անանկ որ վերը յիշուած Հերփասի նման քիչ մը խիստ խիզճ մտաց ունեցողները խորունկ լեզուագիտութեան մէջ յառաջ գացած շրջալնուն՝ կը կարծէին ու կը վախնային որ մարդկային լեզուին սկզբնական միութեան վրայ աստուածային յայանութենէ ըստ սուրբ Գրոց պատմութեան ծանուցուած ճշմարտութիւնը վտանգի մէջ իյնալու պէս կ'ըլլայ, ու կը համարէին որ աս բանիս մէջ որչափ աւելի խորունկ քննութիւններու կ'երթըցուի՝ ան վտանգն ալ այնչափ աւելի կը մեծնայ: Բայց, ինչպէս անուանի անդդիացին Աւայդմէն ալ կը ծանուցանէ, այնչափ բազմաթիւ լեզուաց խորունկ ու գիտնական քննութիւններն այն վախը շատուգելէն՝ այն վախցուած վտանգին անհիմն ըլլալը ցուցընելէն ի զատ՝ նոյն իսկ ճշմարտութեան՝ այս ինքն նախաւոր լեզուին միութեան աւելի եւս հաստատուելուն, պայծառանալուն ու իբր թէ ապացուցուելուն պատճառ կղան: Ասանկով, ինչպէս Ադրիան. Պալպի հռչակաւոր աշխարհագիրը կ'ըսէ, ամէն հմուտ լեզուագիտաց ջանքին հետեւանքը Յովսէսի գրոցը հետ (լեզուի միութեան վրայ) կը միաբանին: «Իրարմէ հեռու երկիրներու մէջ գանուող մարդկան լեզուաց զարմանալի այլեւայլութիւնը, կ'ըսէ աս իմաստունը՝, ու միանգամայն իրարու հետ ունեցած նմանութիւններնուն դրոշմներն այսօրուան օրս զմեզ կը պարտաւորեն աս ուսման՝ ինչպէս նաեւ ուրիշ ուսմանց մէջ՝ բնգունելութեամբ մեծարել այն հին յեղափոխութեանց հետքերն՝ որոնց երեւելի յիշատակը կամ պատմութիւնը սուրբ Գիրք մեզի կ'աւանդէ»:

7. Ասանկ քննութիւններով նոյն ճշմարտութիւնը կը հաստատեն ետքի ատեններս Սեւեր.

¹ «Ազգայրական Առլաս Երկրագնդոյ. կամ Գասաւորութիւն հին եւ նոր ազգաց ըստ լեզուաց նոցա»:

Ֆադեա, Յուլ. Քլարրոթ, Փրիտ. Շլէկէլ¹, Մէ-
րիան, Նիպուս, Աեփսիոս, Եունկ, Աւայզմէն եւ
ուրիշ շատ նորագոյն իմաստուն լեզուագէտներ
ու քննիչներ: Անանկ որ՝ ըստ սոցա՝ լեզուներուն
իրարու հետ ունեցած ազգակցութիւնն ու խնա-
մութիւնը գանելէն ետքն՝ ամենուն մի միոյն հա-
սարակաց արմատ ունենալը հարկաւոր հետեւու-
թիւն մըն է: «Աեզուաց ընդհանուր ազգակցու-
թիւնն ուրիշ կերպով շէնք կրնար բացատրել
կամ իմանալ, կ'ըսէ Քլարրոթ լեզուաց ազգակցու-
թեան վրայ գրած երևելի մատեանին մէջ², բայց
եթէ գնելով՝ որ հին ու նոր աշխարհքին ամէն
բարբառներուն մէջ մէկ նախաւոր լեզուի մնա-
ցորդները պահուած են», իսկ Փ. Շլէկէլ ասանկ
կ'ըսէ³. «Այլ եւ այլ լեզուաց ըստ երևութի
խառնակութիւնը (չ=ռ) մասնաւոր համացեղ
ազգատոհմերու մէջ կրնայ ժողովուրդ ու միա-
ցուիլ, որոնց մէջ անանկներ կան՝ որոնք թէպէտ
եւ երկրի վրայ իրարմէ անբաւ հետաւորութեամբ
դատուած են, սակայն բոլորովին ցեղակից ըլլալ-
նին յայտնապէս կը ցուցնեն . . . : Արով եւ այս
ամենայն լեզուաց այլ եւ այլ ազգատոհմերուն
իրր մէկ բունէ կամ արմատէ յառաջ եկած
ոտեր կամ ճիւղեր ըլլալը կը տեսնենք», —
Իեզրոպուրկի Վիտութեանց ձեւարման իր մէկ
իմաստուն անգամին՝ Ամս Աուխանֆին առաջնոր-
դութեամբն աս նիւթիս վրայ երկայն քննութիւն-
ներ ընելէն ետքը վճիտ տուաւ ու հրատարակեց՝
որ ամէն լեզուները մի եւ նոյն նախաւոր լեզուէն
ծնած են՝ որն որ հիմնոյ կորսուած է⁴: Աս առթիս
մէջ նոյն կոմսն ասանկ կը խօսի⁵. «Արովհետեւ
պատմական ժամանակներէն՝ կամ պատմութիւն

¹ Ասան լեզուի եւ իմաստութեան Հնգկաց. Գի. Ա. ԳԼ. 5.

² «Բազմալեզուեան Ասիա», Եւրասիական:

³ Փիլիսոփայութիւն Պատմութեան. Խոսք Բ:

⁴ «Հնգհամ. Տմանակ», Բաւթին Է. Հատ. Ա. Էջ 380:

⁵ Խոսք վասն հիմնական ուսման լեզուաց:

գրուելու սկսելէն յառաջ իրարու ետեւէ հանդիպած գեպքերուն յիշատակները դարեր անցնելով մտցուեցան ու կորսուեցան, անով ազգաց իրարու հետ ունեցած կապակցութեան կամ եղբայրակցութեան ստոյգ ապացոյցներն ալ անյայտ եղան: Աս ճշմարտութիւնն՝ որն որ մտածող մարդու մը համար շատ երեւելի գեպք մըն է, հին ու նոր լեզուաց իրարու հետ ունեցած մտաւորութեամբը (ցեղակցութեամբը) կատարելապէս կը հաստատուի, թէ որ ասոնք իրենց նախաւոր գրից մէջ մտածուելու ըլլան: Աւ թէ որ փիլիսոփայական նախապաշարում մը մարդկային ազգին սկիզբը չէ թէ մէկ՝ հապա շատ դնելու ըլլայ, լեզուաց (սկզբնական) նոյնութիւնն աս մտացածին կարծիքը ցրելու համար պատրաստական փաստ մըն է, ու աս փաստը պինդ նախապաշարեալ միտքն ալ կրնայ բժշկել ու համոզել: Աս իմաստուն մարդուն վերջի խօսքերուն միտքն աս է՝ որ աշխարհքիս այնչափ բազմաթիւ ու այլ եւ այլ լեզուները հիմամբ քննելով ու անոնց ազգակցութիւնն՝ որն որ մի միայն արմատէն այսինքն մարդկային նախաւոր միակ լեզուէն ելած ըլլալնուն ապացոյցն է՝ յայտնի տեսնելով, անկից Յայնուութեան հաստատութիւն մը կ'ըլլայ՝ թէ մարդկային ազգը մի միայն սկիզբէն՝ մի միայն մարդէն յառաջ եկած է, ինչպէս որ սուրբ Գիրք կը պատմէ:

8. Աս նիւթիս մէջ աւելի հաստատուն համոզում ստանալու համար մասնաւոր օրինակ մը յառաջ բերենք: Ատեն ատեն քաջասիրտ նաւապետներ հեռաւոր նաւագնացութիւններով յառաջ գացած ու Ամերիկայի եւ Արեւելեան Ասիայի մէջ տեղերը փայրենի բնակիչներով լեցուն կղզիներ գտած են, որոնք հաստատուն ցամաք երկիրէն հազարաւոր մղոններ հեռաւորութեամբ բաժնուած են: Աս փայրենի բնակչաց ունեցած ձկնորսի մակոյկները՝ փորուած ծառերու բուններ,

ուստի եւ ողորմելի ու տկար նաւակներ էին, որոնցմով գրեթէ անհնարին էր ցամաք երկրէն ելլել ան կղզիներուն վտայ գալ: Հապա աս մարդիկներն ուսկից ու ինտօր հոս եկան: Հին անհաւատ փիլիսոփայք՝ (որոնց ցնորական շաղփաղփութեանը ձայնակիցներն որ դարերու նիւթապաշտից կամ անուանեալ փիլիսոփայից մէջ ալ կը գանուին,) շուտ մը կը պատասխանեն՝ իրենց ցնորիցը յաղթանակները գտածի պէս. «Ասիական ապացոյց մըն է՝ թէ ինչպէս որ ամէն բան երկրի սկզբնական կաւէն կամ զանդուածէն ինք իրմէ կազմուած գուրս ելաւ, որուն համար երեւակայեալ արարչի մը ամենեւին հարկաւորութիւն չկայ, այսպէս ալ աս երկրածին մարդիկ, որոնք հինները հասարակարար բնութեան ամէն դի երկրին բերրի հողէն կամ կաւէն սողեցան գուրս ելան», Եփեմազելի շաղփաղփանք: Թեպէտ եւ նոյն իսկ հաստատուն ու խորունկ բնախօսութիւնը միայն մարդուն կազմածը կամ յօրինուածութիւնը նկատելով աս անձունի ու յիմարական բանդագուշանքը գարշելով կը մերժէ, ու Յայտնութեան համաձայն՝ մի միայն մարդու ամենազօր Արարչին ձեռքովն ի հողոյ ստեղծուելով՝ անկից հոգի եւ շունչ կենդանի ընդունիլը կը հաստատէ: Սակայն աս կտորիս մէջ նոյն Յայտնութեան ուրիշ դիպց մը՝ մեր մինչեւ հիմայ գրածներուն համեմատ՝ հաստատութիւն ու զօրաւոր ապացոյց մը կը գանենք. այսինքն՝ ցուցրնելով որ այն՝ ընդարձակ Աֆլիանոսին մէջ հաստատուն ցամաքէն շատ հեռու՝ կղզիներուն վտայ ըլլող վայրենի բնակիչները չէ թէ երկրածին կամ ցամաքի բնակիչներէն օտար մարդիկ, հապա անոնց ազգակից ու ցեղակից եւ անոնցմէ զատուած ու հեռացած են: Ասոր ապացոյցն աս է՝ որ այն վայրենի կամ՝ աւելի շիտակ

խօսելով՝ վայրենացեալ մարդկան լեզուն եւ տոհմային զրոյցքները քաջ լեզուագէտներն ու բանասէրներն օրէ օր աւելի քննելով ու համեմատութեամբ հետազօտելով, այնպիսի զարմանալի նմանութիւն ու ազգակցութիւն մը կը գտնեն անոնցմէ այնչափ հեռու ըլլող ցամաք երկրին թէ մէկ ու թէ մէկալ մասին, այսինքն Ամերիկայի ու Ասիայի՝ Ափրիկէի ու Աւրոպայի այլ եւ այլ լեզուացն ու տոհմային զրոյցքներուն հետ՝ որ անոնց մէկ հասարակաց սկիզբ ունենալն ու մէկ արմատէ յառաջ եկած ըլլալը պինդ դժուարահաւան մարդուն միտքին մէջ ամենեւին տարակուսի տեղ չի թողուր. եւ աս նմանութիւնն ու ազգակցութիւնն անանկ որոշ, ճիշդ ու բացայայտ է որ, կ'ըսէ Փրիտ. Շէկէլ¹, ոչ որ կրնայ անիկա ըստ դիպաց եւ ըստ պատահման յարմարած բան մը սեպել: Այսպէս ըստ հաստատունն ու ճիշդ քննութեան եւ որոշման հիմակուան ամէն հմուտ բնագէտ՝ լեզուագէտ ու հնագէտ քննչաց ու պատմագրաց՝ աս կղզիաբնակ ու ցամաքաբնակ մարդկան լեզուներուն՝ տոհմային զրոյցքներուն ու ցեղիցն ազգակցութիւնն ու մի եւ նոյն սկիզբէ կամ արմատէ ըլլալը հեղ մը հաստատութեամբ ցուցուելէն ետքը, ալ հարկ չկայ եւ ոչ կը պահանջուի քննել ու գտնել թէ այն կղզիներուն վայրենացեալ բնակչացն առաջին տոհմը կամ ցեղն երբ, ինչպէս ու ինչ ճամբով ընդհանուր ցամաքի բնակիչներէն բաժնուած ու այն հեռաւոր կղզեաց վրայ հասած է. եւ աս պարագան բուն իրաց հանգամանքն ու ճշմարտութիւնն ամենեւին չի կրնար եղծել կամ տկարացընել:

¹ Փիլիսոփայութիւն պատմութեան. Իտալ. Ա.:

Գ/Մ/Ի/Խ Գ.

Մ-ԲԳԻ-ՅԻՆ ԼԵՆ-ԻՆ Ի--Ն-Ի--ԲԻ--ՆՆ -- յԼ Ի- յԼ ԼԵ-
 Ն--ՆԵՐ-- Բ--Ն--ԻԼ:

1. ՀԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ, սրբազան պատմութիւնն, առողջ փիլիսոփայութիւնն ու նոյն իսկ դարե ի դար դուրս ելլող ու ճանչցուող բազմաթիւ լեզուներուն ու բարբառներուն հիմնական քննութիւնը միաբան կը վկայեն՝ որ մարդկան լեզուն ի սկզբան մի միայն էր, որն որ Ազամէն սկսեալ ամէն մարդ իր ծնողացմէ սորվելով՝ խօսելու տարիքին հասած ատենը կը խօսէր, անով մարդկային ընկերութիւնը յառաջ կ'երթար¹: Բայց

¹ Ետքի ատեններու անուանի գիտնոց մէջն Փր. Շէկէլ փիլիսոփան՝ մարդուն անկմանէն ու մեզանչէլէն անմիջապէս ետքն ունեցած վիճակին վրայ խորհրդածութիւն ընելով ասանկ կը խօսի. (Փէլէ--Է. Պ--Գ. Խ--Բ) «Մարդուն գիտակցութեան ու կենացը մէջ ներքին երկպառակութիւն մտնելուն ու հաստատուելուն եւ անոր որ ըստ օրէ յառաջ երթալուն առաջին հետեւանքն եղաւ մէկ մարդկային սեռին բազմաթիւ ազգերու բաժնուիլն ու անոր հետ սերտ կապակցութիւն ունեցող լեզուաց պլեպպութիւնը: Ետջափ որ հոգւոյն ներքին զաշնակաւարութիւնը դեռ չէր շփոթած ու քայքայուած ու անով մտաց լոյսը չէր ազօտացած, լեզուն ալ ուրիշ բան չէր կրնար բլալ: Բայց եթէ ներքին պայծառութեան պարզ ու զեզեցիկ բացատրութիւնն, ուստի եւ մի միայն լեզու կրնար բլալ: Բայց Աստուծմէ մարդուն արուած ներքին բանը մթննալէն ու աստուածային (սրանչէլի) կապակցութիւնը կորսուելէն ետքը, պէտք էր որ արտաքին լեզուն ալ անկարգութեան ու շփոթութեան մէջ իյնայ: . . . Ասանկով ծագեցաւ այն իրարու անհասկանալի լեզուաց բազմութիւնը, որոնք նաեւ ետքէն ըստ օգարածնից իրարմ կը հեռանային ու կը զանազանէին՝ որչափ աւելի մարդկային ազգը բարոյապէս մաս մաս կ'ըլլար, ու տեղով եւ բնակութեամբ կը բաժնուէր ու կը ջրուէր. . . .: Մենք աս խորունկ խօսքերուն վրայ խորհրդածութիւն ընելով հարկ կը համարինք բնէ, որ աս իմաստուն բանասէրն՝ որն որ ազգաց ինչպէս նաեւ լեզուաց բուն բաժանումն ըստ սուրբ Գրոց՝ Բարեկոնի խառնակութեան ատենը հանդիպած բլալն անտարակոյս ամենայն ուղղափառութեամբ եւ ուղղամասութեամբ կ'ընդունի, իր պայտիսի խորունկ նկատութեամբ զբան խօսքերովն ուրիշ բան չիմանար՝ բայց աս միայն՝ որ սկզբնական մեզօք մարդուն հոգւոյն կարգութիւնները տկարանալէն ու մտացը մարդուր լոյսը մթն-

մարդիկ շատնալէն ու կամաց կամաց աշխարհ-
քիս վրայ տարածուելէն ետքը նոյն մի միայն
լեզուն շինաց, հապա զանազան լեզուներ ելան:
Հոս նախ առաջին մեր առջելը խնդիր մը կ'ելլէ՝
թէ այն առաջին միակ լեզուն որչափ ատեն ու
մինչեւ ցերբ նոյն ու անփոփոխ մնաց: Արդեօք
մինչեւ նոյի ու ջրհեղեղի ատեն մի եւ նոյն լե-
զուն տեւեց մնաց, թէ աս ատեններ արդէն
սկսած էր զանազան լեզուներու բաժնուիլ: Հնոց՝
ինչպէս նաեւ նորոց մէջէն ալ ոմանք կը կարծեն
ու կը դնեն՝ որ արդէն նոյի ժամանակները նոյն
առաջին լեզուն շատ փոփոխութիւններ կրած՝
այնչափ այլայլած էր՝ որ գրեթէ նոր լեզու մը
ելած, կամ նաեւ այլ եւ այլ լեզուներու բաժ-
նուած էր. ուստի եւ նոյին լեզուն ալ Ադամայ
լեզուէն տարբեր էր: Բայց ուրիշներն ընդունե-
լով՝ որ Ադամայ ստեղծմանէն մինչեւ նոյ կամ
ջրհեղեղի ատեններն իրր 1656 տարի անցած ըլ-
լալով՝ այն նախաւոր լեզուն փոփոխուած ու՝ բար-
բերնին ապականած մարդկան մէջ՝ շատ այլայլու-
թիւններ կրած աւրուած էր, սակայն իրրեւ ստոյգ
պէտք է դնել, կ'ըսեն, որ բարեպաշտ ու հայ-
րենի աւանդութեանց նախանձախնդիր նոյին ու
իր ընտանեացը մէջ Ադամայ լեզուն անխառն մնա-

նալէն ետքը, ինչպէս իր ամեն մտաւոր ու մարմնաւոր
զործողութեանց մէջ անկատարութիւն ու անկարգութիւն
մտաւ, այսպէս ալ իր լեզուին կամ խօսքին առաջին կա-
տարելութիւնն եւ ուղղութիւնը կորսուեցաւ. ուստի շփո-
թեալ մտաց աէր ըլլող մարդիկ՝ այսինքն Ադամ՝ Եւս ու
իրենց յաջորդներն անիկա այնպիսի կատարելութեամբ
ու կարգով չէին կրնար բանեցընել, ինչպէս որ անմեղու-
թեամբ ու շիանդարուած վիճակի մէջ պիտ'որ բանեցընէին:
Ես ասանկ ըլլալով՝ մարդիկ որչափ աւելի կը բազմանային
կը սփռէին ու որչափ աւելի բարբերնին կ'աւրուէր ու
կ'ապականէր, լեզուներնուն մէջ ալ այնչափ աւելի ան-
կարգութիւնն ու պակասութիւնները կ'աւելնային: Կար-
ծենք որ աս իմաստուն փիլիսոսփան իր խորհրդածութեամբ
ըն մարդկային լեզուին այս կերպ շփոթուիլը կ'իմանայ,
եւ ոչ թէ սկզբնական մեղաց պատճառաւ մէկ լեզուին
իրարմ բոլորովին տարբեր լեզուներու բաժնուիլը:

ցած էր: Աս երկու կարծիքին նայելով՝ Նոյի կամ ջրհեղեղի ատեն մարդկան խօսած լեզուն մէկ չէր կրնար սեպուիլ, հապա իբրև այլ և այլ լեզուներու բաժնուած էր, ու նախաւոր լեզուն գուցէ միայն Նոյեանց մէջ կենդանի ու գրեթէ անարատ մնացած էր:

2. Աս կարծիքներուն վրայ ինչչափ որ խնայելով դատաստան ընել ուղեւում ըլլանք՝ պէտք է որ ըսենք՝ թէ ամենեւին ոչ ապացուցական և ոչ ալ հաւանականաբար իրենց օգնող պատճառի կամ վկայութեան մը վրայ հիմնած են, հապա միայն կամայական մակարեքութիւններ ու ենթադրութիւններ են: Արդ այսպիսի կարծիքներն ու են-

¹ Թէպէտ ևւ ըստ հասարակ ժամանակագրութեան՝ Ազամայ ստեղծմանն մինչև ցՆոյ 1056 տարի անցած էր, ու Նոյին կենացը վեցհարիւրերորդ տարին ջրհեղեղն եղաւ, ուստի ևւ Ազամն մինչև ցջրհեղեղ իբր 1656 տարի անցած ըլլալով՝ գրեթէ անհարթն բան մը կ'երեւայ մի ևւ նոյն լեզուին անկորուստ կամ գտնել անփոփոխ մնալը: Բայց թէ որ Ազամն մինչև ցՆոյ կամ ջրհեղեղն ըլլող նահապետներուն կենաց երկայնութեանը միա գնելու ըլլանք, որոնց ամեն մէկն՝ ըստ պատմելոյ սուրբ Գրոց՝ ինք հարիւր ու ալ աւելի տարի կ'ապրէր, չէ թէ միայն գրժուարին կամ մանաւանդ անհարթն բան չենք սեպեր նոյն լեզուին անկորուստ ու անփոփոխ մնալը, հապա շատ զիւրին ու բնական բան մը կը համարինք: Ինչու որ սուրբ Գրքին պատմութենէ կը հասկընանք՝ որ Նոյ կրնար լսել ու անտարակոյս լսած է նոյն նախաւոր լեզուն այն նահապետին (Մաղաղիէին) բերնէն, որն որ անիկա Ազամն բերնէն լսած էր, որովհետև Մաղաղիէլ նահապետն՝ որն որ Ազամայ թոռանայն կամ թոռան թոռն էր, անոր (Ազամայ) մեռած ատենն արդէն հարիւր երեսուցուհինգ տարեկան էր, ուստի ևւ այսչափ տարի Ազամայ հետ ապրած ըլլալով՝ ի հարկէ անոր հետ նոյն լեզուով խօսած էր: Եւ որովհետև աւ Մաղաղիէլ ու թհարիւր իննսուուհինգ տարի ապրեցաւ, անոր համար Նոյ որ աւ նահապետին մեռնելէն քսանեւութ տարի յառաջ ծնած էր, պէտք է որ նոյն առաջին լեզուն անոր բերնէն լսած ու ինքն ալ անիկա խօսած ու իր որդւոցն ալ սորվեցուցած ըլլայ, ևւ ստանք մինչև ջրհեղեղի ատենն ու անկից ետքն ալ նոյն լեզուով վարած ըլլան: Ըստ այսմ կը տեսնենք՝ որ ամենեւին գժուարութիւն մը չկայ մինչև ջրհեղեղի ատեններն Ազամայ լեզուին կենդանի մնալուն ևւ մինչև Բաբելոնի լեզուաց խառնակութեան ժամանակը գործածութեան մը ըլլալուն: Տես Երմեոյց Գրքին Ե. ԳԼ:

Թաղրութիւնները մէկ դի թող տալով ու բուն
 իրաց հանգամանքը զննելու գալով կը հարցը-
 նենք, ինչպէս եղաւ՝ որ ան մէկ հատիկ լեզուն
 շատ ու պէս պէս լեզուներու բաժնուեցաւ. ա-
 նանկ որ այլ եւ այլ լեզուներու՝ նոյն իսկ գը-
 խաւոր ու մայր լեզուներու ալ իրարու հետ ու-
 նեցած նմանութիւնն ու ազգակցութիւնը մեծ
 դժուարութեամբ ու երկայն եւ խորունկ քննու-
 թեամբ հազիւ յայտնի կ'ըլլայ: Աս բանիս հասա-
 րակ ճամբով կամ բնական ընթացքով ասանկ
 ըլլալուն անհնարութիւնը՝ հիմամբ մտածող ու
 իմաստուն մտաց յայտնի կ'երեւայ: Մարդ որչափ
 խորունկ մտածէ՝ հիմակուան աշխարհքիս լեզուաց
 այլեւայլութիւնն ու բազմութիւնն առեղծուածի
 պէս ու անըմբռնելի բան մը կը թուի: Այս այլ-
 եւայլութիւնն երկրիս վրայ մարդկան շատնալովն
 ու այլ եւ այլ ժողովուրդներ կազմելով իրարմէ
 կամաց կամաց բաժնուելէն ու հեռանալէն յա-
 ռաջ եկած շիկրնար համարուիլ: Նաեւ օգարա-
 փիններուն (կլիմաներուն), երկիրներուն ու ամէն
 մէկ ցեղին հանգամանացն ու բարբին այլեւայլու-
 թիւնն աս բանիս պատճառ չենք կրնար դնել.
 Ինչու որ կը տեսնենք՝ թէ տեղ տեղ այլ եւ այլ
 ժողովուրդներ իրարու մօտ կը բնակին, որոնք
 նաեւ մի եւ նոյն ցեղէ յառաջ եկած են եւ
 գրեթէ մի եւ նոյն կրթութիւնն ունին եւ սա-
 կայն տարբեր լեզուներ կը խօսին: Ար տեսնենք՝
 որ մի եւ նոյն մեծ կղզւոյ մը վրայ, աշխարհքիս
 մի եւ նոյն կողման մէջ շատ ժողովուրդներ կը
 գանուին՝ որոնց ամէնն ալ իրարմէ տարբեր լե-
 զուներ ունին: Աւրեմն չենք կրնար ըսել, որ մարդ-
 կան՝ նոյն երեք որդւոցը (Սեմին, Բամին, Յա-
 բեթին) համեմատ՝ երեք մեծ ցեղեր բաժնուե-
 լով՝ իրարմէ օրէ օր զատուիլն ու հեռանալն ինք
 իրմէ ըստ հասարակ ընթացից բնութեան լե-
 զուաց բաժնուելուն ու շատնալուն պատճառ ե-

դատ: Ամեն փիլիսոփայական խոյզերէն ու մակա-
բերութիւններէն ալ աս կտորիս մէջ բաւական
օգնութիւն մը շնոր կրնար գտնել՝ աս առեղ-
ծուածը լուծելու համար, կ'ըսէ Հեռաէր գեր-
մանացի փիլիսոփան, հապա հարկ է որ ըսենք,
թէ «իրական դէպք մը պատահած ըլլայ, որ
մարդկան գլխար շփոթեց, որով լեզուներու շփո-
թութիւնն ու պլեւայլութիւնն ելաւ»,¹ Երևելի
գաղղիացի լեզուագէտն Ապէլ-Քեմիզա, որն որ
ասիական լեզուներուն մանաւանդ ճենաց լեզուին
վրայ շատ խորունկ ու իմաստուն զննութիւններ
ըրած է, յայտնապէս կը ցուցնէ², որ պլ եւ
պլ Ժողովրդոց լեզուներն իրենց պատմութեանը
համար առաջնորդ ու կանոն են՝ մինչև իրենց
սկիզբն երթալու գտնելու համար, ուր լեզուներ
բաժանուին ու շփոթութիւնը գտնելը կարելի
պիտ'որ ըլլար. բայց մինչև հիմակ աս բանիս
մէջ եղած ամեն աշխատութիւնն ու փորձերը պա-
րապ ու անպտուղ եղան:

3. Աս կտորիս վրայ աւելի հիմնական կերպով
կը գրէ իմաստուն կարգինալը Աւայզմէն³. «Մեր
յառաջ բերած պարզ պատմական ստորադրու-
թեանց սկզբնական երևույթները, կ'ըսէ, աւելի
վախ քան թէ վստահութիւն պատճառելու պէս
կ'երևային՝ որ հիմնական մեր գիտութիւնը կամ
հմտութիւնը սուրբ Գրոց աննշածին բոլորովին
հակառակ հետեւանքներ հանէ: Բայց աս գիտու-
թիւնը յառաջ երթալով՝ պլ եւ պլ լեզուաց
մէջ աւելի եւս ազգակցութիւններ գտնելու եւ
ցուցնելու սկսաւ, ան ալ այնպիսի կտորներու
մէջ՝ ուր որ աւելի քիչ յոյս կար ազգակցութիւն
մը գտնելու, մինչև որ սկսուեցաւ՝ մի եւ նոյն
արմատէ ելող պլ եւ պլ լեզուները մէկ տեղ

¹ Հետազոտութիւն Թաթարական լեզուաց. Հատ. Ա:

² Միտրանութիւն Գիտութ. եւ Եղանակութ. Խոսք Բ.
Յոյ. 27

բերելով ու ժողովելով՝ ընդարձակադոյն խումբերու գումարել կապել: Անկից ետքն եղած քրննութիւններն ի սկզբան իրարմէ անկախ կարծուած լեզուներուն թիւը քիչցուցին ու մեծ խումբերու սահմաններն ընդարձակեցին: Պինդ ետքն՝ երբ որ աս կտորիս քննութեան համար նիւթ չմնաց, ուրիշ փորձերով նոր տեսակ քննութեան մը յաջողեցաւ այս խումբերուն արտաքոյ կարգի ազգացութիւններն ապացուցընել, որոնք ամէն լեզուի նկարագրին ու էութեանը մէջ պարունակուած էին. անանկ որ անոնցմէ եւ ոչ մէկն առանց այն տարերաց՝ որոնց վրայ իրենց նմանութիւնները կը կայանային՝ իրեն գոյութիւնը կրնար պահել . . . : Արդ որովհետեւ լեզուաց իրարմէ ունեցած հիմնական տարբերութիւնները չեն ներեր անոնց մէկը մէկային անանցեալ բարբառը կամ բողբոջը սեպել, անոր համար հարկ է հետևեցընել՝ որ մէկ կողմանէ աս ամէն լեզուներն ի սկզբան մէկ լեզուի մէջ բովանդակած էին, ուսկից ան իրենց հասարակաց տարրներն առին, որոնք ամենուն ալ էական են, իսկ ուրիշ կողմանէ՝ իրենց մէջ ըլլող հետաւորութիւնը կամ տարբերութիւնն՝ որն որ ուրիշ նշանակէս երեւելի նմանութեան տարրները ջնջեց, չէ թէ կամաց կամաց կամ հանդարտութեամբ ու աստիճան աստիճան ապականելով, կամ առանձին եղանակաւ մը յառաջ երթալով ծագեցաւ, հապա բռնական, արտաքոյ կարգի ու սաստիկ զօրութեամբ մը, որն որ բաւական էր այսպիսի իրարու հակառակ երեւոյթները միարանել, ու լեզուաց մէջ ըլլող նմանութիւններուն ինչպէս նաեւ տարբերութիւններուն պատճառը ցուցընել: Աս կարծիքն ունին ու աս լեզուն կը բանեցընեն ամէն իմաստուն լեզուագէտներն երկայն ու խորունկ քննութիւններ ու հետապօտութիւններ ընելէն ետքը. անանկ որ չէ թէ միայն սրբազան պատմութեան խոնարհ հաւտքով հե-

ատեւողներն, այլ եւ արտաքին փիլիսոփայութեան բոլորովին վտառհողներն ալ, որոնք լեզուաց նախաւոր միութիւնը կ'ընդունին, (զորն որ չընդունիլը հիմակ ալ չէ թէ միայն յանդգնութիւն այլ եւ յամառութիւն կը սեպուի,) միաբան կ'ըսեն՝ թէ մէկ լեզուին այլ եւ այլ լեզուներու բաժնուիլը՝ յանկարծական՝ արտաքոյ կարգի ու հրաշալի բան մըն է:

4. Արդ՝ մէկ ընդհանուր լեզուին այլ եւ այլ լեզուներու բաժնուիլն, որն որ ըստ սուրբ Գրոց Աւետարանի ինչպէս ալ կ'ըսուի, Աստուծոյ ամենակալի պատիժն եղաւ մարդկան համար: Ինչու որ ասոնք ջրհեղեղէն ետքը շատնալով՝ իրենցմէ Աստուծոյ կամայն ու կարգաւորութեան գէմ՝ խորհուրդ հնարեցին, ու, ինչպէս Իմաստունը կ'ըսէ՝, «Միաբանութիւն չարութեան», կազմելով՝ բարձր աշտարակ կամ մեծատարած ահագին շէնք մը շինել ուղեցին, որուն բարձրութիւնն ու մեծութիւնն անանկ արտաքոյ կարգի ու ազնեցուցիչ բան մ'ըլլայ, որ ամէն ատեն յիշատակաց արժանի սեպուի եւ շինողներուն անունը մշտնջենաւոր մնայ: «Եկայք շինեսցուք մեզ քաղաք եւ աշտարակ, որոյ լինիցի գլուխն մինչեւ յերկինս. եւ արասցուք մեզ անուն՝», Բայց ո՞վ կրնայ ամենակարող Արարչին գէմ գլուխ վերցընել, անոր կամքին գէմ խորհուրդ խորհիլ ու յաջողցընել: Աստուած՝ որ ուրիշ շատ կերպով մարդկան աս ամբարտաւանական մտածութիւնը կրնար խափանել, այնպիսի միջոց մը բանեցուց՝ որ մարդիկ սկսած հսկայագործ շէնքերնին անկատար թող տալու ստիպեցան: Եւ այս միջոցն եւ միանգամայն պատիժն էր՝ այն ամենայն մարդկան խօսած զի զի՛նչ լեզուն չէ՛ր զի՛նչ -- ինչպէս լեզու, որով ազամբարտաւանական գործքը սկսած ատեննին մէկ լեզու մէկ բարբառ հասկըցող ու խօսող

¹ Իմաստ. ձ. 5.

² Երևուողք. ձ. 11. 4.

ճարդիկներուն խօսքին ու զրուցուածքին մէջ
անանկ շփոթութիւն ու խառնակութիւն մը մտաւ՝
որ մէկուն ըսածն ու խօսածը մէկայլ չէր հասկը-
նար: Այսպիսի յանկարծական փոփոխութիւն մը
միայն Աստուծոյ ամենակար զօրութեան ու անհա-
կատակելի կամքին գործքը կրնար ըլլալ, ուստի եւ
արտաքոյ կարգի բան մը, հրաշք մըն էր¹: Մին-
չեւ հիմակ ըսածներնէս տեսանք՝ որ ճարդուն
ստեղծուելէն ու երկրի վրայ շատնալու սկսելէն
մինչեւ աս Բարեւոյնի շէնքին սկսելուն ատենը
ճարդիկ Գ. Գ. շէնքը կը խօսէին: Աս բանս
սրբազան պատմութեան խօսքերը կը հաստատեն,
որ աս շինութեան խորհուրդն ու անոր հետեւ-
անքը պատմելուն ասանկ սկիզբ կ'ընէ. «Եւ էր
ԱՄԵՆԱՅՆ ԵՐԿԻՐ ԼԵՉՈՒ ՄԻ, եւ բարբառ մի
ամենեցուն,»: Ասկից ետքը կը պատմէ այն հրա-
կայագործ շէնքին սկսելուն ու անոր շինութեանն
ատեն ճարդկան մի միայն լեզուին շփոթելուն ու

¹ Պիտոնց մէջն տեսնք կը գնեն՝ որ լեզուաց բաժնուիրն ու
բազմապատիկ թեպէտ եւ ճարդկան ամբարտաւանութեանը
պատիժ մըն էր, բայց միանգամայն Աստուծոյ բարեբար
նախախնամութիւնն ալ ընդհանուր ճարդկութեան բար-
ւոյն համար՝ ան պատմոյն մէջ կը տեսնուէր, որն որ այն-
պիսի թեթեւ պատժով ճարդկան յիմարական ունայնու-
սիրութիւնը պատու հասնելով, կ'ըսէ Շոբալեակի գերմա-
նացի իմաստուն պատմիչը, (Պատմ. Կրօնիչ Յի. Գր. Ա.
Ժ. Ժ. Բ. Մէջ. 2-րդ 9. 2-ժ. 9.) իր ամենիմաստ խոր-
հուրդներուն կատարումը կը գիտէր, ու այն գիտութիւն ի
բազմապատիկ պարտ ճարդկան կը յաջողցնէր: Բար հա-
մանաբն է մեր Վարդան վարդապետ մեկնիչին կարծիքն ալ,
որն որ (Յ. Մի. Կրօնիչ, Եւ Յ. Պատմ. Գր. Գր. Ա.
Ժ. Ժ. Բ. Մէջ. 2-րդ 9. 2-ժ. 9.) լեզուաց խառնակու-
թիւնն Աստուծոյ հայրական իմաստըն յօգուտ ճարդկային
ազգի սահմանուած գնելով կ'ըսէ. «Այս գործ Աստուծոյ
է ի պատու հասնին խառնել բազում բարութիւնս,»: —
Ասոնց ըսած խորհրդածութեան մտքն աս է՝ որ Աստուած
լեզուներուն բաժանութիւն իրր միջոց մը բանեցուց՝ ճարդկան
ընդհանուր երկրի ամեն կողմերը տարածուելուն, որով եւ
իւր խօսքին զիրար կատարուելուն, որ ըսած էր, (Մտ. Բ.
1.) «Բազմապարտ էր եւ լեզր գերկիր»): Աս միջոցով ուզեց
նաեւ շար ու ապակիմաստ շեղերն ու ճարդիկը բարբնեքն
ու շապակիմաստներն նախ լեզուով ու ետքը բնակութեանը
բաժնել հեռացնել:

խառնակելուն գէտքք: “Անդ ԽԱՌՆԱԿԵԱՅ Տէր Աստուած ԶԱԵԶՈՒՍ ԱՄԵՆԱՅՆ ԵՐԿՐԻ՛:”
 Աս խօսքերէն յայտնի կ'իմացուի՝ որ մարդիկ երկրի վրայ ցրուելու ու իրարմէ հեռանալու չսկսած՝ իրենց ամէն ցեղերուն գլխաւորները Բարելոն ժողոված ըլլալուն, ասոնց լեզուն շփոթելով՝ ամէն իրենց ցեղակից մարդկան ալ լեզուն, ուստի եւ ամենայն երկրի լեզուն շփոթեցաւ:

5. Առ իրական պատմութեան աս խօսքերն իրին ու եղածին՝ ինչպէս նաեւ անոր ժամանակին նկատմամբ ամէն տարակոյսը կը փարատէ. միայն կը մնայ մեզի քննել, թէ Այ՛ լեզունք ինչպէս շփոթեցաւ: Եւ թէ՛ զի շփոթեցաւ լեզունք զի ինչպէս շփոթեցաւ: Ամէն բանէն առաջ քննելու կտորն աս է՝ թէ արդեօք ան մէկ նախաւոր լեզուին խառնակութեան ատեն բուն բառերուն արմատները փոխուեցան, անանկ որ աշտարակին շինութեան ատենն որչափ բաժանուած ցեղեր կամ գլխաւոր ընտանիք կային՝ այնչափ ալ հիմնական կամ բոլորովին նոր լեզուներ դուրս ելան. չէ նէ՛ խառնակութիւնն ու փոփոխութիւնն եւ այլակերպութիւնը միայն լեզուաց կերպական մասին վրայ եղաւ կամ խօսքերուն կերպական տարբերութիւն՝ կամ ձեւերու այլեւայլութիւն պատճառեց, իբր թէ մի եւ նոյն լեզուէն այլ եւ այլ բարբառներ (տիպէքդ) դուրս ելան: Առաջինը, այսինքն բոլորովին այլ եւ այլ (մէկզմէկէ էութեամբ տարբեր) լեզուներ դուրս ելլելը՝ կարելի չէ. վասն զի թէ որ ասանկ եղած ըլլար՝ աշխարհքիս վրայ գտնուող ամէն մայր լեզուներուն մէջ տեսնուած ազգակցութիւնն ու (իրենց նախաւոր կաղապարին) արմատական նմանութիւնն, ինչպէս հմուտ լեզուագէտները կը գտնեն, չէր կրնար ըլլալ: Երկրորդը, այսինքն այն նախաւոր

լեզուին խառնակութենէն միայն այլ եւ այլ բարբառներ դուրս ելլելն ալ չենք կրնար ըսել, որովհետեւ այլեւայլութիւնն ու տարբերութիւնը՝ լեզուին ներսն ու կազմուածքին կամ յօրինուածին մէջ թափանցած ըլլալը յայտնի է:

Աստուանկ դնելէն ու վերը (ԳԼ. Բ. 5.) մարդկային նախաւոր լեզուին հանգամանացը վրայ գրածնիս հոս յիշեցընելէն ետքը՝ Բարեւոյնի աշտարակին շինութեան առէն Աստուծոյ հրամանան եղած լեզուի խառնակութիւնը հաւանականաբար մեկնելու համար կ'ըսենք՝ որ աստուածեղէն պատիժը նախ առաջին ու անմիջաբար մարդուն խօսելու գործարաններուն վրայ շեկաւ, հապա մարդկեղէն մտքին կամ հոգւոյն վրայ, որուն անօրէն հպարտութիւնն անանկ պատժոյ մը արժանի եղաւ: Աստուած՝ իրեն դէմ՝ «միաբանութիւն շարութեան», մտածող մարդկան լեզուին ամբողջութեան հոգեկան ընդհանուր տեսութիւնը մէկէն ի մէկ մթնցուց ու ծածկեց, իրենցմէ սկզբնական նկատողութիւնը ու մտաւոր պայծառ տեսութիւննին առնելով, որուն պայծառ գիտութիւնը՝ մարդկան շատնալովն այլ եւ այլ ցեղերու մեղանշականութիւնն օրէ օր աւելնալուն՝ գուցէ լեզուին ընդհանուր խառնակութենէն առաջ արդէն նուազելու եւ տկարանալու սկսած էր: Ասկից հարկաւորապէս յառաջ եկող հետեւութիւնն աս եղաւ՝ որ լեզուին այն ազգու եւ ոգելից գործարանաւոր ամբողջութիւնը շուտ մը հին բառերու արմատներուն կամ բուններուն մասնական նշանակութիւններուն փոխուեցաւ կամ ցրուեցաւ, ասոնք ալ զանազան կերպիւ գործածուելով՝ ի հարկէ մէկ մարդուն խօսածը մէկալը չէր հասկընար, ուսկից լեզուին շփոթութիւնն ու խառնակութիւնը հետեւեցաւ: Սակայն բառերու բուններուն շատ մասնաւոր կտորներն իրենց ճիւղերուն մէկ մասովը կերպապէս նոյն մնացին:

Բայց լեզուին ամբողջին կամ բովանդակին կապակցութիւնն ու մէկ տեսութեամբ նկատուելու կատարելութիւնը շնորհաւոր հետ նաեւ մասնաւոր հնչիւններուն իբր ամբողջին գործարանական մասանց նշանակութիւնն ալ կորսուեցաւ։ Ասանկով մարդկեղէն լեզուն հազարաւոր ու ասասհման փոփոխութիւններու ենթակայ եղաւ։ Գլխաւորապէս այն նախաւոր ամենակատար լեզուն հեղ մը այսպէս շփոթելէն ետքը՝ մարդկան լեզուն հիմակ արուած ու կործանած սքանչելի արուեստաշէն կերտուածի մը կը նմանի, որուն առանձին մասերը ժանգով ու բորբոսով ծածկուած ալ ըլլան՝ իրենց ամբողջին չափակցութիւնն ու վայելչութիւնը կերպով մը կը յայտնեն։ Պակայն ասով ալ մարդկան հիմակուան լեզուն ընդհանրապէս դաշնակաւոր ամբողջ մը չիսեպուիր. չէ թէ միայն այլ եւ այլ ու իրարմէ տարբեր ու հեռու լեզուներու բաժնուած է, հապա նաեւ նոյն իսկ այլ եւ այլ լեզուներու մէջ, որոնք բնութենէ առնուած քիչ հնչիւններ ունին, (ինչպէս մեր լեզուին մէջ, *բ-բ-բ-բ*, *բ-բ-բ-բ*, *բ-բ-բ-բ*, *բ-բ-բ-բ*, *բ-բ-բ-բ*, եւ այլն,) միայն այլ եւ այլ ածանցմունքներու դումար մը, սկզբնական ու յանգական մասնիկներով շինուած բազազրութիւններ կը տեսնուին, որոնց նշանակութիւնները դժուարաւ ու ըստ մասին միայն կրնան ճանչցուիլ ու գտնուիլ. մէկ խօսքով ըսեմ՝ ներքին յօրինուածութեան ու գործարանաւորութեան մը միայն մասնաւոր հետքերը կը նշմարին։ Աւստի եւ հիմակուան մարդկային լեզուն այն սկիզբին խանդարմանն ու ըստ երեւելի մասին կորսուելուն դրոշմը կը կրէ՝ որն որ ամէն մասանցն առ հասարակ կենդանութիւն կու տար, նաեւ նախաւոր լեզուին միութեանն ու բարձրագոյն հոգեկան կենդանութեանը կնիքը կը պահէ, որով մէկ լեզուին խառնակութեամբ աւ-

բուեցուն կամ բաժին բաժին ըլլալուն վկայութիւն կու սայ:

6. Մարդկային լեզուն ասանկ խառնակուելէն ու փոփոխուելէն ետքն՝ իր մէջը՝ սուրբ Չրքին խօսքերուն նայելով՝ մասնաւոր կարգ մը ու այլ եւ այլ ճիւղեր մասն՝ նոյի երեք որդւոցն այլ եւ այլ ցեղի ու ետքն ալ ազգերու բաժնուելուն համեմատ: Ծննդոց զրքին տասներորդ գլխուն մէջ կը գրէ Յովսէս՝ որ Յարեթաց որդիքը կամ թոռունքն՝ ինչպէս նաեւ Քամայ թոռունքն ալ՝ երան ցրուեցան երկրիս վրայ զատ զատ կողմեր, ամէն մէկն էր լէշ--ն ու իր տոհմին կամ ազգին համաձայն. «Իւրաքանչիւր շ-- լէշ-- յազգս իւրեանց եւ ի տոհմս իւրեանց»: Աւրեմն ամէն նոյեան գլխաւոր ցեղին կամ արմատին ու անոնց՝ իրարմէ զատուելով զատ ցեղ ու ետքն ազգ ըլլալուն համաձայն՝ իրենց լեզուն ալ մասնաւոր ամբողջութիւն մը կազմելով՝ ամէն մէկն իր առանձին լեզուն ունեցաւ: Աւ սս լեզուներուն ամէն մէկն՝ (որովհետեւ անիկա խօսող մարդկան միտքն անիկա ըստ հանգամանաց ինչ կը յօրինէր), ամէն մէկ ցեղին բաղդին կամ հանգամանացն, ապրելու կերպին, տեղւոյն եւ ուրիշ ազգեցութիւն ընող հոգեկան ու ֆիզիքական որպիսութեանց դրոշմն իր վրայ կը յայտնէր: Այսու ամենայնիւ պէտք էր որ աս՝ մէկ արմատէ ելած՝ այլ եւ այլ ցեղերու լեզուները նախաւոր մէկ լեզուին մնացորդներն իրր իրենց ներքին տարերքն՝ որչափ որ գլխաւոր խառնակութեան ատեն Արարչին կամքը թող աուած էր՝ թէպէտ եւ զանազան տեսակ փոփոխութեամբ ու այլ եւ այլ կերպարանքներու տակ՝ իրենց մէջ պահէին: Աս բանիս վկայ կամ ապացոյց կրնանք բերել այն մտադրութեան արժանի ու մարդկեղէն լեզուին պատմութեանը համար շատ նշանաւոր պարագան՝ որ բառերու բնութիւնն որչափ աւելի խորունկ ու հիմնական կեր-

պով յառաջ կը տարուի՝ հասարակօրէն այնչափ աւելի դիւրաւ մէկ լեզուէն ուրիշ լեզուի մը կամ ուրիշ լեզուներու մէջ կը մտնուի, որովհետեւ ամէնքն ալ իրենց սկզբնական արմատին հետ քերն իրենց մէջ կը բովանդակեն, եւ հիմնական քննութիւնը կրնայ այն հետքերուն նմանութիւնը գտնել ու իրարու հետ համեմատել:

7. Արբ որ հեղ մը մարդկային ազգը զանազան ցեղեր բաժնուելով անոնց ամէն մէկն իր յատուկ լեզուն ունեցաւ, անկից ետքն ալ լեզուներն ազգաց անանկ սեպհականութիւններն ու ձիրքերն եղան, որ թէպէտ եւ իրենց մէջ քանի մը փոփոխութիւններ մտնելով՝ քիչ մը պլայլելու ալ ըլլան՝ չեն կրնար եղծիչ ժամանակին պարագայից ու արտաքին պատահարաց ազդեցութեամբը բոլորովին կորսուիլ՝ անհետ ըլլալ, հասցա իրենց գոյութիւնը կը պահեն: Եւ ինչպէս որ ամէն մայր լեզուները մէկ նախաւոր ընդհանուր լեզուէն դուրս ելած ըլլալով՝ վերը ըսածներնուս համեմատ՝ ամէնքն ալ իրենց մէջ անոր հետքերը կը պահեն, ասանկ ալ՝ Նոյի երեք որդւոց երեք մեծ ցեղեր բաժնուելովն՝ երեք տեսակ լեզուաց խումբերը կամ ազգատոհմերն (հօ-հօլ) որ է սե-հե-ն, +-հ-ն, -- յ-քի-ն-ն լեզուաց ազգատոհմերը կազմուելէն ետքն, ասոնց ամէն մէկուն ցեղակից լեզուները ժամանակներ անցնելով պլայլութիւններ կրած ալ են նէ՛ իրենց գլխաւոր լեզուին տարրներն ու գլխաւոր կերպարանքն ամենեւին չեն կորսունցուցած: Օրինակ մը բերենք. աշխարհքիս վրայ հիմակ գտնուող լեզուներուն վրայ՝ աս դարուս մէջ եղած հա-

¹ Գիտելու հիմակ եղած ճիշդ քննութիւններով լեզուապէտներն առ հասարակ 860 գլխաւոր լեզուներ ու իրր 5000 անանցեալ լեզուներ կամ բարբառներ (տի-լի-տ) կը հաշուեն: Եւ աս լեզուներէն 53 հասար Եւրոպա, 115ը Աֆրիկէ, 117 Աստորալիայի, 153ը Ասիայի ցամաք երկրին ու ճեարանի, իսկ 322ը Ամերիկայի մէջ կը խօսուին:

Տեսնատական ճիշդ զննութիւնները՝ յարեթեան
ցեղերու կամ Յարեթի ցեղէն յառաջ եկած
ազգերու լեզուաց համար՝ մի եւ նոյն սկիզբէ
ըլլալնին ու իրարու հետ սերտ ազգակցութիւն
ունենալնին հաստատուն օրինակներով ցուցրցին.
եւ յայտնի ըրին որ Սանսքրիտ կամ հին Հընդ-
կաց, Հայոց, Պարսից ու Մարաց, Կեղտաց, Գեր-
մանացոց, Սլաւաց, Յունաց, Լատինաց, Եւ-
րոսկացոց ու Ախրիկեցոց (ինչպէս ուրիշ քա-
նի մը ազգաց ալ,) լեզուները մի եւ նոյն լեզուի
ճիւղեր կամ ծնունդներ են, եւ այս լեզուներ-
բուն իրր հասարակաց կամ գլխաւոր սկիզբ՝ շա-
տերը Սանսքրիտ լեզուն կը դնեն, ասիկա անոնց
մայր անուանելով, որովհետեւ՝ (կ'ըսեն աս կարծիքն
ունեցողները,) աշխարհքիս վրայ հիմայ գտնուող
գլխաւոր լեզուներուն մէջէն միայն աս Սանսքրիտ
լեզուին մէջ ամենէն աւելի բոլոր յարեթեան
ցեղերու լեզուաց տարրները կը բովանդակին ու
յայտնապէս կը տեսնուին:

8. Ըս յարեթեան լեզուաց բովանդակութիւնն
աս հասարակ Հնդկացի-Եւրոպացի կամ Հնդկացի-
Էթիովիպացի կ'անուանի՝: Ըս բովանդակութիւնը
կամ մեծ ազգատոհմը Յարեթին որդւոցմէ յա-
ռաջ եկած տասնուչորս ցեղերուն կամ ժողո-
վուրդներուն, որոնք Եննդոց գրքին տասներորդ
գլխուն մէջ կը յիշուին, տասուերկու հասն՝ ըստ
զգուշաւոր հետազոտութեան հմուտ քննչաց՝ իր
մէջը կը պարունակէ, այսինքն,

Գամերէն՝ Գամիրք կամ Կապագովկացիները, ըստ
ոմանց՝ նաեւ Կիմերացիները.

Եւրանագէն՝ Եւքերը, որ են Գերմանացիք.

Բիփաթէն՝ Կեղտերը.

Թորգոմէն՝ Հայերը (Թորգոմացիք).

Մագովգէն՝ Սկիւթացիները կամ Սլաւները.

¹ Տես Տիեզեր. Պատմ. Հ. Երկր. Վ. Գամբրժեան. Հատ-
Ա. էջ 36: — Տես նաեւ զարը էջ 72:

Մաղպէն՝ Մարբը (Մեղացիներն) ու (Զանգիկ
ազգը) Պարսիկները.

Յաւանէն՝ Յանիացիները կամ Յոյները.

Եղիսայէն՝ Եւոզացիները.

Թարսիսէն՝ Դիւրեմացիները.

Կիտախէն՝ (որ ըստ մեր թարգմանութեան հոս
ու Ե. Մ. 2. Ե. 1. Կիտացիք կը գրուի,) Մա-
կեդոնացիներն, ինչպէս նաեւ՝ ըստ սեանց՝ Կա-
րիացիները.

Դափղամիսէն՝ կամ ըստ Եզրայսիսիսի Պափղամի-
սէն՝ (որ ըստ Եօթանասանից առաի եւ ըստ մեր
թարգմանութեան հոս՝ ինչպէս նաեւ Ե. Մ. 2.
Ե. 1. Պափղացիք կամ Լառդացիք կը գրուի,
ուսկից սեանց Պափղանի ընակիրքն՝ սեանց ալ
Լառդամաի եղևրաց ազգը ըստ աջ կը ընրեն,)
Վիւրիկեցիները.

Թիբրասէն՝ Թրակացիները.

Ըստ մեր համարած գրքին հանդամներն ու զի-
տած փոխանանիս մեղի շիններն հոս առանձինն
գրել ինչ ինչպէս առ առնելու նաեւ ուրիշ քանի մը
յարեմեան սերունդները մի եւ նոյն հայրենիքէն
կամ միջակեանէն որ է Եփրայէն երած՝ ըստ իրենց
ցեղիցն Եփրայի եւ Եւրոպայի զանազան կողմերը
ցրուած՝ այլ եւ այլ լեզուներով հաստատուած
են, բայց միշտ այն բանաձևեալ լեզուաց մէջ իրենց
գլխաւոր լեզուն տարրները յայտնի ազգակցու-
թեամբ պահած են: Ընդուայ հիմնական առումն
ու համեմատական հետազոտութիւնն առ մասն
մէջ հաստատուած ու ապահով օրինակներ կը մա-
տակարարէ, որուն փոքր ի շատէ մաշակը մեր
ընթերցողներուն ապա համար հոս առ լեզուաց
շատերէն հարարար ըստեր կրնայիտը ըստ աջ
ընրել, բայց ըստական կը սերպենք միայն մէկ
քանի հասն գլխաւոր թուական անուններն իր
օրինակ հետագայ աղետակին մէջ դնել:

Հայ.	Մանր- բրիտ.	Չան- դիկ.	Գար- սիկ.	Յոյն.	Լատին.	Լի- թուա.	Սլաւ.	Գոթա- թի.	Հին գոթի.	Գերմ. գոթի.	Կիլիկաց.	Կեղան.
Կի, (Մէն, Կո, Մու, Մէկ.)	Կքա,	Կքա,	Կկք,	Խա, Միւս, Կն,	Պիւսուս, Քիւսուս, Քիւսուս,	Պիւսիւս, Քիւսիւս,	Կէսիւս, Քիւսիւս,	Կքա, (Կքն.)	Կքն,	Կքն, (Կքն.)	Քիւսաց.	Քիւսան.
Կրիտ, Կրիկ, (Սուս-)	Տուս, Կրի,	Տուս, Կրի,	Տիւ, Սէ,	Տիւս, Կրիս,	Տուս, Կրիս,	Տիւս, Կրիս,	Տիւս, Կրիս,	Տիւս, Քիւսիւս,	Տիւս, Քիւսիւս,	Տիւս, Քիւսիւս,	Տիւսաց.	Տիւսան.
Չարք, (Քարս-)	Չարքսար,	Չարք- քար,	Չարք, Քարք,	Չարքսար, Քարքսար,	Չարքսար, Քարքսար,	Չարքսար, Քարքսար,	Չարքսար, Քարքսար,	Չարքսար, Քարքսար,	Չարքսար, Քարքսար,	Չարքսար, Քարքսար,	Չարքսարաց.	Չարքսարան.
Հիւր,	Քանդան,	Քանդան,	Քանդ, Քանդ,	Քանդան, (Հ) Կքս,	Քանդան, Քանդան,	Քանդան, Քանդան,	Քանդան, Քանդան,	Քանդան, Քանդան,	Քանդան, Քանդան,	Քանդան, Քանդան,	Քանդանաց.	Քանդանան.
Պէր, (Պէր-)	Չարքան,	Չարքան,	Չարքան, Քարքան,	(Հ) Կքան, (Հ) Կքան,	Չարքան, Քարքան,	Չարքան, Քարքան,	Չարքան, Քարքան,	Չարքան, Քարքան,	Չարքան, Քարքան,	Չարքան, Քարքան,	Չարքանաց.	Չարքանան.
Սիւ, Ինն,	Սիւան,	Սիւան,	Սիւան, Քարան,	Սիւան, Քարան,	Սիւան, Քարան,	Սիւան, Քարան,	Սիւան, Քարան,	Սիւան, Քարան,	Սիւան, Քարան,	Սիւան, Քարան,	Սիւանաց.	Սիւանան.
Տանն, (Միսուս-)	Տաննան,	Տաննան,	Տաննան, Քարաննան,	Տաննան, Քարաննան,	Տաննան, Քարաննան,	Տաննան, Քարաննան,	Տաննան, Քարաննան,	Տաննան, Քարաննան,	Տաննան, Քարաննան,	Տաննան, Քարաննան,	Տաննանաց.	Տաննանան.

Ասոնց նմանութիւնը կամ ազգակցութիւնը վերի վերոյ մտադրութեամբ մ'ալ յայտնի կ'երևայ ու խորունկ լեզուագէտ շքլտղն ալ կը տեսնէ. բայց լծորդ կամ իրարու տեղ դրուող ու իրար փոխանակող նշանագրերուն մտադիր ու տեղեակ բլտղն աս թուական անուններուն, ինչպէս նաև անհամար հասարակ անուններուն աս լեզուաց մէջ գրեթէ նոյնահնչիւն եւ նոյնանշան բլտղը տեսնելով՝ անոնց ազգակցութեանը վրայ կրնայ համարուիլ: Աս հեռաքրքրական ու լեզուագիտութեան մէջ խորունկ դիտողութեան արժանի՝ նիւթին վրայ ուրիշ արթի մէջ մեր ուսումնասիրաց գուցէ ճաշակ մը տալու փորձ բնենք, ուր եւ Սանսքրիտ ու Հայ լեզուաց նմանութեան օրինակները դնենք:

Ս. Հաս միայն պատշաճ կը համարինք՝ աշխարհքիս ծանուցեալ լեզուներուն յօրինուածական բաժանումը կամ գասաւորութիւնն ըստ կարի համառօտիւ աւանդելու փորձ մ'ընել, լեզուաց երևելի քննիչներուն մանտանդ անուանի կուիլ. Հումայրտին հետեւելով: Աս խորունկ բանասէրը լեզուաց բաժանման կամ գասաւորութեան հիմն անոնց քերականական յարաբերութեանց որդիսութիւնը՝ քերականական կազմութիւնը կամ յօրինուածը Դ-Դ Բ-Բ վրայ փնտաւելու՝ դիտելու եւ որոշելու վրայ հաստատեց: Այս կերպ դիտողութեան մէջ պինդ առաջ պն լեզուները մեր առջին կ'ելեն՝ որոնց մէջ մտաց պարզ խորհուրդը պարզապէս մի միայն հնչիւնով, այսինքն մի միայն ի-ն-ի կը բացայայտուի՝ կ'արտաբերուի: Ահզուի մը կազմութիւնն աս աստիճանին ու սահմանին մէջ մնալով՝ միայն միալանկ արմատներ կ'արտադրէ, եւ ասոր վրայ կը կայանայ իր բուն նկարագիրը կամ էական հանգամանքը, որ եւ աս պատճառաւ Գ-Ի-Ի-Ի-Ի, Գ-Ի-Ի-Ի-Ի-Ի-Ի-Ի կ'անուանի: Ասոր մէջ ամէն մէկ մտաց ըմբռնման

կամ գաղափարի համար մասնաւոր վանկ մը՝ կամ առանձին միավանկ բառ մը կը գտնուի, որն որ մասնաւոր հնչման նշանով (ձայնանշանով՝ նշանագրով) մը կը բացատրուի. ուստի եւ որչափ բմբունմունքներ կ'ըլլան, այնչափ ալ ձայնանշաններ կը գտնուին. անոր համար հաս՝ մեր նկատուիս կերպին համաձայն խօսելով՝ միայն Վնկ-ի-ն եւ ոչ ուրիշ գիր (այբուբենը) կրնայ գտնուիլ: Կա եւ մեր հիմնական նկատմանցը համեմատ՝ քերականական ձեւերու կամ կերպերու կազմութիւն մը, հոլովում, խոնարհում, եւ այլն, այս տեսակ լեզուի մը մէջ չիկրնար մտածուիլ ու ըլլալ. եւ թէ որ ասանկ քերականական յօրինուած կամ յարարերութիւն մը հարկաւոր ըլլայ՝ ուրիշ միջոցով չիկրնար յաջողիլ՝ բայց եթէ առջի բառին քով երկրորդ՝ նոյնպէս ուրիշէն անկախ՝ բառ մը գնելով. սակայն այսպիսի քերականական կազմութեան կերպն ալ աս լեզուներուն մէջ հասարակօրէն ընդունելի չէ: Գարձեալ՝ աս կարգի լեզուաց մէջ բնականապէս բառերուն գասերն իրարմէ որոշուած չեն, հասցա ամէն մէկ վանկին այսինքն բառին մէջ այն նշանակութիւնն ու որոշումը կը պարունակի՝ որն որ մերք գոյական, ածական, բայ, մակրայ, եւ այլն, ըսուած բառերուն՝ մեր լեզուացը մէջ՝ կու տանք. ու միայն իրենց խօսքի մը պարբերութեան մէջ ունեցած դիրքը, որն որ աս լեզուներու մէջ հաստատուն ու անփոփոխ կերպով կանոնաւորած է, մեզի բաականապէս ու ամենայն ապահովութեամբ կը հասկըցընէ՝ թէ սոսկ կամ ան գիտուածի մէջ այնպիսի ձայնանշան (վանկ, բառ,) մը ինչ մասամբ բանի մեր լեզուացը պիտ'որ թարգմանենը: Արդ՝ այն լեզուներն՝ որոնք աս կարգի ու աստիճանի մէջ մինչեւ հիմայ մնացեր են, ու գեռ այն արմատներու կերպէն գուրս չեն ելած՝ որոնք իրենց քերականական յարարերութիւններն ըստ իրենց

կանոնացը՝ կամ գոնէ իրենց հասարակ ընթաց-
քին մէջ՝ կամ ոչ երբեք եւ կամ շատ ցանցաւ
կը յայտնեն, լեզուաց յօրինուածութեան պինդ
ստորին ստիճանը, կամ փշուռոց փշուռ կը
կացուցանեն, ու իրենց բառերը միավանկ ըլլա-
լուն պատճառաւ՝ հասարակօրէն փշուռ փշուռ,
եւ այլն, կ'ըսուին: Աս դասին կը վերաբերին
ներքին շնդկաստանի լեզուներն, Անամեցերէնը,
Ահամեցերէնը, Պարմայեան լեզուն կամ Պիրմա-
ներէնը, ու՝ ասոնցմէ քիչ մը աւելի կարգաւ-
րուած՝ ճենաց լեզուն:

10. Արբ որ լեզուաց աս առաջին դասին մէջ
քերականական յարաբերութիւն մը ցուցնելու
համար՝ բառի մը քով ուրիշ ինք իրմէ կեցող
կամ ուրիշէ անկախ ու քերականական կերպերը
յայտնելու պաշտօնը վարող բառ մը կը գրուի,
(ինչպէս ճենաց լեզուին մէջ ետքի ժամանակնե-
րը մտած է, որն որ իրենց սկզբնական կամ դա-
սական գրոց մէջ չկայ,) ու աս կապակցութիւնն
իրբ լեզուին կանոն կ'ըլլայ, ան առեն փշուռ եր-
կուրս փշուռ գուրս կ'ելլէ: Հոս թէպէտ եւ ար-
մատներն ըստ մեծի մասին անփոփոխ կը մնան,
բայց բառերուն իրարու հետ ունեցած յարաբե-
րութիւնները նշանակելու համար՝ մասնաւոր հըն-
չիւններ (վանկեր, բառեր) կը գործածուին, ու-
րոնք բառերուն վրայ առանց ներքին կամ յատուկ
կապակցութեան կը գրուին կամ կը յաւելցուին
(կը բարդուին), մասնաւոր թէ շատ հեղ աս
երկու տարրները դեռ մէկգմէկէ բոլորովին ան-
կախ իրարու մօտ կը կենան: Հնչիւնները (եր-
կրորդ վանկերը) արմատներուն կը մօտենան կը
յարին ու իրբ յօդ կամ վերադիր մասնիկ կ'ըլ-
լան. բայց իրենց կապակցութիւնը կամ կապը
թող է, ու մէկը մէկային հետ ներքուստ շար-
կապեալ չըլլալը յայտնի կ'երևայ. շարկապելու
միջնորդները՝ որոնք երկուքէն մէկ բառ պիտ'որ

յօրինեն՝ ըստ պատշաճի կցուած շեն, միայն ար-
 տաբուսա կ'երեւան, ու բոլոր միաւորութիւնն՝
 այլ եւ այլ մասանց կոչա (բարդում) մըն է, մի-
 ութիւն չէ: Աս' քերականական յարարերութիւն-
 ները բացայայտող՝ հնչիւններն սկզբնաբար ըստ
 մեծի մասին ուրիշներէ անկախ բառեր էին, բայց
 կամաց կամաց լեզուն իր յօրինուածութեանը մէջ
 յառաջ երթալով՝ անոնց յատուկ նշանակութիւնն
 անյայտ ու անհետ եղած է, նաեւ նոյն իսկ իրենք
 (հնչիւններն) ալ երեւելի փոփոխութիւններ կրե-
 լով՝ ալ իրր այնպիսի հնչիւն շեն կրնար ձանչ-
 ցուիլ: Բայց ասոնց շատն ալ միայն բաւերուն
 սկիզբը, մէջն ու վերջը զետեղուած զօգուած
 մասնիկներ են, որոնք երբեք իրենք իրենցմէ՝ կամ
 ուրիշէ անկախ գոյութիւն չեն ունեցած. սակայն
 եւ այնպէս իրենց կապակցութիւնը կամ զօգումը
 թոյլ ու խախուտ է, ու աւելի վերադրութիւն
 բարդութիւն մը կրնայ ըսուիլ, եւ ասոր համար
 աս տեսակ լեզուի կազմութեան յօդաւորումը
 կամ միաւորութիւնն՝ որն որ արմատներու ու զա-
 նոնք որոշող ձեւին կամ կերպին տկար ոգեկան
 կապակցութեանը վրայ հիմնած է, գիտունք ի--
 ր--ի--ն կամ ի--ր--ի--ն (ի--ր--ի--ն) անուա-
 նեցին, ինչու որ արմատը կամ արմատական բա-
 ռը կամ անունն ու քերականական նշանը կամ
 մասնիկը գրեթէ միայն իրարու կպցուած են: Աս
 պատճառաւ աս երկրորդ աստիճանին կամ դասին
 մէջ ըլլող լեզուները՝ ի--ր--ի--ն թ--ր--
 ի--ն լիշտ էր կ'ըսուին: Աս լեզուներն ալ թէ-
 պէտ եւ կատարեալ յօրինուածութեան շեն հա-
 սած, բայց իրենց մէջ կերպով մը քերականական
 յարարերութիւններ մտած ըլլալուն՝ առաջին դա-
 սու լեզուներէն աւելի յառաջողէմ կը սեպուին:
 Եւ այս երկրորդ դասին մէջ ըլլող լեզուներն
 ըստ հմուտ քննչաց ու լեզուագիտաց երկրի վրայ
 խիստ շատ տարածուած ու բազմաթիւ են: Աս

դասին կը վերաբերին Ամերիկայի, Ափրիկէի, Աւստրալիայի, Ռփկիանոսի կղզիներուն ու Ասիայի մէկ մեծ մասին լեզուները, ինչպէս նաև նոյն ասիական կողմերէն Եւրոպայի քանի մը գիւրն եկող Ֆիննեան-թաթարեան՝ կամ Ռուս-Ալդայեան լեզուաց բունն ու Պասքեան լեզուն: Այս ամենայն բազմաթիւ լեզուները միայն իրենց կազմութեանը հասարակաց սկիզբը նոյն ըլլալուն պատճառաւ, չէ թէ իրարու հետ ազգակցութիւն ունենալուն՝ կամ մէկ հասարակաց անմիջական արմատէ ելած բղխած ըլլալուն պայտէս մէկ կարգի կամ դասի մէջ կը դրուին: Եւ սս բազմաթիւ լեզուները դարձեալ ուրիշ շատ ու շատ ծիւղերու ու բարբառներու (երկրի վրայ անբաւ տարածութեամբ՝ վերը յիշուած այլ եւ այլ կողմերու ու ցեղերու մէջ) բաժնուած ու ցրուած են¹:

11. Ըստ երկու լեզուաց դասերուն մէջէն առջինը՝ ինչպէս ըսինք՝ միայն բառերու արմատներն ունի մէկ մէկ վանկով, առանց քերականական

¹ Ես դասին մէջի զլեւաւոր լեզուաց բուններուն ճիւղերն կամ մասնաւոր բարբառներն մէկ քանին յառաջ բերեմք: Ըստ հմուտ յննչաց՝ Ֆիննեան-թաթարեան կամ Ռուս-Ալդայեան բունին ճիւղերն են Մուլայ, Թուրքաց, Դունկուզաց, Սամոյատներու, Ֆիններու (որուն հետ նաև՝ Կարմաւայիններու, Էսպիայիններու, Լուսկարացաց կամ Մաճառներու) բարբառները: Տեքսանեան բունին ճիւղերն են առաջակողմեան (Փանզէսի սազիի կողման) Լնդկաց թեքակղզւոյն հարաւային ծայրին վրայ Դուլուֆեան, Մալայեան (Մալայարեան), Դամուլեան, Դուլուկեան, ու Սէլլոն կղզիին վրայ Գորմառեան (կամ Պանորեան ու Սինդալեան) բարբառները: Մալայեան մեծ բունին ճիւղերն են Ռփկիանոսի բազմաթիւ կղզեաց բարբառները, Ճենաստանի ծագեղերաց մտա թայուան (Ֆորմոզա, Գեղեցիկ) կղզիէն ու Սանափիլեան կղզիներէն սկսելով մինչև Եսթ Զելանտիա, ու Ափրիկէի արեւելեան եզերաց մտա Մատակապարէն սկսելով մինչև գրեթէ Ամերիկայի արեւմտեան եզերքը Զաակի (Ալյիհու) կղզին խօսուած բարբառները: Կը թողու՞մք Հիւսիսային Ամերիկայի, Կրեանլանտիայի, Ափրիկէի հարաւային կողմանց՝ հասարակածէն սկսելով մինչև Բարբառաց զլուխը, ինչպէս նաև՝ արեւելեան Արկտիկայի, Դիպեղի ու Ճեարանի լեզուները, որոնց գրեթէ ամենն ալ սս դասին մէջ կը մտնեն:

յարարերութիւն մը ցուցընելու, կամ թէ աս
 յարարերութիւնը միայն իրարմէ անկախ արմատ-
 ներ (բառեր) քովէ քով դնելով կը յայտնէ-
 իսկ երկրորդը՝ թէպէտ եւ նոյն արմատներուն
 (միավանկ արմատական հնչիւններուն կամ բա-
 ռերուն) մէջ քերականական յարարերութիւններ
 ունի, բայց ասիկայ կ'ըլլայ առանց ներքին միու-
 թեան բառին ու՝ քերականական ձեւն ու կերպը
 նշանակող՝ տարրին, միայն թոյլ ու խախուտ կա-
 պակցութեամբ մը, կամ թէ ասոնք իրարու քով
 իրրեւ իրարմէ բոլորովին բաժնուած գրուելով:
 Ասկից ետքը կու գայ փշռոյ երբէք ԳՐԻԿ, որուն
 մէջ աս կնճիւղը բոլորովին քակուած ու կարգի
 գրուած է, ու արմատն եւ կերպն իրարու հետ
 անբաժանելի միութեամբ մը (օգեխառնած) կա-
 պուած ու միացած՝ մէկ եղած են: Հոս քերա-
 կանական յարարերութիւնն արմատին (բուն բա-
 ռին՝ անունին) հետ ներքին կապակցութեամբ միա-
 ցեալ ըլլալուն՝ երկուքին ալ իրարմէ բաժնուիլն
 անհնարին է, ու իրարմէ բաժնուած գոյութիւն
 չեն կրնար ունենալ. իրենց միութիւնը յառաջ
 բերող կամ կատարող նիւթը՝ կամ միջնորդը
 մեզի անտեսանելի ու անզգալի է, իրր թէ օգե-
 կան եղած է. մէկ խօսքով ըսենք՝ բոլորն ալ
 գործարանաւոր ու դաշնակաւոր յօրինուածով
 գոյացող մարմինի մը նմանութիւնն ունի: Աս դա-
 սին կը վերաբերին ամէն հօլ-է-կ-ն փշռ-նեբը, ու-
 բոնք այն գերագոյն ու վեհ աստիճանին հասած
 են, որուն լեզուաց կազմութիւնն ու յօրինուածը
 կրնայ հասնիլ: Ասոնց մէջ հոլովական կամ փո-
 փոխուելու զօրութիւնը բառերու միութիւնը յա-
 ռաջ կը բերէ, ու այն նուրբ՝ անօտր ու իրր ու-
 գեկան մասնիկներն՝ որոնք աս միաւորութիւնը
 կամ միութիւնը կը կատարեն՝ ըստ մեծի մասին
 դերանունական բուներ եւ կամ արմատներ են:
 Միայն աս լեզուներուն մէջ կը գանուի յատկա-

պէս գործարանաւորութիւն կամ յատուկ յօրինուածութիւն, որով այլ եւ այլ անդամներու պէսպիսութենէ բառից միութիւնը կ'ելլէ: Ասկարգի մէջ ըլլող լեզուներն երկու մեծ բուններու կամ ազգատոհմերու կը բաժնուին, որ են՝ (Յ-բէթէ-ն) Հնդկ-չին-է-բ-դ-ի-ն ու Սէ-Կ-ն Ժ-ը-ո-ո-ն -չ-ի-ո-ն-Կ-ը-ը:

Ըստնց մէջէն Սեմեան լեզուները՝ երբայեցեքէնն, փիւնիկեցեքէնն, ասորեքէնն, արաբեքէնն, եւ այլն, հարաւային արեւմտեան Ասիայի մէջ գրեթէ ամբողջաւ մնացին, ու թէպէտ եւ դէպի Ափրիկէ տարածուեցան, սակայն շատ չճիւղաւորեցան: Իսկ Յարեթեան ազգատոհմն Ասիայի ու Եւրոպայի մէջ՝ Հնդկաց ու Արեաց կամ (Զանգիկ ազգին) հին Պարսից եւ Հայոց աշխարհներէն տարածուելով Եւրոպայի մինչեւ ետքի ծայրը դէպի արեւմուտք սփռեցաւ, ինչպէս վերը յիշեցինք, Հնդկաց (Սանսքրիտ), Արեաց (Պարսից), Հայոց, Եռնաց, Հռոմայեցոց (Լատինացոց), Սլաւաց, Գերմանաց, Կելտաց, եւ այլն, լեզուները յօրինելով: Աս ազգատոհմն երկրի երկու հեռաւոր ծայրերու՝ Ասիայի մէջ Հնդկաց ու Եւրոպայի մէջ Գերմաններու՝ ցեղերն իր մէջը բովանդակելուն պատճառաւ՝ լեզուաց քննիչներն ու բանասէրներն անիկա Հնդկ-չին-է-բ-դ-ի-ն կամ Հնդկ-չին-է-բ-դ-ի-ն անուանեցին, ուրիշ աւելի պատշաճական ու ճիշդ անուն չկրնալնուն գտնել:—

12. ԱրովՏեաւե լեզուաց խառնակութիւնն՝ ինչպէս ծանուցինք՝ Աստուծոյ հրամանաւն ապականեալ մարդկան արուած հոգեւոր պատիժ մըն էր, անոր համար աս պատիժը հարկաւորապէս ամէն մէկ ցեղին ապականութեանը կամ Աստուծոյ դէմ ապօտամբելուն համեմատ սաստիկ կամ նուազ պէտք էր որ ըլլար. այս ինքն՝ որ ցեղն որ աւելի ապականեալ բարբ ունէր, այնչափ աւելի ցրուեցաւ ու իր լեզուն միշտ աւելի խառնակելով՝ աւելի

բազմաթիւ լեզուներու բաժնուեցաւ: Աս կտորիս մէջ նշանաւոր եղաւ Քամայ ցեղն, որն որ խիստ շատ ծիւղեր բաժնուած է, որոնց լեզուներնուն արմատը կը գտնեն քաջ լեզուապէտները Հիմակուան Ավկիանիայի (Աստրախիայի), Ափրիկէի ու Ամերիկայի բազմաթիւ բարբառներուն մէջ: Իսկ ասոր ներհակ՝ Սեմայ ցեղն այնչափ չապականելով՝ իր լեզուն ալ այնչափ չքայքայեցաւ կամ շատ չխառնակեցաւ ու շատ ծիւղերու չբաժնուեցաւ, ինչպէս վերը նշանակեցինք: Աղյնպէս եւ Յարեթայ ցեղին լեզուն Քամեանց լեզուին չափ չբաժնուեցաւ.¹:

¹ Քէպէա եւ լեզուներն՝ ինչպէս բոնք՝ Նոյին երեք որդւոցը զլիսաւոր ցեղերուն համեմատ՝ երեք իրարմէ ասորերէր զլիսաւոր ազգատոհմերու կը բաժնուին, սեմեան, քամեան ու յարեթեան՝ կամ հնդկային-եւրոպական, սակայն հմուտ քննիչներն ու լեզուապէտներն աս ետքի գարուս մէջ անոնց՝ մանաւանդ սեմեան ու յարեթեան լեզուաց ազգատոհմերուն մէջ իրարու հետ ներքին ազգակցութիւն կը գտնեն: Աս մասին մէջ զլիսաւորապէս ու առաջին աշխատողն ու գրողն եղաւ անուանի լեզուապէտը Աւեփոսոս, որն որ կը դնէ թէ աս երկու զլիսաւոր լեզուաց ազգատոհմեր իրարու համեմատելու՝ իրենց ազգակցութիւնը գտնելու միջնորդ կրնայ սեպուիլ ու առնուիլ Աուպուայ (Պապի) լեզուն՝ իր մէջը գտնուող շատ մը քերականական ձեւերուն ու մասանց բանի հանդամանացը միջնորդութեամբ: Աւեփոսոսն ետքն ուրիշ երկու քաջ լեզուապէտ բանասէրներ՝ Քէպոյ, Պէնֆէյ ու Փր. Տէլիշ աս երեւելի նիւթին վրայ առանձինն մտադրութիւն ու գննութիւններ բնելով, այն իմաստունին կարծիքը կը հաստատեն: Պէնֆէյ մասնաւորապէս Աուպուայ լեզուին ու Սեմեան լեզուաց քերականական կերպերուն նմանութիւնը գտնելով՝ կը յուսայ ասանց բառերուն համեմատութիւնն ալ բնելով իրենց ազգակցութիւնը ցուցընել: Իսկ Տէլիշ Սեմեան ու Յարեթեան լեզուաց խումբերուն հետապոստութեանն առանձինն զբաղելով ու անոնց տարեբացը մէջ յայտնի ազգակցութիւն գտնելով՝ նոյն կարծիքը կը պաշտպանէ: Ասանց եւ ուրիշ հմուտ քննչաց շարունակեալ ու հիմնական քննութիւններն ու ջանքն՝ կը յուսանք որ աս մասնաւոր կտորին վրայ ալ որոշ վճիռ մը յուս տան: Նաեւ Քամեան լեզուաց ծանօթութեան համար, որուն մէջ լեզուապէտ քննիչք մինչեւ հիմակ այնչափ չէին կրցեր յառաջանալ, Աուպուայ լեզուին հետապոստութեանն ու համեմատութեանն առանձինն օգուտ եւ օգնութիւն կ'ըլլայ:

Իսկ թէ արդեօք բուն մարդկային առաջին լեզուն գոնէ Նոյ կրցաւ պահել թէ չէ, եւ թէ Տիմոթեոսն մայր լեզուներուն որն անոր ամենէն աւելի նման է, կամ թէ որուն մէջ անոր զբախաւոր տարրներն ամփոփ մնացած են՝ ասիկա մինչեւ Տիմոթեոսն անորոշ խնդիր մը կը սեպուի, ու կարծենք որ շիկրնար ալ ճշգիւ որոշուիլ: Ոմանք դրախափն տեղէն ու Նոյի տապանին կեցած լեզունէն պատճառ առնելով՝ մեր հայերէն լեզուն պաշտպան կը կենան: Իսկ ոմանք Սեմայ ցեղին Նոյի հետ մնալը պատճառ առնելով ու Նոյի մինչեւ ետքը խոսած լեզուն Ադամայ լեզուն գնելով կամ գոնէ անոր մէջ քիչ ապականութիւն մտած կարծելով՝ սեմեան լեզուաց մէկը, առաւելապէս՝ երբայցեցերէնն աշխարհքիս նախաւոր լեզուն հետ Նոյն կը համարին: Հնոց մէջ աւ կարծիքին հետեւողներ շատ կան: Նոյն կարծիքն ունի մեր ազգային մատենագիրներուն մէջէն թովմա վարդապետ Արծրունի պատմիչը¹: Իսկ Աարդան մեկնիչ ու պատմագիր՝ լեզուաց բաժանման առնելը խոսուած մարդկային ընդհանուր լեզուն քաղդէացերէնը գնելով՝ կը համարի թէ անիկակ երեքայ ցեղին մէջ (որ Սեմայ Արփաքսադ որդւոյն թոռն ու երբայցեաց ինչպէս նաեւ Քաղդէացւոց նախահայրն էր,) անկորուստ մնաց²: Բայց՝ ինչպէս ըսինք աւ խնդրոյն որոշումն իբր անհնարին սեպուելով՝ Տիմոթեոսն լեզուագէտներն ասոր վրայ զննութիւն չեն ընել, եւ առ հասարակ կը գնեն որ ան առաջին լեզուն բոլորովին կորսուած կամ ըստ իր սկզբնական հանգամանաց բոլորովին անյայտ եղած է: Անոր համար իրաւամբք կ'ըսէ

¹ Ի Պատմ. էջ 22: «Աստի գիտելի է մեզ բարբառն առաջին երբայցեցի լեզու»:

² «Իսկ թէ որ է լեզուն, յորմէ բաժանեցան. քաղդէացին է՝ որ մնաց առ երեք»: Մեկն. ՅԸ. ԳԼ. Ծն: Իսկ իր Պատմագրութեան մէջ միայն ասանկ կ'ըսէ. «Առաջին լեզուն մնաց առ երեքայ»:

գաղղիացի բանասէր մը. «Տրամաբանութիւնն աւանդութեան հետ միաբանելով մեզ կը ստիպէ հաւատալ եւ ընդունիլ՝ որ նախաւոր լեզու մը իրօք եղած է, որուն խօսքերը, կերպերն ու ոգին մեզի համար հիմայ բոլորովին կորսուած են: Աս ասանկ ըլլալով՝ պարապ տեղ ժամափաճառ կ'ըլլայ՝ ո՞վ որ կը ջանայ բուն հին լեզուաց պարզ տարրները հետազօտելով՝ անոնցմէ պարզ, հին ու սկզբնական լեզու մը՝ իբր ամենուն նախագաղտիարը կամ սկիզբը գտնել հանել»:¹

13. Վեզուաց վրայ քննելու հետաքրքրական նիւթ մ'ալ կայ: Սուրբ Վիրք լեզուներու խառնակութեան ու բաժնուելուն դէպքը կը պատմէ առանց յայտնի նշան մը տալու՝ թէ այն բաժանման ատեն քանի լեզու գուրս ելաւ. ու թէպէտ եւ նոյի որդիքն ու թոռուները մէկիկ մէկիկ յանուանէ կը դնէ ու կ'աւելցընէ նաեւ՝, «Ի սոցանէ մեկնեցան կղզիք աղգաց յերկրի իւրեանց. իւրաքանչիւր ըստ լեզուս յաղգս իւրեանց եւ ի տոհմս իւրեանց» . մանաւանդ Քամայ բաղմաթիւ սերունդներն անուանելէն ետքը՝ կ'ըսէ. «Սորա են որդիք Քամայ յաղգս իւրեանց, ըստ լեզուս իւրեանց» . բայց աս խօսքերէն լեզուաց թիւն որոշ

¹ «Մեծ սխալմունք կամ գոնէ ծուռ կարծիք մը կ'ըլլար, կ'ըսէ Փ. Շէկէլ: (Փննելու համար լեզուները գտնելէն ետքը յառաջ երթալով՝ ամենայն լեզուաց անյայտ կամ ծածկուած սկզբնէն՝ այսինքն առաջին լեզուն գտնելը կարելի բան մը համարիլ . . . ու, զոր օրինակ, Հնդկաց (Մանդարին) լեզուն իբր համաշխարհի նախաւոր լեզուն, ու երկրի վրայ ըլլող ուրիշ ամեն լեզուներուն առաջին աղբիւր ու մայր սեպել ու ըսել, պատմաւ ըրելով՝ որ աս լեզուն ուրիշ ամեն (աս Հնդկացիներու արտաքին ազգատոհմին վերաբերող) լեզուներուն առհասարակ մէջ իբրւամայր առաջին տեղն ունի ու անոնց ամենէն հին ըլլալը կ'իմացընէ, եւ միանգամայն անանց նկատմամբ ունի ճիշդ մտք գլխաւոր կամ սկզբնական անուանուելու արժանի լեզու կրնայ համարուիլ ու ըսուիլ. ինչպէս որ հին ասեմներն աս բանս երբայեցեքէն լեզուին համար կը համարուէր ու կը հաստատուէր»:

² Եւանջիլ. յ. 5. 20. 31.

չիմացուիր կամ մահաբերուիր. մանաւանդ որ ինչպէս հմուտ մեկնիչները կ'ըսեն՝ այն ցեղերուն ցրուելու սկսած ատենը սուրբ Գրքին Եննգոց առանկորդ գլխոյն մէջ անուանած ամէն ցեղապետները կամ Նոյի թոռունքն՝ (որ են իբր եւ թամասունուերկու) դեռ ծնած չէին: Եսոր համար իմաստուն լեզուագէտներն իրենց ամէն քրննութիւններովն ու ջանքովք չիկրցան մինչեւ հիմաց բուն սկզբնական մայր լեզուաց թիւը ստուգութեամբ որոշել: Թեպէտ եւ եօթամասունուերկու թիւն իբր նուիրական թիւ մը սեպուելով՝ կը կարծեն քանի մը քննիչք՝ թէ որովհետեւ սուրբ Գիրք՝ յայտնապէս կ'ըսէ՝ որ «Յորժամ բաժանեաց Բարձրեալն զազգս ամենայն, որպէս սիսեաց զորդիսն Եդամայ. կացոյց սահմանս ազգաց ըստ թաւոյ որդւոցն Եսաուծոյ», կամ ըստ այլ թարգմանութեան «որդւոցն Իսրայելի», եւ որովհետեւ Յակոր (Իսրայէլ) եգիպտոս մտած ատենն իր սերունդն եօթամասունուերկու հոգիէ կը բաղկանար, եւ դարձեալ Քրիստոս տէրն մեր եօթամասունուերկու աշկերտ ընարեց՝ իբր եօթամասունուերկու ազգաց կամ լեզուաց համար, առ պատճառաւ հաւանական է որ գլխաւոր մայր լեզուներուն թիւն եօթամասունուերկու ըլլայ. ինչպէս առկական խօսքի մէջ ալ առ եօթամասունուերկու լեզուաց զոյցքն իբր առակ մը եղած յաճախ կը ըսուի: Ի վերայ այսր ամենայնի առ կտորիս մէջ հաստատուն բան մ'որոշել ուզելը՝ մեծ յանդգնութիւն կ'ըլլար. ու, ինչպէս Պալմէտ մեկնիչ կ'ըսէ, ամենեւին հարկ մը չկայ այսչափ բաղմաթիւ մայր լեզուներ դնելու:

14. Աւրեմն առ խնդիրն իր անստուգութեանն ու անորոշութեանը մէջ թող առլով կ'ըսենք նախ՝ որ այն բարեխոնեան խառնակութեան ատենն ըստ երկը գլխաւոր ցեղից Սեմայ՝ Գամայ ու Յարեթի

երեք գլխաւոր մայր լեզուներ՝ որ է սեմեան, քա-
մեան ու յարեթեան լեզուաց ազգատոհմերը դուրս
ելլելն անտարակոյս է: Արկրորդ տարակոյս չկայ՝
որ այն ընդհանուր լեզուաց բաժանման ատենէն
ետքը նոր մայր լեզու մը դուրս չելաւ. բայց այն
ատենուան ելած արմատական կամ բուն մայր
լեզուներն անհամար բարբառներու բաժնուեցան
ու տարածուեցան, որոնց իրարու հետ ունեցած
ազգակցութիւնն ու իրենց գլխաւոր բունին (մայր
լեզուն) հետքերն իրենց մէջ կրնան գիտնական
քննութեանց օգնութեամբը գտնուիլ, ինչպէս
յառաջագոյն գրեցինք: Ասկից կը հետեւի՝ որ հի-
մակուան այլ եւ այլ լեզուներն այն հին գլխաւոր
լեզուաց ծնունդներն են. միայն անցմամբ ժամա-
նակաց իրենց վրայ շատ յաւելուածներ, խան-
գարմունքներ ու փոփոխութիւններ եկած ըլլա-
լով՝ իրենց այն սքանչելի ներքին ուժն ու կեն-
դանի կերպերն ու ձեւերը կորսնցուցած են,
սակայն առանց բոլորովին նոր արմատական կամ
մայր բառեր ու էական մասեր հնարելու: Ինչու
որ թէպէտ եւ մարդուն միտքը՝ կամ հոգին իրեն
հնարագէտ ու հնարիչ զօրութիւնն ինչպէս ու-
րիշ բաներու մէջ նոյնպէս եւ աս նիւթիս մէջ
ալ կը պահէ. սակայն աս զօրութիւնը մասնաւոր
գիտերու վրայ կը սահմանի ու չի կրնար այնչափ
առաջ երթալ՝ որ կարենայ բոլորովին նոր՝ կամ
սկզբնական մայր լեզուներէն բոլորովին տարբեր
լեզու մը հնարել գտնել:

Քրիստոս Ե.

Մենք լինուց շնորհքս -- շնորհք, ե- իրենց
ճշմարտ ի-նքն-նենք:

1. Չէ թէ միայն ետքէն բողոքովին նոր մայր
կամ գլխաւոր լեզու մը չիկրնար կազմուիլ կամ
հնարուիլ, հասցա այսչափ հազարաւոր տարինե-
րէն ետքը կը տեսնենք՝ որ մի եւ նոյն մայր լե-
զուին մէջ ալ իր բնական (սկզբնական) ընթաց-
քէն դուրս -- քիչ-քիչ փոփոխութիւն կամ յա-
ռաջադիմութիւն մը մտած չէ: Անոր մը իր որ
ժամանակին մէջ՝ այսինքն իր սկզբնաւորութեանն
ատեն՝ կամ քիչ մը յառաջանալէն ետքը՝ քրն-
նենք, կը տեսնենք՝ որ իր էական ու իրեն սեպ-
հական ըլլող յատկութիւններուն մէջ բողոքովին
կատարեալ յորինուած է, անոնց եւ ոչ մէկն ետ-
քէն ստացած է: Այն լեզու մը կրնայ քանի մը
բարակութիւն կամ զարդարանք, աւելի հարբս-
տութիւն մը, կամ պարբերութիւններու կապակ-
ցութեան այլեւայլութիւն մը ստանալ, բայց իր
յատուկ տարբերիչ մասունքն՝ իր կենդանական
սկիզբը՝ կամ սկզբնական գոյութեան բունը, կամ
թէ ըսեմ՝ իր հոգին բողոքովին կատարեալ կեր-
պաւորած կը ծնանի դուրս կ'ելլէ, ու ըստ այսմ
տեսութեան չիկրնար ամենեւին փոփոխուիլ: Աւերք
որ մայր լեզուի մը մէջ մեծ փոփոխութիւններ
մտնելու ըլլան՝ ուրիշ բարբառի կը փոխուի, կամ
իրմէ նոր բարբառ մը կ'ելլէ, Արմա (փիւնիկ)
հաւու մը՝ իր մոխրէն նոր ու երիտասարդցած
դուրս ելլելուն պէս, կ'ըսէ Աւայլմն: Եւ ուր որ
այսպիսի փոփոխութիւն մը կ'ըլլայ, կամ աւելի
աղէկ ըսեմ՝ մէկ լեզուին ուրիշ լեզու կամ բար-
բառ մը կը յաջորդէ, ինչպէս լատիններէնին իտա-
լերէնը, կամ անգղիա-սաքսոնականին անգղիա-
կանը, ան ատեն ալ իսկ աս փոփոխութիւնն ա-
նանկ կ'ըլլայ՝ ինչպէս որ որդէն թիթեռը կ'ելլէ:

իրբ այն հին լեզուին վրայ ծածկոյթ մը քաշուելով, նոր լեզուն անկից՝ աւելի կամ պակաս վայելուչ բայց միշտ իր սեռին մէջ կատարելապէս յօրինուած՝ կը բխէ, առանց էական փոփոխութեան մը ենթակայ ըլլալու: Աս փոփոխութեան կամ յաջորդութեան եւ անցման առեւնն ալ իսկ՝ այն հին կամ մայր լեզուն նոյն մասերն ու գործարաններն՝ որոնք իրմէ ելող նոր լեզուին կեանք ու կերպարանք պիտ'որ տան՝ իր մէջը յառաջագոյն կերպաւորած կը բովանդակէ:

Ասոր համար վերը յիշուած լեզուները, իտալերէնն ու անգղիերէնն իրենց էական հանգամանքին՝ իրենց գլխաւոր սեպհականութեանցն ու իրենց նոյնութեան սկզբունքին գիէն պինդ հին հեղինակներու գրոց մէջ այնպէս կատարեալ են՝ ինչպէս ետքի կամ նոր հեղինակներու մէջ: Նոյնը կ'ըսեն հմուտ լեզուագէտները նաեւ երբայեցեւրէնին համար, որուն էական յօրինուածը Յովսեփի գրոց մէջ անանկ կատարեալ է՝ ինչպէս դարերով ետքը գրուած գրքերու մէջ, թէպէտ հոն ալ հոս ալ լեզուն յայտնի անկատարութիւններ ունի, բայց հոն ալ ու հոս ալ կատարելագործուելու (էական փոփոխութիւններ ընդունելու) ընդունակ չէ: Սոյնպէս եւ Եգիպտացոց լեզուն իր էական հանգամանքներովն ինչպէս որ պինդ հին յիշատակարաններուն վրայ կը գտնուի, կ'ըսէ Աւիսիոս իմաստուն լեզուագէտը, այնպէս ալ հազարաւոր տարիներէն ետքը Աոպտաց գրքերուն մէջ կը գտնուի: Նոյնը պէտք է ըսել հին յունարէնին ու լատիներէնին համար ալ, որոնք ամենահին յիշատակարանաց ու գրոց մէջ այն էական հանգամանքներն ունին՝ որոնք պինդ ետքի դարերուն մէջ իրենց վրայ կը տեսնուին: Փասնաւորապէս լատին լեզուին համար աս բանս կրնանք հաստատել: Հռոմայեցոց Յունաց հետ ետքի առեւններն ունեցած հազորդակցութիւնը

մտածելով՝ կը տեսնենք թէ Լատինացիք որչափ յարմար առիթներ ու զօրաւոր գրգիռներ ունէին իրենց լեզուին էական հանգամանացը մէջ գրտնուած քանի մը պակասութիւնները Յունաց լեզուէն առնելով լրացընել, իրենց լեզուն աւելի կատարելագործել: Սակայն՝ թէպէտ եւ, ինչպէս ետքը պիտի յիշենք, Յունաստանը նուաճելէն ետքն անոնցմէ անդրիագործութիւնը, նկարչութիւնը, բանաստեղծութիւնը, պատմութիւնն, այլ եւ այլ արհեստներն ու գիտութիւններն աւելի եւս սորվեցան ու յառաջ տարին, ու թէպէտ եւ անոնց լեզուին քանի մը զարդերն ու կոկիկութիւնն եւ ուժգնութիւնն իրենց լեզուին մէջ առին, ի վերայ այսր ամենայնի անոր մէջ էական փոփոխութիւն մը չիկրցան ընել, իրենց քերականութեանը մէջ բացերու նոր ժամանակ՝ նոր խոնարհմունք մը, իրենց բառերուն վրայ նոր մասնիկ մը ու իրենց սյրութենին վրայ նոր նշանագիր մը չիկրցան ու չէին կրնար աւելցընել¹: — Ե. յս ամենայն պէտք է ըսել նաեւ մեր բուն հայերէն գրաբար լեզուին համար, ինչպէս որ ամէն քննութիւնները յայտնի կը ցուցընեն:

2. Մակից կը հետեւի թէ իբրեւ հաստատուն հիմն ու կանոն պէտք է դնել՝ որ ամենեւին ազգ մը չիկրնար իր լեզուին մէջ էական պակասութիւն կամ կարօտութիւն մը տեսնելով՝ օտար լեզուէ մը նոր պայման ու կարգ մը առնել ու անով իր լեզուին վրայ էական փոփոխութիւն մ'ընել, նոր քերականական կերպեր ու յօրինուածներ անոր մէջ բերել խոթել. եւ այսպիսի բանի մէջ փորձ մ'ընել ուղղը պարապ աշխատած ըլլալն ու յանդգնութեանը պառուղը շուտով կը

¹ Ըստ սմանց՝ շատ հին լատին լեզուին մէջ դանուոզ քանի մը յունարէն լեզուի տարրները Պեղասագիներէն որ է Յունաստանի նախկին բնակիչներէն մնացած են, որոնք Տրոյայի պատերազմի տանն՝ կամ անկից քիչ մը յառաջ թեոաղիսյէն Իտալիա անցան:

տեսնէ: Հոս մեր հայերէն գրաբար լեզուին նկատ-
մամբ ճաշակ մը տալու համար երկու օրինակ
դնենք՝ թէ հին ու թէ նոր աստեղներէն: Յունա-
րէն լեզուին մէկ սեպհականութիւնն է՝ որ բայ-
երն ալ անուներն ալ եզակի թիւէն՝ այսինքն
մէկ նշանակող ձայնէն՝ ու յոգնակիէն՝ այսինքն
մէկէն աւելի կամ շատ նշանակող ձայնէն ի զատ,
նաեւ առանձինն երկու նշանակող ձայն կամ յանգ-
ունին, որ եւ կ'ըսուի երկ-ի-ն կամ երկ-ո-ր-ի-ն.
աս բանս մեր հիներուն մէջէն մեր հայերէն լեզուին
կամ քերականութեան մէջ ալ խօթել ուղող
եղեր է: Գարձեալ ուրիշ մ'ալ քանի մը օտար
լեզուներու համեմատ մեր դերանուանց մէջ ալ
սեռ՝ այսինքն՝ ար-ի-ն ու ի-ր-ի-ն խօթել ուղեւով՝
-- , ր-- , ն-- դերանունին իգական հնարեր է՝ -ե,
դէ, նէ, -եր-, ներ-, եւ այլն, ըսելով: Մէկն ալ
բայերու խոնարհմանց մէջ նոր եզանակներ իրենց
ժամանակներովը բերել խօթել երազեր է, զոր
օրինակ, Բղձական եզանակ շինած է՝ կ-ի-ն, ի-
ն-ի-ն, ի-ն-ի-ն, ի-ն-ի-ն, ի-ն-ի-ն, ի-ն-ի-ն: Ասոր կատա-
րեալ ժամանակը շիներ է՝ ե-ի-ն-ի-ն, ե-ի-ն-ի-ն,
ե-ի-ն-ի-ն, ե-ի-ն-ի-ն, ե-ի-ն-ի-ն, ե-ի-ն-ի-ն. եւ այլն,
եւ այլն: Բայց այս ամենայն՝ անհնարինը հնա-
րաւոր ընել, կամ ինչպէս իմաստուն երգնկացին
իրաւամբ կ'ըսէ, «բռնահարել եւ զանէն (չեղա-
ծը) ստեղծանել», ըլլալով՝ ոչ ընդունելութիւն
գտած է, եւ ոչ ընդունելի ըլլալու յարմարու-
թիւն ու վայելչութիւն մը ունի: Այնպէս ետքի
դարերու մէջ ոմանք՝ աւելի տգիտութենէ քան

¹ Յ. Երզնկացին (Մի-ի-ն. Քեր-ի-ն) անուանց ինչպէս նաեւ
դերանուանց ու բայից թիւերուն վրայ խօսած աստեղ
յայտնի կը ցուցնէ՝ որ մեր լեզուէն ինչպէս ուրիշ շատ
լեզուներէն ալ աս երկականը բոլորովն օտար է: «Գի-
տելի է, կ'ըսէ, զի միայն յունական եւ յարաբացի լեզուան
յայտնի եզականն եւ երկականն եւ յոգնականն. եւ այլ
ամենայն ազգաց եզական եւ յոգնական, զի ոչ ունին զեր-
կուորականդ . . . ճշմարիտն կամ մի է, կամ բազում, զոր
ունիմք Հայք եւ այլ ամենայն ազգք»:

անուշ, կամ անոր մէջ նոր կազմութիւն մը հնարել, ճենաց լեզուն շատ պակասաւոր է քերականական յորինուածոյն կամ համաձայնութեան կողմանէ . . . եւ սակայն ճենք մինչեւ հիմայ ոչ ինչ կերպիւ յանձն առին իրենց լեզուին մէջ այն յորինուածները խոթելու՝ որոնք մեզի խօսք մը աղէկ հասկընալու համար՝ անտնօրինելի կ'երևան: Ինչու համար սեմեան լեզուներն (եւրպացերէնն, արաբերէնն,) այնչափ հազարաւոր տարիներ ուրիշ գրացի լեզուաց ազգատոհմերուն քովը գտնուելով՝ իրենց բայերուն մէջ ներկայ ժամանակն ու բաղադրեալ եւ թէական ժամանակներ ու եղանակներ չիկրցան խոթել, որոնց պակսութիւնն իրենց խօսքն ու գրուածներն անակ մթին ու դժուարահասկանալի կ'ընէ: Ինչու համար ասոնք քանի մը շաղկապներ չիկրցան հնարել գտնել, որով իրենց է-- (2) շաղկապին կամ շաղկապիչ մասնիկին պաշտօնը քիչ մը դիւրիննար՝ որով միայն խօսքի մը այլ եւ այլ մասերուն իրարու հետ ունեցած յարաբերութիւնը կը բացատրուի: Գարձեալ, ինչ պատճառի համար աս լեզուները խօսողներն (ու անոնց մէջի մատենագիրներն ու գիտուններն) այսչափ տարիներէն ի վեր ուրիշ ազգաց կատարեալ այբուբենը կամ նշանագրերը ճանչնալով, ու իրենց նշանագրացն առանց ձայնաւորի ըլլալուն մեծ դժուարութիւնը տեսնելով՝ ոչ երբեք իրենց մէջ ձայնաւոր նշանագրեր խոթելու եւ գործածելու հնարքը կրցան գտնել, հապա մինչեւ ցայսօր կէտերու օգնութեամբ աս բանիս մէջ գտնուած պակսութիւնը կերպով մը լեցընելու կը ստիպին: Աս լեզուներուն մէկ ճիւղը՝ այս ինքն եթովպացերէնն աս մասին մէջ փոփոխութիւն մ'ընելու փորձ բրաբայց անով աւելի անընական ու շիտի վանկական այբուբեն մը դուրս ելաւ, որն որ շատ խառնակութիւններով լեցուն է ու շատ սխալներու

ալ պատճառ կ'ըլլայ¹: Արդ թէ որ լեզուաց մէջ (իրենց գլխաւոր տարերացը նկատմամբ) բնական կատարելագործութեան եղանակ մը գտնելը կարելի ըլլար, վերոյիշեալ լեզուներն այսչափ դարերու մէջ այս կատարելագործութիւնն ընդունած կ'ըլլային: Աս չըլլալէն ի զատ նաեւ աս ճշմարտութիւնն ալ կայ՝ որ լեզուի մը բուն մեծ կատարելութիւնն իր նախաւոր ժամանակները կամ ծագմանն ատեններն իր վրայ կը գտնուի . . . :

Աւստի ո՛վ որ կը դնէ թէ լեզու մը աստիճան աստիճան յառաջ գացած յօրինուած է, կամ կը կարծէ՝ որ դարերու կարօտ եղած է՝ մինչև որ քերականական կատարելութեան աստիճանի մը հասնի, բողբոլովին փորձոյ դէմ կը խօսի: Անոր ներք սերմանէ մը կամ բողբոջէ մը դուրս չեն ելլեր ու աճիր: Բնական խորհրդաւոր կազմութեան եղանակ մը դիրենք կենդանի կերպի (կաղապարի) մը մէջ կը յօրինէ, ուսկից իրենց ամէն սքանչելի ու գեղեցիկ յարաբերութիւններովը դուրս կ'ելլեն, ու այս կերպը մարդկային միտքն է, որն որ իր արտաքին յարաբերութիւններուն մէջ այլ եւ այլ պարագաներու միջնորդութեամբն այլ եւ այլ եղանակաւ կ'որոշուի կամ կը սահմանի: . . . Յիրաւի ցաւելու բան է՝ որ գիտութեանց այլ եւ այլ յարաբերութիւններն ու

¹ Հոս կրնայ մէկն ըսել թէ մեր հայերէն այբուբենին մէջ ի սկզբան իր ծագման ատենն է ու չ'զրկերը շկային ու ետքէն մտած՝ կամ յունարեկէն առնուած ու մէկալ գրերուն կարգը գրուած են. կը պատասխանենք՝ որ աս երկու նշանագրերը՝ մանաւանդ չ' ոչ երբեք մեր նշանագրաց կարգը մտան սարբաջան ու՝ ինչպէս կ'ըսուի մէկալ նշանագրերուն հետ քաղաքացւոյ կամ ազգայնութեան իրաւունք ստացան. հապա իրբեւ օտար բառերու ճիշդ արտաբերութեան համար հիւրընկալութեան արժանի եղան: Առանձինն է գիրը՝ մեր -- երկրարտան՝ որն որ արտաբերութեան ատեն զի նման լայն կը հանէ՝ գիւրութեամբ գրելու եւ արտաբերելու. համար սմանք մեր այբուբենին մէջ խոթելը պատշաճ տեսեր են ու գործածութեամբ մնացեր է. բայց մեր նախնիք զանիկա չ'էին ճանչնար ու հին նեոպրաց մէջ ալ չ'իզանուի:

կապակցութիւնները մէկ տեսութեամբ չենք կր-
նար բմբռնել բովանդակել. ապա թէ ոչ յայտնի
կը տեսնէինք՝ որ թէպէտ եւ երեւոյթներն անանկ
կարծել կու տան որ շատ դարեր հարկաւոր ե-
ղած բլան՝ մինչեւ որ լեզուներն այն հանգաման-
քի մէջ մանային՝ որոնց մէջ մենք զանոնք նախ
առաջին կը գտնենք, սակայն ուրիշ քննութիւն-
ները մեզի կրնային ցուցնել՝ որ (լեզուներ գոյա-
նալէն առաջ) դարեր չանցան. ուստի եւ կը հար-
կադրէինք յօրինիչ զօրութիւն, յաղթող ազգե-
ցութիւն մը փնտռել գտնել, որն որ ան բանը
(լեզուաց ծագումը) մէկէն ի մէկ կրցաւ յաջող-
ցնել՝ որուն կատարմանը համար բնութիւնը դա-
րերու կարօտ էր: Բայց աս խնդիրը Գննողոց գրք-
քին խօսքերը լուծեցին,:

4. Ղեզուներուն կամաց կամաց իրարմէ բաժ-
նուիլը, կամ խանգարելով մէկ լեզուէն երկու
երեք ու ալ աւելի բարբառներ դուրս ելլելը՝
յայտնի է որ մասնաւոր դիտմամբ՝ ջանքով՝ օրէն-
քով ու կանոնով եղած չէ, հապա խօսողներուն
անիոյթութենէ ու աւելի տգիտութենէ յառաջ
եկած է. ու ետքէն ազգի մը մասերն իրարմէ
քիչ կամ շատ հեռանալով՝ իրարու խօսածը
չհասկընալու շափ տարբեր լեզուներ դուրս հա-
նած են: Ղեզուաց քննութիւնները յայտնի ըրած
են՝ որ քաղաքականացեալ ազգաց այլ եւ այլ լե-
զուներն իրարու հետ աւելի միաբանութիւն, ազ-
գակցութիւն ու խնամութիւն ունին, քան թէ
անկիրթ ազգաց կամ վայրենիներուն լեզուները,
որոնք տեսակ տեսակ եւ ցրիւ բարբառներու բաժ-
նուած են¹: Հին ու մանաւանդ նոր աշխարհքին

¹ Ըստ հաստատութեան համար Ռայզմեն (Մի-7. Գի-7.
Է-Յ-7. Խո-7. Բ-7. 33.) քանի մը հմուտ բանասի-
րաց վկայութիւնը յառաջ կը բերէ. որոնց մէկը՝ Գրաու-
ֆրոտ (Պ-7. Եր-7. Է-7. 2-7. Բ-7.) ասանկ կ'ըսէ.
«Ղեզուներուն ամեն ալ մէկ բնթացք ունին. վայրենեաց
մէջ բազմութիւ են, իսկ կրթեալ ընկերութեանց մէջ

վայրենեաց մէջ անթիւ բազմութիւն բարբառ-
ներու կը գտնուի, միայն Ամերիկայի մէջ հինգ
հարիւրի շատ, որոնք իրարմէ շատ տարբեր են.
անանկ որ մի եւ նոյն արմատէ ելած ու բաժ-
նուած ժողովուրդ մը իր արմատին մէկ ուրիշ
մասին խօսած բարբառն ամենեւին չի հասկընար,
որովհետեւ իրենց գլխաւոր լեզուին ազգակից մա-
սունքն այլայլած ըլլալով՝ միայն խորունկ քննու-
թեամբ այլ եւ այլ բարբառներու մէջ կրնան
ճանչցուիլ: Աս բանիս բուն պատճառն ըստ մա-
սին երկրին հանգամանացը մէջ¹, ըստ մասին
վայրենիներուն քաղաքային յարաբերութեանց մէջ
ու ըստ առաւելագոյն մասին իրենց հոգեկան ու
բարոյական անկրթութեան ու ապականութեան
մէջ պէտք է փնտռել:

Վիտութեան՝ կամ ինչ եւ իցէ նիւթի մը յա-
ռաջ երթալուն՝ մշակուելուն ու կատարելագոր-
ծուելուն համար ամէն բանէն առաջ հարկաւոր
է՝ որ անիկա ունեցողին սրտին մէջ անոր վրայ
կենդանի զգացում մ'ըլլայ, ուսկից ալ իր մտքին

սակաւսթիւ: Ամերիկայի ցամաք երկրին վրայ ըլլող լե-
զուններուն վիճակն առ բանիս համոզիչ վկայութիւն մըն
է, եւ Հնդկաստանի կղզիներն առ ճշմարտութիւնն աւելի
եւս կը լուսաւորեն: (Ներքին Հնդկաստանի մէջ) Մալաբար
ցամաքակղզւոյն լեռանց վրայ բնակող Սեւերն, որոնք
բնկերական կենաց պինդ ստորին ու անպիտան վիճա-
կին մէջ իրարու հետ կ'ապրին, թեպէտ եւ բազմաթիւ
չեն, սակայն շատ ու իրարմէ տարբեր ջեզերու բաժնուած
են, որոնց ամէն մէկն իր մասնաւոր լեզուն ունի: Թիմոր
կղզւոյն վայրենի ու ջրուեալ բնակչացը մէջ որչափ որ
մինչեւ հիմայ ծանուցուած է՝ քառասուն լեզու կը խո-
սուի: Էնտէ կամ Փլորէս կղզիին բնակիչներն ալ շատ ու
իրարմէ տարբեր լեզուներ ունին: Ար Գորնեոյի գաղա-
նարարոյ (մարդակեր) բնակչաց մէջ հաւանականաբար՝ հա-
րիւրէն աւելի լեզուներ կան:..

¹ Ամերիկայի համար առանձինն կը ծանուցանէ Աղ. Հուժ-
պոյա՝ որ «Ներքին կազմութեան հանգամանքը, անկոց
ամման սասակութիւնը, ու հասարակածին տակ լեռնա-
բնակ մարդկան զաշտային տեղերու կիզիչ տարէն ունե-
ցած վախը՝ բնակչաց իրարու հետ հաղորդակցութիւն ընե-
լաւ արգելիքներ են, ու Ամերիկայի բարբառներուն այնչափ
բազմութեանն ու այլեւայլութեանը պատճառ կ'ըլլան»:

Ճշ անոր վրայ յարգ ու համարում ծնանի, ու անով անոր ծաղկելուն ու կատարելագործուելուն համար փոյթ տանի: Քաղաքականացեալ ազգաց ճշ ինչ որ մշակուած՝ ծաղկած ու անշքութենէ եւ անկատարութենէ կատարելութեան ելած է՝ միայն իր պատուականութեան ու օգտակարութեան վրայ տեղեկութիւն ու համոզում ըլլալուն եղած է: Աս զգացմունքը վայրենի անկիրթ ժողովրդոց ճշ չէր կրնար յուսացուիլ. անոր համար զարմանք չէ որ իրենց վրայ ամէն բան բնական ընթացքի հետեւելով՝ առանց մտադրութեան ու մշակութեան մնալուն՝ խանգարելու ճամբայ բռնած է: Աս կարգի ճշ կը մտնէ իրենց լեզուն ալ. եթէ ժողովուրդ մը ամիտի տեղ մը մնալու ըլլայ, ու իր ճշն ալ օտար ժողովուրդ չմտնէ, ինչչափ կոպիտ ու անզարդ եւ պակասաւոր լեզուունենայ՝ գտնէ անիտիտիս կը մնայ կամ քիչ փոփոխութիւն կը կրէ: Բայց եթէ երկու ժողովուրդ իրարու խառնուելու ըլլայ, մեծագունին կամ աւելի բազմամարդին լեզուն մեկային ճշ իրմէ խառնուրդներ կը խոթէ. ինքն ալ թէպէտ եւ մեկայէն նուազ իր ճշը խառնուրդներ կ'առնու. ասանկով երկու լեզուն ալ կը խառնակի եւ կրնայ օտար լեզու մը դուրս ելլել: Ասոր գլխաւոր պատճառը լեզուին վրայ անմտադիր ըլլալը, անիկա խօսողներուն անփոյթութիւնն ու անկրթութիւնը, ու իրենց ճշ լեզուին խանգարուիլն արգելող գիտունք չգտնուիլն է: Աս կերպով կրնանք մեկնել Ամերիկայի ճշ յաճախած այնչափ մասնաւոր բարբառներու բազմութիւնը, որոնց ամենուն մէկ երկու գլխաւոր արմատէ ելած ցրուած ըլլալն՝ աս ետքի դարուս ճշ հմուտ քննիչներն ու լեզուագէտները յայտնապէս կը ցուցնեն:

5. Արիչ նկատելու պարագայ մ'ալ կայ. լեզու մը ցորչափ միայն հասարակ ժողովրդեան բերանը կը մնայ, մանաւանդ օտար ազգի ու լեզուի

մը մօտերը, չէ թէ օրէ օր աւելի կը մշակուի կը մարբուի, հասցա մանաւանդ թէ կամաց կամաց խառնակուելու եւ խանգարուելու ճամբաց կը բռնէ, ու ժողովուրդները մաս մաս՝ կամ գաւառ գաւառ բաժնուելով ու իրարմէ հեռանալով՝ այլ եւ այլ բարբառներ ($\text{ԳՆ} - \text{ԳՆ} + \text{Գ}$) դուրս կ'ելլեն. ինչպէս իրօք մի եւ նոյն ազգի այլ եւ այլ գաւառական բարբառներն այսպիսի ճամբով ծնած են: Աւ աս բարբառներուն մէջ անանկներ կան՝ որ իրենց իրարմէ ունեցած տարբերութիւնը գրեթէ երկու այլ եւ այլ լեզուի կամ զատ գլխաւոր բարբառներու իրարմէ ունեցած տարբերութենէ աւելի է: Ինչպէս, իտալերէն ու սպանիացի լեզուներն երկու իրարմէ զատ գլխաւոր բարբառներ են, եւ սակայն Կատալացի այլ եւ այլ նահանգներուն մէջ անանկ իտալացի մասնաւոր բարբառներ կան, ինչպէս՝ պօլոնիացիերէնը, կաղապրիացիերէնը, կաղիարիացիերէնը, պերկամաղքեցիերէնը, որոնց մէջի տարբերութիւնն իտալերէնին ու սպանիացիերէնին մէջ եղածէն շատ աւելի է: Սոյնպէս Կերմանիայի քանի մը լեռնակողմերուն մասնաւոր կամ գաւառական բարբառներուն համար պէտք է ըսել. ինչպէս Քանկաւի (Վալիսպուրկի լեռնակողման) բնակիչքն անանկ գերմաներէն կը խօսին՝ որ հասարակ գերմաներէնէն տարբեր լեզու մը կը կարծուի. այսպէս բուն Շվաբներուն խօսած լեզուն՝ Տիւսսէլտորֆի, կամ Չէլլէսթալի գեղացին չի հասկընար. եւ սակայն ամենն ալ գերմանացի բարբառներ են: Նոյնը կրնանաք ըսել Եւրոպայի եւ ուրիշ կողմանց այլ եւ այլ գաւառական բարբառներուն համար:

Յ. Բ. ս հանգամանքը թէ ընդհանուր մարդկութեան եւ թէ ամեն մէկ ազգի համար ոչ օգտակար ու ոչ բաղձալի ըլլալուն՝ պէտք է ըստ կարի ջանալ անիկա խափանելու եւ անոր պատճառներն արգելելու: Արդ՝ լեզուի մը ամբողջու-

թիւնն ու մարութիւնը պահելու եւ յառաջ
 տանելու համար գլխաւորապէս երկու բան հար-
 կաւոր է. առաջին՝ անիկա խօսողներուն մէկ տեղ
 մտալը՝ շքրուիլը. երկրորդ՝ անոր շարուելուն կամ
 իր նախնական հանգամանացը շփոխուելուն պատ-
 չած միջոցներով փոյթ տանիլը: Առաջին պա-
 հանջմունքին կատարուելուն աւելի դժուարութիւն
 կայ քան թէ երկրորդին. ինչու որ ժամանակին
 տեղւոյն ու ազգաց յարաբերութեան պայման-
 ներն անանկ բռնական ու ստիպիչ կրնան ըլլալ՝
 որ անոնց դէմ կենալու եւ անոնք փոխելու հնարք
 գտնելը գրեթէ անհնարին կ'ըլլայ: Ազգի մը ցը-
 րուիլը, անոր մէկ մասին մէկալ մասէն բաժնուի-
 լը կամ ներքին ստիպիչ հարկէն՝ կամ արտաքին
 բռնութենէն կրնայ պատճառիլ: Ներքին հարկն
 է՝ բնակչաց շատնալովն երկրին ընդարձակութեան
 ու բերքերուն բաւական չըլլալն ամէն բնակչաց
 կարեւոր պիտոյքը մատակարարելու, որով ազգին
 մէկ մասը կը ստիպի մէկալ մասէն բաժնուելու,
 գաղթականութեամբ օտար երկիր երթալու: Իսկ
 արտաքին բռնութիւնն է՝ օտար հզօրագոյն ազգի
 մը դալ պատերազմաւ երկրին տիրելն, ու բուն
 բնակչաց մէկ մասը հայրենի երկրէն հեռանալու
 ստիպելը: Աս պարագաները լեզուին անշքանա-
 լուն, աւրուելուն ու երբեմն բոլորովին կորսուե-
 լուն ալ պատճառ կրնան ըլլալ: Օրինակ բերենք
 մեր ազգը. գրոց բարբառը մեր ազգին սկզբնական
 կենդանի լեզուն ըլլալուն վրայ ոչ որ կը տարա-
 կուսի. նոյնպէս Հայկին (կամ ջրհեղեղէն ու աշ-
 տարակի շինութենէն ետքն ազգաց բաժնուելու)
 ատենէն մինչեւ Թարգմանչաց դարը, կամ հայե-
 րէն գրերով շարագրելու եւ գրելու սկսուած
 ատեն՝ Հայաստանի մէջ զուտ ու մարուր հայերէն
 խօսուիլը տարակուսի տակ չիկրնար իյնալ: Ան
 ատենները բոլոր ազգն իր սեպհական տերանց ու
 թագաւորաց տակն ու իր հայրենեաց մէջ մէկ-

տեղ ժողոված ըլլալուն, իր լեզուն կը պահուէր
 ու իր յատուկ ոճովն ու բառերովը կը խօսուէր:
 Քրիստոնէութենէ ետքը թարգմանչաց ու լեզուին
 վարպետներուն ատեններն երկրին ամէն կողմերը
 դպրոցներ ալ դրուելով՝ բերնուց խօսուած լե-
 զուն գրով ալ կը մշակուէր ու կը կատարելա-
 գործէր: Չե՞նք կրնար ըսել՝ որ եթէ ազգն իր
 ամբողջութեամբն իր հայրենի երկրին մէջ մնա-
 ցած ըլլար, Հայկայ լեզուն՝ թէ որ կատարեալ
 անարատութեամբ ալ չըլլայ՝ գոնէ քիչ խանգար-
 մունքներով կը պահպանուէր, կը շարունակէր ու
 կը ծաղկէր: Անտարակոյս. որովհետեւ ազգայինք
 ի սկզբանէ հետէ մէկտեղ մնացած ու մէկ լեզու
 սորված ըլլալով, ու անով իրենց հաղորդակցու-
 թիւնն ու գործքերը կատարելով, ինչպէս հիմայ
 Գաղղիացիք, Անգղիացիք, Գերմանացիք, եւ այլն,
 կ'ընեն, ի հարկէ ամէն Հայ բուն հայերէն լեզուն
 անկորուստ կը պահէր. եւ կատարելագոյն կրթու-
 թիւնն ու գիրն ալ վրան գալով՝ անիկա կը ծաղ-
 կեցընէր անդադար յաջորդութեամբ: Բայց ար-
 տաքին եւ ներքին դժբախտ պարագաներու ազ-
 գեցութեամբ ու պատերազմներու պատճառաւ ազգն
 իր հայրենիքէն դուրս ելլելու ցրուելու եւ իր
 մասերն իրարմէ զատուելու ստիպուելով, կամաց
 կամաց իր լեզուին մէջ օտար խառնուրդներ մտան,
 այլ եւ այլ ազգաց մէջ բնակելով՝ անոնց լեզու-
 ներուն բառերն ու ոճերը սկսան իր մէջը սպր-
 դել մտնել, արտաբերութիւնը սկսաւ փոխուիլ.
 եւ այսպէս նոյն իսկ հայերէն աշխարհաբարն ալ
 կատարեալ մաքրութիւն մը չիկրցաւ ստանալ.
 իր մէջն այլ եւ այլ երկիրներու մէջ այլալու-
 թիւններ մտան եւ օրէ օր ալ կը մտնեն:

7. Արդ՝ թէպէտ եւ արտաքին մեծասակար պա-
 րագայից ստիպելէն ազգ մը բաժին բաժին ըլլա-
 լով՝ իր լեզուին պահպանութեանն ու զարգաց-
 մանը մէկ դիաց մեծ արգելքներ դէմ կ'ելեն.

սակայն ազգին վրայ սէր ունեցողը՝ պարագայից ներածին շափ պարտական է իր դիաց ամէն փոյթն ու քանքն ի գործ դնել՝ որ իր լեզուն չխանդարուի, չփոփոխուի ու մանաւանդ բոլորովին չանշքանայ ու չկորսուի: Քաղաքականացեալ ազգաց մէջ հաստատուն սկիզբ մըն է՝ որ իր ազգին վրայ սէր ու համարում ունեցող մարդն՝ անոր լեզուին վրայ ալ սէր ու յարգ կ'ունենայ, անիկա հիմամբ սորվելու եւ գիանալու չիհեղգար, ու անոր պահպանութեանն ու ծաղկելուն համար կրցածին շափ կ'աշխատի:

Աս խօսքիս իրաւացի ըլլալը յայտնի կը հասկընայ՝ ո՛վ որ Ազգաց պատմութիւնները մտադրութեամբ կարդալով կը տեսնէ՝ որ (արտաքին ստիպող հարկ կամ բռնութիւն չըլլալով)՝ ազգ մը ան ատեն կը սկսի օտար ազգաց լեզուները խօսիլ ու գործածել, երբ որ իր ազգին վրայ ունեցած համարումը պահսելով ու իր նախնեաց բարի սովորութիւններուն վրայ մեծարանքը կորսունցընելով՝ ուրիշ ազգաց ինչ եւ իցէ կարգերն ու սովորութիւնները թեթեւամտութեամբ առնելու եւ բանեցընելու կը յօժարի: Երբ որ Յոյներն իրենց արհեստներն ու մօլութիւնները Հռոմ խոթեցին, յունարէն լեզուն լատիներէնի հետ գրեթէ հաւասար յարգ ունենալ սկսաւ ան թեթեւամիտ ու մեղկ Հռոմայեցիներուն մէջ, որոնց սիրտը հեշտասէր Ատտիկէի պերճութիւններն ու շքեղութիւնները յափշտակած էին: Այսպէս նա եւ Եւրոպայի քանի մը ազգաց մէջ կը գտնենք անանկ ատեններ՝ որ օտար ազգաց սովորութիւններն առթով մը իրենց մէջ մտնելով, նաեւ անոնց լեզուն ալ իրենց առջեւը յարգ գտած է, ու իբր թէ բարձրագոյն կարգերու մարդկան մէջ կրթութեան կամ բարակ քաղաքավարութեան նշան մը սեպուած է ան լեզուն սորվիլն ու խօսիլը: Ինչպէս տասնումէկերորդ դարէն ետքը Փրո-

վանսի սովորութիւնները բոլոր հարաւային եւրոպայի մէջ տարածուելով՝ անոր լեզուն ալ սկըսաւ յարգ գտնել ու մշակուիլ։ Առջնպէս եւ Փրանկիսկոս Ա. Գաղղիայի թագաւորին ատենն իտալիայի բարակ արհեստները Գաղղիա մտնելով ու ետքէն քանի մը իտալացի իշխանուհիներ ալ Գաղղիայի իշխանաց հետ ամուսնանալով, իտալերէն լեզուն սկսաւ Գաղղիայի մէջ յարգ ու գործածութիւն գտնել։ Այս ամենայն վերը գրած խօսքերնիս կը հաստատեն թէ ցորչափ ազգ մը իր պատուական հայրենի սովորութիւններն օտար ազգաց սովորութեանցը հետ չիփոխեր, իր մայրենի լեզուն ալ հաստատ կը պահէ ու աւելի կը յարգէ ու կը մշակէ. իսկ երբ որ նորասիրութիւնն օտար ազգաց ինչ եւ իցէ սովորութիւններն ազգայնոց մէջ կը բերէ կը խոթէ՝ անոնց լեզուներն ալ ազգային լեզուին յարգն ու սէրը կը նուազցընեն, որով եւ լեզուին մշակութիւնն ու զարգացումն ետք կը մնայ։

Այս ամենայն ընդհանրապէս ծանուցանելէն ետքը՝ համառօտիւ տեսութիւն մ'ընենք հին ու նոր ազգաց իրենց յատուկ ազգային լեզուն պահելու, մշակելու եւ ծաղկեցընելու համար ունեցած խնամքին վրայ։



ԳԼՈՒԽ Զ .

Հին պատմիչները լինելու պատճառով չեն հասնում
 ճշմարիտ հասկացմանը և չեն հասնում :

1. ԲՆԵՂՆԵՐԻՄ պատմութեան մեր առջև բաց
 ցած անպարեզներուն վրայ հին ու անուանի աղ-
 ցաց հետոցն ետեւէն միտուններնուս տեսութեամբ
 բը պարտած ատեննիս՝ չէ թէ միայն անոնց շա-
 տերուն փառաց յիշատակները պատերազմներու
 մէջ ցուցրցած քաջութիւններուն, յաղթանակ-
 ներուն եւ բրած աշխարհակալութիւններուն վրայ
 կը նշմարենք, հապա նաեւ իրենց վրայ ուրիշ
 գովութեան ու փառաւորութեան հանգամանքներ
 ու երևոյթներ կը նկատենք, որոնք յիրաւի
 մարդկեղէն հոգւոյն առանձին եղանակաւ մը պա-
 տիւ կ'ընեն ու անոր ազնուութիւնը կը բարձրա-
 ցընեն : Ըս կարգի փառաց ու գովութեան ար-
 ժանի առաւելութիւններուն մէջ կրնանք ամե-
 նայն իրաւամբք գտնել աս աղգաց՝ իրենց բուն
 աղգային լեզուաց վրայ ունեցած սերն ու յարգը,
 ու անոր պահպանութեան, գործածութեան ու
 պայծառութեան համար ցուցրցած հաստատուն
 ինտամբք :

Մեր հայ աղգին ու աղգային լեզուին նկատ-
 մամբ ըստ պատմութեան հայրենի հին պատմագի-
 րերնուս մէջ այն քիչ յիշատակներ կը գտնենք,
 բայց եղածները մեզի բաւական լոյս կու տան
 մեր նախեաց ու առաջին իշխողաց եւ թագաւո-
 րաց հայերէն լեզուին գործածութեան ու պահ-
 պանութեան վրայ ունեցած փոյթերնին տեսնելու
 համար : Ազգերնուս նախահօրը Հայկայ օրէն
 սկսելով ամէն նահապետներուն ու ցեղապետնե-
 րուն իրենց բնակած տեղերուն կամ շինած քա-
 ղաքներուն, աւաններուն ու նոյն իսկ գեղերուն,
 կամ աս ու ան տեղն եղած նշանաւոր յաղթու-
 թեան մը գեղքի մը յիշատակին համար սեպ-

Հական Հայերէն անուններ զնելը՝ (Հարք, Գե-
րեղմանք, Հայկաշէն, Փառախօտ, Յոլակերտ, Գե-
ղաբունի, Գառնի, Մաժաք, Տիգրանակերտ, և
այլն,) իրենց լեզուին վրայ ունեցած սէրն ու
համարումնին ցուցնել ուզելնուն նշան ու հաս-
տատութիւն մըն է: Հայկէն քիչ մը ետքը մեր
Արամ նահապետին՝ նոյն խիսկ Ասպարհովկացուց
Հայերէն լեզուն սորվիլ ու խօսիլ տալու մաս-
նաւոր խնամքը ստոյգ ապացոյց մըն է՝ որ նոյն
ատենները մեր նախնիք իրենց լեզուն շատ մեծա-
րոյ կը համարէին. ու թէ որ օտարաց կամ բուն
Հայաստանէն դուրս գտնուողներուն նոյնը մշակել
տալու փոյթ կը տանէին, որչափ ևս առաւել
բուն Հայրենի երկրին ու ազգին մէջ նոյնին պահ-
պանութեանը, գործածութեանն ու ծաղկելուն
մտադիր ու ժրածան եղած են: Աս բանիս հաս-
տատութեան վկայ կրնան ըլլալ այն Հայերէն
մաքուր լեզուով շարագրուած Գողթան երգերն,
ազգային զրոյցքներն ու առակներն, որոնց սկիզբն
անպայտ՝ բայց ստուգիւ քրիստոնէութեան ատե-
նէն շատ դարեր առաջ Հայ ժողովուրդեան բերա-
նը կը պարտէին, ու որոնց միայն քանի մը պա-
տուական մնացորդները Խորնոյ Տեղուն Մովսէս իր
պատմական դարանին մէջ ժողոված պահած ըլլա-
լով, անոնց քիչ շատ ճաշակը մեղի ալ նոյնները
շարագրողներուն իրենց մայրենի լեզուին վրայ
ունեցած խնամքը կը գուշակեն: Թող ուրիշ հին
մատենագրաց (Ագաթանգեղոսին, Փ. Բուզանդին,
Գ. Մագիստրոսին,) գրոց մէջ պահուած քանի
մը առակները կամ առակաւոր խօսքերը՝:

Աս ամենայն կ'ըսենք ազգերնուս շատ հին ժա-
մանակներուն կամ նախնագոյն դարերուն հա-
մար, երբ որ դեռ՝ Արշակունեաց տիրապետու-

¹ Մ. Խորեն. Պատմ. Հայ. Գի. Ա. Գլ. ԺԳ:

² Տես ատոնց վրայ առանձինն Հ. Յովսէփոյ Ա. Գաթրե-
նեան՝ «Պատմութ. Մատենագրութեան Հայոց», Հատ. Ա.
Տես նաեւ Պր. Մկրտչի Էփն՝ «Վեպք հոյն Հայաստանի»:

Թենէ շատ առաջ՝ (որ Աաղարշակի ատենը քրիստոսէ մէկ ու կէս դար առաջ սկսաւ,) բուն հայազգի իշխողք կամ Հայկազնեայք երկրին ու ազգին կը տիրէին ու անիկա կը կառավարէին: Եւ աս ժամանակները՝ հին պատմութեան տարածած աղօտ լուսոյն մէջ անանկ պարագաներ կը նշմարենք՝ որ նոյն իշխանաց ու տերանց եւ անոնց հետ բոլոր ազգին ալ տոհմային սեպհական լեզուին պահպանութեան ու գործածութեան համար խնամտա ու ժիր ըլլալը յայտնապէս կը ցուցնեն: Ինչու որ՝ աս բուն հայկազուն իշխողներէն ետքն ու առաջին արշակունի թագաւորներուն՝ Պարթեւաց ու Պարսից սովորութիւններովն ու թերեւս նաեւ լեզուովը՝ Հայաստանի տիրել սկսելէն առաջ՝ Մեծին Աղեքսանդրի յաջորդներուն կամ Աելեւկեանց թագաւորներուն հրամանաւը Հայաստանի վրայ կուսակալներ գրուած ատենը, (որոնք ետքէն թագաւորական անուն ու իշխանութիւն ալ առին,) Հայաստանի սահմանները մեծնալով՝ կամ իրեն հետ ուրիշ դրացի երկիրներ ալ միանալով՝ ազգային լեզուն այն եկամուտ ժողովուրդներուն բերանն ալ կը խօսուէր. մինչեւ՝ ըստ Ստրաբոնի՝՝ ամենքն ալ մէկ լեզու մէկ բարբառ կը գործածէին: Ասիկակ ալ հաստատուն վկայութիւն մըն է ազգային լեզուին մեծ խնամքով պահուած ըլլալուն եւ ամէն ժամանակ կենդանի գործածութեան մէջ գտնուելուն համար:

Մտնցմէ աւելի՝ հայ լեզուին անընդհատ գործածութեան՝ մանաւանդ թէ ի ծաղկի ու պայծառութեան մէջ մնալուն համար մեր նախնեաց ունեցած խնամքին յայտնի ապացոյց ու վաւերական վկայութիւն մը պէտք է սեպել այս պարագան՝ որ հայերէն սեպհական գրութեամբ ու նշանագրերով գրքեր շարագրուելու ու թարգմա-

¹ Երկրագրութ. Գի. ՅԱ. ԳԼ. 528.

նուսելու սկսուած ատեն՝ լեզուն իր կատարելութեան՝ կրնանք ըսել՝ ամենաբարձր աստիճանը կամ կատարը հասած էր: (Ազգաթանգեղաները,) Սահակները, Մեսրոպները, Եղնիկները, Կորիւնները, եւ այլն, նոյն լեզուն ամէն հանգամանօք կատարեալ կերպարանքի մէջ գտնելով՝ ամէն դէպքերը, մտածութիւններն ու պարագաներն անով յաջողակի գրի կ'աւանդէին: Աեզուի մը իր գրականութեան առաջին դարուն մէջ՝ մանաւանդ թէ անոր սկզբան ժամանակներն աս աստիճանի կատարելութեամբ յերեւան գալը բնաւ տարակուսի մը տեղի չիձգեր՝ իր պահպանութեանն ու մշակութեանը վրայ ազգին մէջ ամէն ժամանակ բանեցուած խնամքին ու զգուշութեան նկատմամբ: Մեր ազգային պատմութեան հին յիշատակարաններն ու հեղինակները կարեւոր հմտութեամբ ու մտադրութեամբ կարդացողներն ու տոհմային լեզուներնուս վրայ գիտնական քննութիւններ ընողներն աս բանիս վրայ անձամբ համոզուելով՝ խօսքերնուս ճշմարտութեան չէ թէ միայն համախոհ հապա նաեւ վրայ ու պաշտպան կրնան ըլլալ: —

2. Հոռմայեցիք իրենց լեզուին վրայ ունեցած համարումն ու սէրը գլխաւորաբար անոր պահպանութեանը մէջ կը ցուցրնէին: Իրենց զաւկրներն օրոցի մէջ եղած ատեն՝ ու լեզունին բացուիլ սկսելու ժամանակները ծնողաց խնամքը վրանին կ'երեւար մայրենի լեզունին անոնց սորվեցրնելու համար: Մայրերը, դպեակներն ու տան մէջ ըլլող ամէն անձինք պարտական էին ու կը ջանային տղոց հետ մաքուր լեզուաւ խօսելու, որպէս զի իրենց լեզուն հիմամբ սորվելու սկսին. ու քիչ մը մեծնալէն ետքը մասնաւոր հմտա վարպետներ այն լեզուին կրթութեանը համար տղոց վրայ ամէն փոյթն ու ջանքն ի գործ կը դնէին: Ատիներէնին հետ յունարէնն ալ սոր-

վեցրնելու սովորութիւնը մտնելէն ետքն ալ, մա-
նաւանդ հասարակապետութեան ետքի ատենները
մեծամեծաց մէջ, լատին լեզուն միշտ առաջին ու
աւելի մեծարոյ բռնելու կը զգուշանային: Այս-
պէս ամէն Հռոմայեցի մատաղ հասակի մէջ սկսե-
լով իր լեզուին վրայ իր մեծերուն այսչափ սէրն
ու խնամքը տեսնել, ու ինքն ալ կանուխկեկ ա-
նոր մէջ կրթուելով, զարմանք չէ՛ որ Հռոմայեց-
ւոց մէջ հաստատուն կարծիք մ'եղած էր՝ թէ
օտարաց առջին իր մայրենի ազգային լեզուով
չխօսիլը՝ ազգն անպատիւ ընել է: —

3. Հռոմայեցիներէն շատ աւելի ու առաջ
Յունաց իրենց մայրենի լեզուին վրայ ունեցած
սիրոյն ու խնամոց պատմական՝ քարափոր ու
գրաւոր յիշատակարաններն անթիւ անհամար
են: Շին ազգաց մէջ աս երկու ամենէն աւելի
կրթեալ ու հռչակաւոր ազգերուն՝ Յունաց ու
Հռոմայեցւոց՝ իրենց սեպհական լեզուն չէ թէ
միայն ծաղկեցրնելու՝ հապա նաև տարածելու եւ
երկրիս վրայ տիրող լեզու ընելու համար՝ իրարու
հակառակ աշխատելուն հին պատմութեանց թեր-
թերը կը վկայեն: Ճիւղպոն անգղիացի պատմա-
գիրն աս կտորիս վրայ առանձինն խորհրդածու-
թիւններ ընելով կը ցուցրնէ՝ թէ ինչպէս աշ-
խարհքիս աս երկու կրթեալ ու համբաւաւոր
հին ազգերն իրարու հետ շատ ատեն մաքառե-
ցան՝ ամէն տեղ ուսման ու տիրող իմաստութեան
փառքը մէկը մէկալէն առնելու եւ իր լեզուին
սեպհականելով անիկայ տիրող լեզու ընելու հա-
մար: «Հռոմայեցիք, կ'ըսէ աս մատենագիրը՝,
լեզուի մը ազգային բարուց ու վարմանց վրայ մեծ
ազդեցութիւն ունենալուն նկատմամբ այնպէս հա-
մազուած էին, որ իրենց պինդ ծանր ու մեծ
մտմտութներուն եւ ջանքերուն մէկն՝ իրենց զէն-
քերուն զօրութեանը ու իրենց իշխանութեանը

¹ Պատմ. անկանելոյ ինքնակալ. Հռոմ. Հատ. Ե. ԳԼ. Բ՝

Հետ նաև իրենց լատինական լեզուն տարածելն էր. անանկ որ կամաց կամաց Կաթալիայի Հին բարաոները, կամ մասնաւոր գաւառական լեզուները, Սարինացւոցը, Կարուպացւոցն ու Վենետացւոցը մոռցուեցան, : Բայց թէպէտ եւ ասանկ մէկ ընդարձակ պետութեան տէր էին, ու աս մեծութիւննին Ափրիկէէն մինչեւ Բրիտանիա տարածեր էին, սակայն չիրցան ո՛չ քաղցր ու հրապուրիչ միջոցներով ու ո՛չ զօրաւոր ու բռնական հնարքներով Յոյները համոզել ու ստիպել որ ան լեզուն սորվին ու բանեցրնեն: «Աս կարիս մէջ բոլոր հռոմէական պետութիւնն երկու գաս բաժնուած էր. եւ այս բաժանումը թէպէտ եւ ցորչափ որ Հռոմացեաց պետութիւնն իր փառացն ու պերճութեանը խիստ մեծ պայծաութեանը մէջ կը գանուէր՝ միշտ գաղտուկ ու անձանօթ մնացած էր. բայց երբոր տկարութեան ստուերներն անոր պայծաութիւնը մթնցունել սկսան, այդ բաժանումն ալ աւելի եւս յայտնի տեսնուելու ու զօրանալու սկսաւ: Արեւմտեան երկիրներն ու ազգերն իրենց կրթութիւնն ու քաղաքաւարութիւնն ընդունեցան ան տիրապետողներէն, որոնք իրենց յաղթած ու զանուր իրենց իշխանութեանը տակ առած էին. եւ այն բարբարոս ազգերը յաղթուելէն ետքը շատ չանցաւ իրենց միտքն ալ սկսաւ դիտութեան ու կրթութեան լըցնն ու բարեբարութիւնները ընդունիլ ու վայելել. ուստի եւ Ափրիկիոսին ու Ափրիկոնին լեզուն՝ թէպէտ եւ իր մէջը քիչ մը տպականութիւն խառնուելով՝ որն որ անխորշելի էր՝ անանկ ընդհանուր գործածութիւն մը գտաւ Ափրիկէի, (առաւելապէս Կարկեզոնի,) Սպանիայի, Գաղղիայի, Բրիտանիայի ու Պաննոնիայի մէջ, որ միայն լեռներու վրայ ու պինդ հեռու գեղերու կոպիտ բնակչացը մէջ հին պունիկեան ու կեղտեան լեզուներու տկար մնացորդները պա-

Հուեցան: Արժուժիւնն եւ ուսումն ան երկիր-
ներուն բուն բնակչացը սրտին մէջ Հոռմայեց-
ւոց զգացմունքը անզգալարար խոթեցին, ու Ի-
տալիան իր լատինական գաւառականներուն չէ թէ
միայն օրէնքներ տուաւ, հապա անոնց վրայ իր
նկարագիրը (բարուց կերպն) ալ ապաւորեց,:

4. «Իսկ Յունաց հետ առ բանը բոլորովին տար-
բեր կերպով գնաց: Ասոնց ճաշակն ու կրթու-
թիւնն այնչափ աղէկ կարգաւորած էր, որ ան-
հնարին բան մըն էր զիրենք շարժել ու համա-
զել՝ որ իրենց սեպհական լեզուն թողուն եւ
օտար լեզու կամ յորինուած մը բնգունելու խո-
նարհին: Ասոնք իրենց նախնեաց առարկութիւն-
ներն ու քաջութիւնը կորսունցընելէն ետքն՝ ա-
նոնց լեզուն ու սովորութիւնները ճշգրութեամբ
ու նախանձախնդրութեամբ պահեցին: Աւ թէ-
պէտ եւ ստիպուած էին իրենց նոր աէրերուն՝ այս-
ինքն Հոռմայեցիներուն բարձրագոյն զօրութիւնն
ու խոհեմութիւնը ճանչնալու, բայց յայանի կեր-
պով կը ցուցընէին՝ որ անոնց կոպիտ վարմունքն
ու սովորութիւնները կ'արհամարհեն: Աս բանիս
աւելի եւս կը յորդորուէին յիշելով՝ որ յունա-
կան լեզուին եւ զգացմանց ազդեցութիւնը միայն
բուն Յունաստանի նեղ սահմաններուն մէջ փա-
կուած չէր, հապա իր ուժն ի սկզբանէ հետեւ ե-
ղած յունական գաղթականութիւններով ու աշ-
խարհակալութիւններով՝ Ադրիական ծովուն ե-
զերքէն մինչեւ Եփրատաց ու Նեղոսի ափունքը
տարածուած է: Նաեւ գիտէին՝ որ Ասիայի, Աստ-
րիի ու Ազիպատոսի մէջ շատ յունական քաղաք-
ներ կային, որոնց մէջ Յունաց լեզուն ու սովո-
րութիւնները կը պահուէին. ուր եւ մեծամեծ ու
փառաւոր պաշտաներու մէջ թագաւորներն ու
իշխաններն աստիկեցի շքեղութիւնը արեւելեան
պերճութեան հետ կը միաւորէին,»: Ասոր հա-
մաձայն կը խօսի նաեւ Յ. Անարէս խաղացի բա-

նասերն ու պատմիչը, Յոյներուն՝ ուսումնական կրթութեան ու գրականութեան կողմանէ՝ Հռոմայեցւոց վրայ ունեցած առաւելութիւնը յիշած ատենը: «Յունաստան, կ'ըսէ՝, հռոմէական զինուոց զօրութեամբը յաղթուելէն ետքը, իրեն ուսմունքովն իր այն ահաւոր Յաղթողն իրեն հպատակ ու գերի ըրաւ. ու երբոր Հռոմ իր քաղաքային կարգերովը զՅունաստան իր տիրապետութեանը տակ կը համարէր, յունական գրականութիւնը բոլոր հռոմէական ինքնակալութիւնն իրեն մէկ գաւառը՝ (իր ազգեցութեանը տակ ըլլող ազգերուն մէկը) կը սեպէր,»: Այսպիսի տեսութեամբ ու մտածութեամբ միշտ անանկ հաստատուն մտքով կը հակադրուէին Յոյնը լատին լեզուն գործածելու, որ իրենց փիլիսոփաներուն մէջէն նոյն իսկ անոնք՝ որոնք երկայն ատեն Հռոմ կեցան, ինչպէս ի մէջ այլոց Պլուտարքոս, որ անուանի Հռոմայեցիներուն վարքը գրեց, քիչ կամ ոչ ինչ ծանօթութիւն ունէին լատին լեզուի:

5. Ասանկով Յոյները Հռոմայեցւոց իշխանութեանը տակ իյնալէն ետքն՝ իրենց ազգային ոգին ու բնաւորութիւնը պահեցին. ու ամէն կերպով ջանացին անոնց լեզուին ծառայ չըլլալու, այսինքն իրենց մայրենի լեզուն միշտ ծաղկած ու մեծարոյ պահելու. անանկ որ իրենց իշխողներն իսկ ստիպեցին՝ աս կտորիս մէջ նոյն իսկ իրենց հաստատուն ազգայնութենէ կերպով մը խոտորելու: Յիրաւի զարմանալի բան մըն է՝ որ Ատինայեցւոց մէջէն մեծամեծ մարդիկ՝ որոնք լատինական գաւառներէն դուրս ըլլող ժողովրդեան առջեւն ալ փառաւոր ու յարգոյ երեւալու փափագ ու ջանք ունէին, իրենց ըրած երեւելի գործքերուն վրայ գրուած Պատմութեանց գրքերուն ու Յիշատակարաններուն մէջ (որոնք իրենք անձամբ գրեցին,

¹ Վասն սկզբան, զարգանալոյ, եւ այլն, համօրէն գրականութեան: Հատ. Ա. ԳԼ. 2:

աւախարութեան գործքերուն մէջ անխափան ու հաստատուն պահուեցաւ: Եւստի լատին լեզուին ու ճարտարախօսութեան հայրն ու գլուխը Աիկերոն՝ որ իր հիւպատոսութեան պատմութիւնը Ատտիկեցւոց լեզուովը շարագրեց, ու իր Ատտիկոս բարեկամին մասնաւորապէս յանձնեց որ անոր ոճը սրբադրէ ու շխտէ, բոլոր իր կեանքին մէջ ջանաց ու աշխատեցաւ իր յատուկ լատին լեզուն ճոխացընելու, այնուացընելու եւ տարածելու: Աւուկուլլոս՝ որ միօրինակ կը բաղձար թէ Յունաց առջին փառք ու պատիւ ունենայու ու թէ միշտ իրրեւ այր արգարեւ Խաալացի ճանչցուելու՝ իր ըրած երեւելի պատերազմներուն վրայ յոյն լեզուաւ գրած Յիշատակարաններուն մէջ զարմանալի մտածութեամբ մը աշխատեցաւ բարբարոսական կամ օտար ոճեր խառնելու, որպէս զի ցուցընէ թէ յունական ոճին վրայ ամենեւին հոգ չխտանիր եւ յոյն լեզուն չկյարգեր: —

Արիշ հին ազգաց, ինչպէս Ազխպատացւոց, Ասորւոց, Պարսից, եւ արիշներուն, աս կտորիս մէջ ունեցած փոյթն երկայն խօսքերով շէնք յիշեր: Միայն աս կ'ըսենք՝ որ թէ Ազխպատացիք ու թէ Ասորիք մեծ փոյթ ունեցան իրենց մայրենի լեզուն հաստատ ու անկորուստ պահելու, ու Ազխպատի մէջ ըլլող ժողովուրդներն ոչ երբեք բաղձանք ունեցան իրենց լեզուն թող աւելով ու Հռովմայեցւոց լեզուին մէջ վարժելով՝ հռոմեական քաղաքացիութեան պատուոյն արժանի ըլլալու:

¹ Զէ թէ միայն Մեծին Կոստանդիանոսի ու իր մասաւոր յաջորդներուն աստեճները, հապա նաեւ ետրերն ալ մնչեւ Բիզանդեան կայսերաց ժամանակներն՝ ինքնակազմ հրատարակական աստեճախօսութիւննին, նոյն իսկ միայն յոյն ու ասորի լեզու հասկըցող կայսերապետաց ժողովներուն մէջ, լատին լեզուով կը խօսէին, ու անանց յաճարեն թարգմանութիւնն ետրեն ուրիշ մը ժողովականաց առջին կ'երկրորդեր:

Քրիստի Ի .

Եւրոպայի իրենց մայրենի լեզուները պահպանելու, զարգացրնելու եւ զարգարելու համար ցուցրցած խնամքին վրայ խօսելէն առաջ՝ Եւրոպայի առանձնական կամ ազգային բարբառներուն ընթացքին կամ դորձածութեան մէջ տասնուչորսերորդ դարուն սկիզբէն ետքը գիտնոց ջանքովն եղած երեւելի փոփոխութեան վրայ համառօտ տեսութիւն մ'ընենք :

Մինչեւ աս յիշեալ դարուն սկիզբները՝ գիտութեանց՝ դրոց ու գպրոցներու մէջ $\frac{1}{2}$ $\frac{1}{2}$ լեզուն լեզուն իջ տէրէր . միայն անով վարժապետներն եւ ուսուցիչները գիտութիւններն եւ ուսմունքն իրենց աշկերաններուն կ'աւանդէին ու կը հաղորդէին : Սոյնպէս ամէն քաղաքական, եկեղեցական, գիտնական եւ ուսումնական դորձքերու եւ գրուածքներու մէջ մինակ աս լեզուով ամէն բան կը լիննար : Միայն բանաստեղծութեան մէջ ամէն մէկ ցեղի կամ ազգի առանձին բարբառը կը դորձածուէր : Բայց շորեքտասաներորդ դարուն սկիզբներն այսպիսի կապանքն՝ ինչպէս ուրիշ մտաւոր արդեանց ու արտադրութեանց մէջ՝ նոյնպէս ազգային բարբառներու մէջ ալ քակուեցան, ու ամէն ազգ սկսաւ աս կողմանէ ազգային հոգւոյն եռանդամբը նոր մտաւորական կեանք մը ստանալ : Գիտութիւններն՝ արհեստներն ու առաւելապէս առանձնական լեզուներն ամէն մէկ ազգի մէջ մասնաւոր ազգային դրոշմ մը ստանալու սկսան : Գիտութիւններն աւանդելու կերպին մէջ մինչեւ ան աստէն սովորական ու իրր օրէնք եղած ընթացքը թողուեցաւ ու ամէն մէկ ազգին առանձին հանգամանացը համեմատ ընթացք մը

բունուելու սկիզբ եղաւ: Անկից ետքն ազգաց մէջ ջանք ու գրգիռ մը մտաւ ամէն ուսումնական ու գրաւոր յօրինուածներն ազգային յատուկ լեզուա-կարգելու, բացատրելու եւ հասարակաց առջին հանելու, բայց լեզուն միշտ յղկելով ու մաքրելով: Պատմագիրներն ու ժամանակագիրներն ամենէն առաջ սկսան լատին լեզուն թողուլ ու իրենց պատմութեանց գրքերն ու ժամանակագրութիւններն իրենց ժողովրդեան կամ ազգին բարբառովը գրել: Աս նորոգութիւնը՝ կամ նոր ընթացքը բաց ի հիւսիսային Վաղղիայէն՝ առանձինն ամենէն առաջ ու գրեթէ ամենէն աւելի եռանդով ու խնամքով Իտալիայի մէջ սկսուեցաւ:

Աս բանիս մէջ երկու մատենագիրներու կամ պատմագիրներու, Տինտս Քոմբանեիին († 1323.) ու Յովհաննէս Ալիլանիին († 1348.) անունները շատ հռչակաւոր եղան, ու մինչեւ հիմակ ալ իրենց ոճին համար իրենց մայրենի երկրին մէջ մեծ համբաւ ունին¹: Ասոնց երկուքն ալ մեծամուն ճանդէ բանաստեղծին ետքի ժամանակակիցներն են, որոնք իրեն օրինակին հետեւեցան, կամ թէ բունը՝ իրեն օրինակէն յորդորուեցան ու հոգի առին. վասն զի յատկապէս ասիական է գլխաւոր յօրինիչ կամ նորոգիչ իտալական լեզուին: Մինչեւ ճանդէի ատենը թէ արձակ գրուածներու մէջ ու թէ բանաստեղծական շարքով կամ ստանաւոր խօսքերու մէջ կերպ կերպ մասնաւոր բար-

¹ Յերոն. Գիրապոսի իտալացի պատմագիրը՝ (Պ-ՄՂ. Գլ-խն. Ի-Մ-Լ. Մ-Բ. Գ՛-Բ. ԳԼ. Չ. Հ-Ղ. ԺԲ.—ԺԳ.) առ երկու մատենագիրներուն վրայ խոսած ասանն ասալինին համար կ'ըսէ. «Իրաւցքնէ շատ կը գոգոտի իր բանեցուցած լեզուն մաքրութիւնն ու գեղեմութիւնը»: Իսկ երկրորդին համար կ'ըսէ. «Ալիլանիին պատմութիւնը միշտ մեծ յարգ ունեցաւ եւ ամեն ասան պիտ'որ ունենայ իր ոճոյն մաքրութեանն ու գեղեմութեանը պատճառաւ»: Աս ասանկ կ'ըսէ Գիրապոսի մասնաւորապէս անոր համար՝ որ առ երկու մատենագիրներն իրենցմ յառաջ գրող հեղինակներուն անարգ ու կոշտ ոճն մկանց մկգի կեցան ու իտալական մաքուր ոճին սկիզբ ըրին:

բաւներ՝ ըստ մասին Կաթիկոսի քաղաքներուն, ըստ մասին ալ անոր մասնաւոր երկիրներուն՝ Հաւասար իրաւունք ու մի եւ նոյն ուժն ունէին: Յիրաւի յատուկ ժամանակագիրները Տանդէէն ետքն ալ Բառուպի, Ալենեաիկի, Ամսպարտիկոսի ու Սիկի- լիայի բարբառներով կը գրէին, սակայն բուն պատ- մագիրներն ու բանաստեղծներն անոր ատենէն սկսելով իտալական մարուր լեզուն նախամեծար կ'ընէին: Աղաւաղական արհեստները, յատկապէս բանաստեղծութեան արհեստն Կաթիկոսի մէջ Աղ- զայնոց յաղժութիւնն որոշեց ու հաստատեց¹:

¹ Մեր նպատակէն դուրս չելլելու համար հաս մասնաւոր երկայն խօսքերով չենք ուզեր քննել ու մեկնել թէ էին- պէս Արհեստն ու Աղզայնութիւնն իրար փոփոխակի կը յորինեն, կը բարձրացնեն ու յառաջադէմ կ'ընեն: Միայն ի հարեւանցի կ'ըսենք՝ որ Արհեստն ուրիշ բան չ'ըլլայ եթէ գաղափարէն ու մարին ընդհանուր պետութենէ ծնած արդիւնք մը, որն որ առանց աղզային ոգւոյ, օրէն- քի, կերպի ու գրոշմի չիկրնար ապրիլ ու տեսլ. ար- հեստը՝ յատկապէս խօսելով՝ առաջ անհասկ կամ առան- ձին անձէ մը իր գոյութիւնը կը սկսի ու ետքն ազգին մէջ կը յորինուի ու իր բուն կերպարանը կ'ընդունի. ուստի եւ իրաւամբք կրնայ ըսուիլ՝ որ արհեստն առանձին անձի մը ու բոլոր աղզային ոգւոյն լեզուն է: Գարձեալ ոչ որ կը տարակուսի թէ ամեն քաղաքային ու բարձրա- զոյն ազնուական կրթութիւնն մէկ զախճան կամ նպատակ ունի, որ է ընդհանուր մարդկութեան ի մասնաւորի (այս- ինքն ազգի մը մէջ) յառաջագիտութիւնը: Այսպիսի կրթու- թեան կերպերն (իր գործադրութեան միջնորդներն) են՝ գրականութիւնն ու արհեստը: Արդ այս կերպերն ամեն տեղ (ամեն ազգի մէջ) նոյն չեն կրնար ըլլալ: Ամեն մէկ քաղաքականացեալ ազգ կրթութեան մէջ յառաջադէմ կ'ըլլայ ու կը կատարելագործի իր երկրին օգարամոնին ու բնական հանդամանացն եւ իր ցեղին սեպհական նկարա- գրին համեմատ. որով եւ իր լեզուն, գրականութիւնն ու արհեստներն հարկաւորապէս յատուկ ուղիով տեղ կամ գրոշմ մը կ'ընդունին: Ասոր համար այն ազգն՝ որուն մէջ ըլլալ արհեստն ու գիտութիւնը սեպհական կերպէն (աղզայնութենէ) զուրկ են՝ ներքին կեանք չունի: Այս- պիսի ազգ մը՝ ինչպէս կ'ըսուի՝ գրամ ու կնիք կոխելու իրաւունքն օտարի առած է, ու իր ամեն արտադրու- թեանցը կամ արդեանցը վրայ իր սեպհական կերպն կամ պատկերին տեղ ուրիշի պատկերը կը գրոշմ, որով եւ իր ուսումնական կամ արուեստական արդիւնքը (գործու- ձը) սկզբնական (աղզային) չըլլար, հասցա միայն նմանա- զութեան (գաղափարեալ) գործ մը կ'ըլլայ:

Հոս՝ երեքտասաներորդ դարուն ետքի կէսէն սկսելով բայց աւելի չորեքտասաներորդ դարուն սկիզբներն՝ ազգային միութիւն մը կազմուեցաւ, որն որ կրնայ ըսուիլ՝ թէ աւելի ոգւոյն ներքին սահմանին մէջ քան թէ երկրին արտաքին կերպարութեանը կամ կարգարարութեանցը մէջ ծագեցաւ, ամէն բան իրեն ետեւէն քաշեց ու ամէն բանի իր սեպհականութեան կնիքը դրոշմեց: Խտալացւոց ճարտարապետութիւնը, քանդակագործութիւնը, նկարչութիւնը, բանաստեղծութիւնն ու պատմագրութիւնն աւանդութեան կամ սովորութեամբ պահուած անյարմար կարգերու գերութենէ ու մեռած նմանողութեան կապանքէն զիրենք ազատեցին: Բայց ամենէն աւելի բանաստեղծութիւնն ու լեզուաց կազմութիւնը յառաջեցին, որոնք Խտալացւոց նոր ազգային ոգւոյն ազատական արհեստներու մէջ ըրած յառաջադիմութեան պսակն եղան:

2. Հատ նշանաւոր բան է աս չորեքտասաներորդ դարէն ետքն Եւրոպայի լեզուներուն բոլոր հոռմեական ու գերմանական երկիրներու մէջ նոր կերպարանք ու շարժում մը ստանալը: Աս բանիս ընթացքն ասանկ կրնանք նշանակել. մէկ ժողովրդեան՝ կամ ցեղի մը յատուկ բարբառը՝ քաղաքային կարգով կամ օրէնքով ուրիշէն զատուած երկրի կամ սահմանի մէջ՝ իրեն ազգակից ու դրացի ըլլող ժողովրդեան բարբառէն իրեն պակասածն առնելով հարստութիւն մը կը ստանար, որով բոլոր՝ ըստ սկզբան միացեալ ազգին մէջ ան լեզուն գերադունութիւն ու տէրութիւն կամ իշխողութիւն կ'ունենար՝ առաւելապէս կրթեալ եւ ուսումնական անձանց գրուածքներովն ու խօսուածքովը: Աս կարգով ու ընթացքով թէ քաղաքային կամ տէրութեան կերպէն ու թէ ազգային լեզուին ըստ կարգի ու կանոնի կազմուելէն իւրաքանչիւր ազգի մէջ մտաւոր

Հասարակորդութիւն կամ միարանութիւն մը ծագեցաւ, որուն Ազգայնութիւն կ'ըսենք: Աս ամէն լեզուներուն աս ընթացքով յօրինուիլը՝ կամ զատ զատ կարգաւորուելով յառաջ երթալը տեսնուեցաւ Սպանիայի, Գաղղիայի, Անգղիայի, Սքանտինաւեան տէրութիւններու եւ Վերմանիայի մէջ: Բայց ամենէն աւելի Իտալիայի մէջ ազգային լեզուն գիտնական կարգով յօրինուեցաւ ու մաքրուեցաւ, ինչպէս յառաջ ըսինք, առաւելագէտ Տանդէին ու իր բարեկամներուն ժողովքին ջանքովը: Աս բանիս մէջ Տանդէ մասնաւորապէս Տոսկանայի ժողովրդեան բերնին կը նայէր, ու իր ազգային լեզուին մաքրութեան հիմն ալ անկից առաւ ու ըստ այնմ՝ անիկայ կարգաւորեց, վասն զի՝ ինչպէս ինքն իսկ կ'ըսէ՝ տոսկանացի բարբառն Իտալիայի այլ եւ այլ բարբառներուն պինդ ընտիր մասերէն կազմուած է՝:

Արդ՝ թէպէտ եւ լեզուաց կամ բարբառներու նորոգութիւնը կամ յառաջադիմութիւնն Եւրո-

¹ Տարակից չկայ որ Տանդէին՝ իտալական լեզուն մաքրելու եւ կարգաւորելու համար՝ քաշած աշխատութիւնը բոլոր պարագայ ու անպատեղ պիտ'որ ըլլար եւ ընդունելութիւն կամ յաջողութիւն պիտ'որ չդանէր, թէ որ իր այն սրանչելի բանաստեղծական գործքն՝ որ «Գոստանդիստիստ», կամ «Երգերի զօր» Գոստանդիստիստ, (Տիւրքոս Գոստանդիստ) կ'անուանի, նոյն լեզուով գրած շքար: Ահա աս գրքին մէջ գիտութիւնը պինդ բարձր արհեստին հետ միանալով՝ իտալական լեզուին յազմութիւնը յաջողեցաւ: Աս գրքին կամ բանաստեղծական սրանչելի յօրինուածին մէջ, կ'ըսէ Յ. Գիբրալտարի: (Մէքէ իւ. Մոսկովն իւ. Գի. Գ. Գլ. Բ. Լ. Ե. Թ.) «Տանդէ առաջին եզաւ՝ որ համարակեցաւ . . . անանկ լեզուաւ մը խօսելու, որն որ մինչեւ ան ատեն ծանուցուած չէր, : Իտալիայի նոր գրականութեան ու լեզուին աս պայծառ աստղը՝ Տանդէ՝ դեռ անոր հորիզոնէն վար իջած չէր, († 1321.) նոր աստղ մը, Փրան. Բեզարբա, (Ծն. 1301.) ան զեղեցիկ հորիզոնին փոյ պահուաւ եւրեւալ, ու դեռ ասիկայ իր առջի շոգիւնը տարածելու շոգիւն՝ իրեն եկաւ հասաւ Երրորդ լուսաւոր մ'ալ, Յովհ. Բուրբաչիոյ, (Ծն. 1313.) ու աս երեք լուսաւորներն Իտալիայի մարտի լեզուին համար անանկ պայծառութիւն մը տարածեցին՝ որ ալ ամենեւին մթութիւն մը անոր փոյ չկրցաւ շոք ձգել:

պայի այլ եւ այլ ազգաց մէջ աս ընթացքով սկը-
սաւ, բայց անոնց ընդհանուր ծաղկիլն ու պայ-
ծառանալն այնչափ հսկայաբայլ ընթացք մը չու-
նեցաւ մինչեւ գրեթէ ութեւտասներորդ դարը:
Ուստի եւ աս դարուն սկիզբէն ետքն եղաւ ազ-
գային լեզուներու բուն պայծառութեան սկիզբն,
երբոր մտաւոր աշխատասիրութեանց ասպարէզին
վրայ նշանաւոր արդիւնքներով փառք ստանալու
եռանդն իրարու գրացի ըլլող եւ իրարու փա-
ռաց մասնակից ըլլալու աշխատող ազգաց ամէն
կարգերուն մէջ սկսաւ բորբոքիլ: Չկայ անանկ
ատեն մը՝ որ ամէն մէկ ազգ իր յատուկ ազգային
լեզուն մշակելու եւ պայծառացընելու համար այն-
չափ ջանք ու խնամք ցուցրցած ըլլայ՝ ինչպէս այս
ութեւտասներորդ դարը:¹

3. Վաղղիացիք իրենց Նուդովիկոս ԺԳ. մեծ-
անուն թագաւորին ատենէն սկսելով աս բանիս
մէջ իբր ասաջին կրնան սեպուիլ: Թէպէտ եւ
իրենց լեզուն ան ատենուան գրամատիկոսներուն
կամ գրագէտներուն ծանր շղթաներովը կապուած
էր, որոնք անոր յառաջադիմութեանն արգելք
կ'ըլլային. սակայն կրթեալ ճաշակ ունեցողները
զարմանալի ջանքով ու հոգատարութեամբ լեզուն
կարգաւորելու եւ պայծառացընելու ձեռք զար-
կին, ու մաքուր լեզուով գրող ու թարգմանող
մատենագիրներ սկսան ետեւէ ետեւ գաղղիական
գրագիտութիւնը ճոխացընել ու զարդարել: Ան-
կից ետքն ալ ամէն մեծանուն եւ իմաստուն մար-
դիկ, որոնք ամէն դարերու, ամէն երկիրներու
եւ ամէն լեզուներու մէջ խորունկ փիլիսոփայու-
թեան, զարդարուն բանաստեղծութեան, իմաս-
տալից գրութիւններու եւ ընտիր պատմութիւն-

¹ Եւ ութեւտասներորդ դարուն սկիզբէն ետքը մեր հոյերէն
լեզուին ու մանաւանդ գրականութեան ըրած յառաջա-
դիմութեան վրայ աս համառօտ գրուածքին մէջ չենք
ուզեր առանձինն դրել, յուսաւորով որ ատենին աս նի-
թին վրայ լի ու լի գրող կը գտնուի:

ներու հեղինակ եղած էին՝ սկսան ժիր ու վարպետ թարգմանչաց աշխատութեամբն ասանկ կրթութեամբ ազգի մը լեզուն խօսիլ: Անանկ ճոխ թագաւորի մը փառքովը հարստացած տերութիւնն, այն ազգին ընկերական բնութեան թիւեր, իր նորասիրութեան, պերճութեան ու բարակ քաղաքաւարութեան ոգին, մի եւ նոյն լեզուն խօսող ժողովրդեան ու ազգին բաղձամարդութիւնը, այս ամենայն եւ ուրիշ ասոր նման հանգամանքները պատճառ եղան գաղղիներէն լեզուին մէջ այնչափ մատեաններու եւ գրութեաններու շատնալուն: Աթէպէտ եւ աս մատեաններուն ամէնն ալ խորունկ ու գերազանց գրութեանքներ չեն, սակայն գոնէ կիրթ ոճով գրութեամբ ու հաճութեամբ կարգացուելու գրքեր են: Ասանկով ան ատենէն ի վեր գաղղիներէն լեզուն սկսաւ շարունակ մշակուիլ ու յառաջ տարուիլ. անանկ որ անկից ետեւ ալ օտար լեզու գործածող ու օտար լեզուով գրող գաղղիացի մատենագիր շատ ցանցառ կը գտնուէր. գտնուողներն ալ քանի մը ճարտարախօսութեան վարպետներ, իրաւագէտներ ու աստուածաբաններ էին, որոնք լատին լեզուով իրենց մատեանները կը գրէին:

4. Գաղղիացիներէն շատ ետք շինացին անոնց գրացի ու մշտնջենաւոր նախանձօրդ ըլլող Անգղիացիներն իրենց լեզուն ծաղկեցրնելու ու տարածելու մէջ. որն որ իր արտաբերութիւնը շատ դժուարին ըլլալուն, ու իր կաղմուածքն Եւրոպայի հարաւային կողման մէջ խօսուած լեզուններուն յօրինուածէն հեռու ըլլալուն՝ կրթեալ ազգաց մէջ սփռիլը շատ դժուարին էր: Սակայն իրենք անչափ աշխատութիւնով ու գովելի եռանդով անոր պայծառութեանը փոյթ տարին: Պէզն կամ Պագոն՝ ծանրաբարոյ Անգղիացւոց գլխաւոր ու խորին փիլիսոփաներուն մէկն՝ իր խորունկ մտածութիւններուն նիւթ ըրաւ անգղիներէն լեզուին

մշակութիւնը: Ենկից ետքն Ենդզիսացւոց բոլոր մատենագրութիւնն ու երեւելի մատենագիրներն աչքե անցրնելով ու քննելով, որոնք չէ թէ միայն քանաստեղծական նիւթեր, կամ հասարակ ժողովրդեան գործածութեանը համար գրքեր գրեցին, հապա քարձրագոյն նիւթերու ու գիտութեանց վրայ մատենաներ շարագրեցին, ինչպէս ի մէջ այլոց Նար, Ֆրանքլին, Կիւթըն, Եւ այլն, խիստ քիչ մատենագիր կը գտնենք՝ որ անգղիերէնէն զատ ուրիշ լեզու գործածած ըլլայ՝:

Ենդզիսացիք՝ իրենց մեծանուն Շեքսպիր քանաստեղծէն ետքն իրենց լեզուն այնչափ կատարելապարտեցին ու գոյելաջուցին՝ որ անուանի զերթմանցի լեզուալեւան ու քանաստեղծ Յակ. Կոփեմ անոր աստեղծութեանցք վրայ իր սան սանն կըսէ. - Քաղոր իք որտաղոց կարգի ոչեկան՝ ու որանչեքի կերպով յաջողած յարժանանութիւնն ու կատարեալ կազմութիւնն . . . Եւ քաղայի երկու պիտոյ պիտ լեզուներուն զերթմանակամին ու լատինականին զարմանալի մասարութեանն զուրս կըսու. - Եւ սա երկու լեզուց Ենդզիերէնի մէջ իրարու հետ ունեցած յարաբերութիւնը յայտնի է. զերթմաներէնն անոր զգալի կամ նիւթական զգուցեան հիմն ըստ ստուել մասն մատակարարած է: Իսկ լատիներէնն ոչեկան ընթանմանքները սուսն է: Եւ անգղիերէն լեզուն, որ նորագոյն ժամանակներու հին գասական քանաստեղծութեան հետ մրցող ամեն մեծ ու զերթանց քանաստեղծն այսինչն զՇեքսպիր մասն ու մեծցուց, կրնայ ամենայն իրասանք տեղեկրական քարքառ՝ համայնարքի լեզու անուանիլ, ու կ'երեւայ թէ ինչպէս Ենդզիսացիք նշնուէս Եւ Ենդզիերէնն ալ ապագայ ժամանակներու մէջ ակնի ընդարձակութեամբ երկրի ամեն զիւրք գործածարու համար սահմանած է: Եւ վերջին խոսքերուն շարժանցութեամբ զբացուած լըսուց յայտնի կ'իմանայ՝ ով որ աշխարհադրական տեղեկութիւններու ետեւ ըլլալով՝ անգղիերէնին երկրիս ամեն զիւրք մանուսանդ Եմերիկայի մէջ չէ թէ միայն մաս զանել հապա նաեւ զարմանալի կերպով մը ծաղկիւց կը տեսնէ: Ըստ միայն ի հարեանցի կը յիշենք՝ որ չէ թէ միայն Էնդիաստանի այլ Եւ այլ կողմերն ու Եւստրալիայի մէջ հապա նաեւ Եղլամանի Սփիւսմասին ու Խաղազական Ծովուն գրեթէ ամեն ծովեզերեաց քաղաքներուն մէջ ու Երեւելի կղզիներուն վրայ, (սա ամենին Սանտափիլեան ու Ֆիլիպի կղզիներուն վրայ, հարաւային Եմերիկայի Պուկուս-Եսթրեւ, Աւստրալիոյ ու Փամասի քաղաքները, ինչպէս նաեւ Ճեմաստանի Հանկըսկ ու Հանկայի քաղաքներն) անգղիական լրագիրներ կը ապուին. ու նոյն լեզուն սա երկրներու մէջ իք ամեն մարքութեամբ կը սորվուի ու կը մշակուի, մինչեւ մատենաներ ալ զուրս կ'ենեն:

5. Գերմանիայի մէջ գիտուններն ատեն մը լատիներէն կը խօսէին ու կը գրէին, մինչդեռ Գերմանացւոց լեզուն միայն հասարակ ժողովրդեան բերանն անարդ ու անզարդ մնացած ըլլալով՝ կոպիտ բարբառ մը կը սեպուէր, ու գիտութեանց մէջ երեւելի արդիւնք մը չունէր: Ինչ տխուր բան կ'ըլլար ասանկ երեւելի ու բազմամարդ ազգի մը համար՝ թէ որ իր մատենագիրները վարդապետական ու ծանր նիւթերու վրայ գրած ատեններն լատիներէն լեզուին գործածութիւնը շարունակէին, ինչպէս հնուց ի վեր կ'ըլլար, ու գողար եւ թեթեւ նիւթերու վրայ գրած ատեններն գաղղիներէն լեզուն գործածէին, ինչպէս նորասիրութեան փափագն կտրերը իրենց մէջ խոթելու սկսած էր: Անանկ մէկ տարածեալ ու օրէ օր կրթութեան մէջ առաջ գացող ազգի մը գրականութիւնն ու լեզուն ասանկ ողորմելի վիճակի մը մէջ մնալն անհնարին ու նախատելի բան էր. ուստի իր մէջն ըլլող գիտունները ձեռք զարկին իրենց լեզուն մշակելու, շիտկելու ու անով ամէն նիւթի վրայ գրելու. որով ելան ամէն նիւթի մէջ անուանի մատենագիրներ, բանաստեղծութեան, պատմութեան, գրականութեան, բանադատութեան, բնական գիտութիւններու, իրուագիտութեան, աստուածաբանութեան, մէկ խօսքով ըսեմ՝ գիտութեանց ամէն ճիւղերուն մէջ իմաստուն ու երեւելի գրիչներ, ու օրէ օր ալ անդադար կ'ելեն:

Աս լեզուն մինչեւ ութնամեաներորդ դարուն մէջերը յօրինուածոյն եւ ուղղագրութեան կողմանէ շատ պակասութիւններ ունէր. անկից կտրք սկսաւ շիտկուիլ՝ ծաղկիլ ու զարդարուիլ, աւելի գերմանացի հայր բանաստեղծից ջանքովն ու ճարտարութեամբը, որոնք են՝ Կէսներ, Գլոփշգոփ, Վիլանտ, Շիլլէռ, Կէօթէ, Լէսսինկ, եւ այլն: Ասոնց դարն եղաւ Գերմանացւոց լեզուին ոսկե-

զէն դարը . անկից ետքը լեզուին շարագրուածոյն
 եւ ուղղագրութեան մէջ միօրինակութիւն կամ
 հաստատուն միութիւն մը մտաւ ու գրեթէ ան-
 փոփոխ պահուեցաւ եւ յառաջագէժ կ'ըլլայ : Եւ
 այս լեզուի միութիւնը Վերամտօնացի շէ թէ միայն
 գրաւոր պայծառութեանը՝ հասպա նաեւ քաղա-
 քային հաստատութեանն՝ ամբողջութեանն ու յա-
 ռաջագիմութեանը պահպանն ու զարգացուցիչ
 եղաւ : Վերամտացոց ազգին իր վրայ եկող զրո-
 քախտ ժամանակներու մէջ միացեալ ու զօրաւոր
 մնալուն մեծ նպաստ եղաւ իրենց լեզուին այնչափ
 միջոցներու մէջ մի եւ միակերպ ըլլալը : «Ինչ
 կ'ըլլար մեր Վերամտօնան, կ'ըսէ գերամտացի մտաե-
 նագիր մը, թէ որ մենք այն աղետալի ատեններն՝
 երբ որ Ղուգոփիկոս շորեքտասաներօրոգին ու Ղա-
 բուէնին զօրութիւններէն այնչափ պարտութիւն-
 ներ կրեցինք, լեզուներնուս՝ ապագրութեան բա-
 րերարութեամբը ստացուած միութիւնը վայելե-
 լու շրջայինը» :

Յ. Առուստատան իսկ ու Ռուսաց Տիւսիսարնակ
 ազգը գրեթէ դարեւ մ'ի վեր ինչպէս ուրիշ ա-
 մէն կերպ փառաւորութեան նոյնպէս գրագիտա-
 կան եւ ուսումնական փառաց ու նշանաւորու-
 թեան փափագելով ու ետեւէ իյնալով, օտար
 լեզուները գործածելէն մեկզի կեցաւ, որոնցմով
 իրեն կրթութիւնը Յեծին Պետրոսի ժամանակէն
 սկսած էր. ու իրեն լեզուն մշակելով՝ սկսաւ
 եւրոպական գրականութեան պատուներն իրեն
 հետաւոր Տիւսիսական երկիրները փոխադրել, ու
 անոնց մէջ գանուող ընտիր ու պատուական մա-
 տեանները ուսերէնի թարգմանել : Աստարինէ
 Բ. կայսրուհւոյն (1762—1796.) ատենէն սկսած,
 որ թէպէտ եւ գերամտացի էր՝ բայց ուսերէն
 լեզուին ծաղկելուն փոյթ ունենալով ինք իրեն
 զանազան լեզուներէն ուսերէնի գրքեր կը թարգ-
 մանէր, Ռուսի լեզուն նոր կեանք ու պայծառութիւն

մը ստացաւ՝ նոյն տիկինը լեզուաց ուսման հա-
մար մասնաւոր դպրոց կամ Ակադեմիա մ'ալ հիմ-
նեց, (1783ին.) որուն մեծամեծ անձինք ու իշ-
խանաւորներ անդամ ըլլալով՝ գլխաւոր փոյթներ-
նին իրենց տոհմային լեզուն մտքելու, կատարե-
լագործելու եւ կանոնաւոր գրոց բարբառ ընելու
փոյց սկսան ցուցրնել: Օտար լեզուներ սորված
ու սորվել տուած ասեմնին՝ ջանքերնին նոյն լե-
զուներէն կարելու եւ օգտակար՝ բանասիրական
ու գիտնական գրքեր մտարուր ոճով ուսեցնելի
թարգմանելով ու թարգմանել տալով՝ իրենց
տոհմային գրականութիւնը հարստացրնել ու յա-
ռաջ տանիլ էր: Ասանկով աս մտացի ու եռան-
գուն կայսրուհւոյն օրինակն ու քաջալերութիւնը

¹ Աս ինչպիսի բարձրը չէ թէ միայն իր իշխանութեանը
տակ ըլլող գիտնոց ամեն կերպով յորդոր կու տար իրենց
մտքերնի լեզուն ծաղկեցրնելու փոյթ տանիլ, ու չէ թէ
միայն նոյնին պայծառութեանը համար անձամբ իր գրու-
մք կ'աշխատէր. հապա նաեւ իր գրաւոր արդիւնքը ուս-
եցրնել լեզուէն զուրս ուրիշ մեծագոյն լեզուագիտական
աշխատասիրութիւններու փոյց ալ կը տարածէր: Իր ըն-
դարձակ երկրին կառավարութեանը գործընտան ու հո-
գերուն մէջ ասեմ գտնելով՝ մեծ գործքի մը ձեռք գոր-
կու, պոյթներն՝ սյլ եւ սյլ լեզուաց համեմատութեան փոյց
ընտանական գրուած մը սկսաւ, ու անիկոյ ձեռքէն եկածին
շափ յառաջ կը տանէր: Առաջ ինչ մը ուսեցրնել բա-
ռերու ցուցակ մը լինեց, անոնց նշանակութիւնն սյլ եւ
սյլ լեզուներէն ժողովեց նշանակեց, ու ասոնց իրարու
հետ ունեցած նմանութիւնն ու ազգակցութիւնը նշա-
րելով՝ սկսաւ համեմատական ազգակցութիւնը յորինել: Բայց
պայտիտի գտնարին՝ ու երկոյն ժամանակի եւ անգրոց
գլխու մը կարաւ գործքը յառաջ տանիլը մնակ իրեն
անկարելի ըլլալով, յանձնեց ան ասեմուան գիտնոց մ-
քէն Բալլաս անուն գիտնոյ մը՝ որ անիկոյ յառաջ տանի,
կատարելագործէ եւ հրատարակելու պատրաստէ: Բալլաս
թէպէտ յանձն առաւ՝ նոյն գործքը՝ կայսրուհւոյն պատ-
րաստած նիւթերը կարգաւորելով ու ընդարձակելով՝
յառաջ տանիլ, բայց չկրցաւ մնչեւ փերջը կատարել,
հապա միայն մկ մասն երկու հատորի մէջ (1787—1789.)
հրատարակեց աս անունով. «Հարտաբալ»-ը Բալլաս լի-
ւարտը հանձնէր «Գիտնոց»: Աս երկու հատորին մէջ կը բա-
ժանգակին միայն եւրոպական ու ասիական լեզուները:
Եւանգիլիֆէ անուն լեզուապէտան ետքէն (1790—1791.) նոյն
գործքն երկրորդ անգամ հրատարակեց՝ Ափրիկէի լեզու-
ներն ալ գրան աւելցրնելով:

բուրբ ազգին բարձրագոյն կարգերուն մէջ ազգային լեզուին սերբ բորբոքելով, անկից ետքն եկեղեցականք ու աշխարհականք կ'աշխատէին ու միշտ կ'աշխատին ռուսերէն լեզուն ժողովրդեան մէջ՝ ըստ ներելոյ տեղւոյն՝ ժամանակին ու այլ եւ այլ պարագայից՝ մշակել ու ծաղկեցընել:

7. Շ Վեաաց ազգն անցած դարուն սկիզբները իր թագաւորաց ու թագուհիներուն առանձին խնամքովը մայրենի լեզուին մշակութեանը համար այնպիսի եռանդ սկսաւ ցուցընել, որ թեպէտ եւ դեռ անցած դարուն կէսերը անանկ կը կարծուէր՝ թէ նոյն ազգին լեզուն գրքերու մէջ չիկրնար գործածուիլ, սակայն մեծամեծներու փութութեւն ու ջանքովն անանկ աղէկ մշակուեցաւ՝ որ քիչ առնուան մէջ գեղեցիկ ուսմանց մէջ յառաջագիմութիւն ընելէն զատ՝ ուրիշ ծանր նիւթերու վրայ ալ գրքեր իրարու անդադար կը յաջորդեն: «Ինչ յառաջագիմութիւններ չիկրնար ընել լեզու մը, երբ որ այնպիսի եռանդամբ օգնութիւն ու քաջալերութիւն կը գտնէ թագաւորներէն, ազգին մեծամեծներէն ու երեսելի տիկնանցմէ», կ'ըսէ մատենագիր մը:

Չներ ուզեր նոր ազգերուն ամենն ալ՝ Իտալացիները, Հոլանտացիները, Պոլոնիացիները (Ա.Ն.Տերր), Գանիացիները, Քոչեմիացիները, Հունգարացիներն եւ ուրիշները հաստեղս մէկ մէկ յիշել¹:

¹ Հոս միայն Հունգարացոյց՝ անցած դարուն վերջերէն սկըսելով՝ իրենց ազգային լեզուն կենդանացընելու եւ ծաղկեցընելու համար ցուցընած արտաբայ կարգի խնամքը համառօտի յիշատակներ: Ըստ ազգին անուանի նոր պատմագիրը Յովհ. Մայլաթ (Արշ. Պարտ. Հունգար. Հոգ. Ե.) կը գրէ՝ թէ ութ եւ տասներորդ դարուն մէջերը Մաճարաց (Հունգարացոյց) լեզուն իրրեւ հմացեալ ու ճերացեալ լեզու մը բարբոթին մարելու մաս կը: Մարիամ Թերեզիա կայսրուհիցն ատենէն սկսած (1745—1780.) Հունգարացի մեծամեծաց ազալը մայրենի լեզունին կամ աննեւին չէին գիտեր, կամ իրստ քիչ գիտէին: Սակայն որովհետեւ ասոր որդին ու յաջորդը Յովսէփ Բ. (1780—1790.) իր քաղաքական գիտմանցը համեմատ գերմաներէն լեզուն հունգարերէնի տեղ բուրբ ազգին մէջ ամեն հնա-

Ասոնց ամէն մէկին իր մայրենի լեզուն մշակելու եւ պայծառացրնելու համար ցուցրցած եռանդին ու ջանքին նկատմամբ առ հասարակ աս միայն կ'ըսենք՝ որ հիմակ Եւրոպայի մէջ ազգ մը չկայ՝ որն որ ամէն փոյժն ու ջանքը չցուցրնէ օտար լեզուաց գործածութիւնը մէկդի թող տայու ու իր յատուկ լեզուն մշակելու, ամէն գործքերու եւ գրքերու մէջ միայն անիկայ գործածելով: —

8. Ասոնք համառօտիւ նշանակելէն ետքը կը հարցրնեմ առանձինն աս նոր ազգերու համար. ասոնց ամէն մէկուն իրեն տահմային լեզուն ծաղկեցրնելու եւ տարածելու համար ցուցրցած պաշտօն մեծ ջանքին պատճառն ու գրգիտն ինչ էր: Գուցէ ոմանց միտքը կարծիք մը գայ՝ թէ երեւելի ու մեծ ազգերու միայն իրենց լեզուն գործածելու եւ պայծառացրնելու փոյժն ազգային հպարտութենէ ու փառասիրութենէ մը յատաջ գայ, որով եւ միայն աս պատուին ու օգուան ունենայ՝ որ մէկ ազգը մէկալէն որչափ կարելի է զատուած

բիւք խոթել ջանաց. Հունդարացիներն ասկից արթննալով՝ եւ իրենց ազատութեան իրաւունքը ձեռք առնելով՝ նոր ուղի մը ստացան իրենց լեզուին պաշտպան ու պահպան ըլլալու. եւ սկսան անիկայ մեծ եռանդով մշակել: Աւ Էտորտուս Բ. կայսեր (1790—1792.) ժամանակը ազգային ժողովոյն մէջ լեզուին յատաշարութեան համար մասնաւոր օրէնք տահմաուելով, սկսուեցաւ ամեն բարձրագոյն դպրոցներու մէջ հունդարերէն լեզուի համար հմուտ ուսուցիչներ գրուելու: Ընկից ետքը լեզուն չէ թէ միայն նոր կեանք ու հաստատուն ընթացք մը ստացաւ, սլլ եւ յիսուն տարուան մէջ արտաքոյ կարգի ծաղկելով՝ Հունդարացիները լատին լեզուին գործածութիւնը, որ ամէն տեղերէն աւելի հոս ամէն հասարակաց ու կրնամ բռել շատ առանձնական գործքերու մէջ կը բռնէր, գրեթէ միայն եկեղեցականներուն թող տալէն ի զատ՝ նաեւ Հունդարիայի մէջ գամուուոյ ուրիշ ազգաց (Ալաւներու, Գերմաններու եւ Վալալներու) լեզուներն ալ իրենց շախազանց եռանդովք խափանելու եւ միայն հունդարերէնն անոնց գործածել տալու փորձ ըրին. որ անգեղ եւ անիրաւ բան ըլլալուն շախազեցաւ եւ չէր կրնար յաջողիլ: Սակայն բուն Հունդարացոց մէջ ազգային լեզուն ու անոր գրականութիւնը զարմանալի կերպով մը ծաղկեցաւ ու օրէ օր կը ծաղկի եւ կը հարուստնայ:

ու որոշուած մնայ: Բայց աս կարծիքը բոլորովին սխալ ու նոր ատենուան ընկերական կենաց սկզբունքներուն բոլորովին հակառակ է: Հին ատենուան քաղաքականութեան ջանքն էր այլ եւ այլ քաղաքային ընկերութիւններն ու ժողովուրդները մէկգմէկէ բաժնել, որպէս զի մէկը մէկայէն աւելի մեծնալով եւ զօրանալով անիկակ իր իշխանութեան տակն առնէր, տկարացընէր ու իրեն ծառայ ու հարկատու ընէր, կամ գոնէ անոր ուժը կտարէր, հարստութիւնը պակսեցընէր ու առուտուրին արգելք ըլլար: Բայց մարդիկ քրիստոնէական կրօնին բարերար հովանեացը տակ գիտութեանց լուսովը լուսաւորուելէն ու մտաց ազատական յառաջադիմութիւնն եւ ուղիղ փիլիսոփայութիւնը գործելու սկսելէն ետքն՝ ամէն մտացի մարդ ճանչցաւ ու համոզուեցաւ՝ որ մասնաւոր ազգի մը ճշմարիտ բարին ու օգուտը չի կրնար մինակ յաջողիլ առանց ընդհանուր մարդկային ընկերութեան բարոյն յաջողելու: Անոր համար թէ որ հզօր ազգ մը իր մայրենի լեզուն ան մտքով ու ջանքով մշակելու եւ տարածելու ու ամէն գրուածոց մէջ միայն անիկայ գործածելու ըլլայ՝ որ ուրիշ ազգերն ալ ստիպէ նոյն լեզուն գործածելու՝ իրենց յառուկ ազգային լեզուն երեսէ ձգելով, չէ թէ միայն ընդհանուր գիտութեանց եւ մտաւոր կրթութեան անոնց մէջ ծագկելուն արգելք կը դնէ, հապա նաեւ իրրեւ ընդհանուր ազգաց յառաջադիմութեանը խափանիչ՝ նախատելի ու արհամարհելի կ'ըլլայ: Աստի կրթեալ ազգ մը իր մայրենի լեզուն ամէն կերպ միջոցներով ու ջանքով մշակելու եւ պայծառացընելու պիտ'որ աշխատի ըսած ատեննիս՝ չենք ուզեր անանկ իմանալ թէ աս ջանքին վախճանը պիտ'որ ըլլայ՝ ուրիշ ազգաց լեզուներուն վրայ իշխել ու անոնց լեզուն խափանելով իրենն անոր տեղը գործածել տալ. հապա միայն աս կ'ուզենք

Հասկըցընել՝ որ իւրարանշխոք ազգ իր ազգային լեզուն ամեն աստի մէջ պիտ'որ բանեցընէ՝ գիտութեանց ու հասարակաց կրթութեան ազգին մէջ ընդ հանուր կերպիւ ծաղկելուն համար:

Գ. Արեւմե մինչեւ հիմակ բաժնեկրնէս կը հասկընամք ու կը տեսնենք՝ որ Աւրոպայի նոր ազգերուն ամեն մէկին իր մայրենի լեզուն օրէ օր աւելի մշակելու եւ պայծառացընելու համար ունեցած ջանքն ու բիշ վախճան մը չունի, բայց եթէ անկաց անանկ մարտը՝ փայելուչ ու հարուստ յօրինել, որ բոլոր ազգն անոր յարգն ու անով անոր սերը մարին ու սրտին մէջ հաստատէ, եւ անիկակ իրեն համար օտար լեզուներէն աւելի մեծարոյ՝ սգաակար ու հարկաւոր սեպելով, անոր մարտը գործածութեանը մէջ ժիր ու եռանդուն բլաց՝ Միայն ասով մարտը լեզուն ազգի մը մէջ կրնայ ընդհանուր լեզու բլաց: որովհետեւ մէկ ազգի մէջ մի եւ նոյն լեզուի ազգին ամեն մէկ անդամին կամ անձին ջանքովը յառաջագիմութիւն ընել բսելը՝ ուրիշ բան բսել չէ, բայց եթէ աս' որ ամեն մարդ իր լեզուն խօսի, ու բա կարի մարտը խօսի, իր լեզուովը գրէ, պսինքն իր լեզուն գործածէ ազգայնոց հետ թղթակցութիւն բրած ու վաճառականութեան հաշուեգիրքերը գրած ասենը, ու մանաւանդ մասենագիր բլացն իր գիրքերը մայրենի լեզուով շարագրէ: Ա' ու միայն աս ընդհանուր գործածութիւնով մայրենի լեզուն ազգի մը մէջ կրնայ մշակուիլ ու յառաջ երթալ, որչափ որ ազգը պզտիկ ու ցրտած բլաց՝ իր լեզուն բոլորովին խախտուելու վտանգէն ազատ կը մնայ. եւ՝ որ ամեն ասեն բայց մանաւանդ աս ծաղկեալ դարուս մէջ ցանկալի բան մըն է՝ իր ազգային գրականութիւնը մասնաւոր կենդանութիւն ու պայծառութիւն կը ստանայ:

ԳԼՈՒԽ Ը .

Ազգային լեզունն ընդհանուր գոյություն է ձևավորելու
 հիմնարկը :

1. Իսկ որ ուրիշ շատ բաներու մեջ իրաւամբք կ'ըսուի, բուն մայր լեզուի մը պահպանութեան համար աւելի եւս իրաւամբք կրնայ ըսուիլ, թէ «Հինը կամ Սկզբնականն իր իրաւունքը միշտ կը պահէ, կամ» իր պահպանութեանը համար ունեցած եւ բրած պահանջմունքն իրաւացի է, չիկրնար արհամարհուիլ, պէտք է իբր նուիրական բան մը սեպուիլ» : Աս առակաւոր խօսքը մեր մտքին մեջ դիւրաւ տեղ կ'ընէ, թէ որ հին մայր լեզուի մը նախ սկզբնական կատարելութիւնն, ետքն ալ իր ունեցած արդիւնքը յիշելու ըլլանք : Մայր լեզուաց սկզբնական կատարելութեան վրայ յառաջագոյն բաւական գրեցինք . իսկ իրենց արդիւնքին միայն մէկը յիշատակելը հերիք է . այսինքն աս՝ որ միայն լեզուն է ազգի մը պինդ առջի սկիզբն ու սկզբնահարքը պինդ ետքի ժամանակներու ազգայնոց հետ կապողը . ինքը միայն ասոնց այն սկզբան հետ ունեցած հաղորդակցութիւնն ու միութիւնը կը պահպանէ ու միշտ կը յիշեցընէ¹ : Ազգի մը ամէն պատմական յիշատակներն ու յիշատակարանները կորսուած ըլլան, ու միայն լեզուն անկորուստ մնայ, բաւական է իբրեւ նախնեաց հաւատարիմ աւանդապահն ու կենդանի յիշատակարանը՝ յաջորդաց ու յեանոց իրենց ձայնն ու խօսքը հասցընելու : Ազգային լե-

¹ Ազգուն ընդհանրապէս իբր յիշողութեան եւ աւանդութեան տողան պայնքն թեւ մը որն որ ամէն ժողովուրդներն իրենց ժամանակական յաջորդութեան մէջ իրարու հետ կը շաղկապէ՝ բոլոր մարդկային ազգին հասարակաց յիշատակի գործիք կամ միջնորդ մըն է : . . . Ինքն է ահա հասարակ իբր աւանդութեան դարան ու պահարան մը, որ յազգէ յազգ շարունակութեամբ յառաջ կը բալէ . . . ու մէկ դարը մեկային հետ կը կապակցէ : Փ . Շեկել . Փիլիս . Ազգուի եւ Բանի . Խօսք Գ :

զուն պինդ ետքի ազգայնոց սէրն ու սիրտն իրենց սկզբնահարց հետ կը շողկապէ: Հոս բնութիւնն իսկ իր ազգեցութիւնը կը ցուցընէ ազգային լեզուին արդիւնքն ու յարգը յայտնի ընելու համար: Մտածենք հեղ մը, մեր նախնեաց լեզուին սքանչելի յօրինուածներուն յիշատակարանները, նոյն իսկ հատակոտորներն՝ այն լեզուին ճաշակը քիչ շատ առնողի մը մտքին ու հոգւոյն մէջ ինչ հաճոյական յիշատակներ ու զգածմունքներ կը զարթուցանեն, շատ հեղ՝ այնչափ գրուած նիւթին հանգամանացը պատճառաւ չէ, որչափ անիկայ բացատրող նախնեաց խօսուածքին ու գրուածքին եղանակին, բուն ան ատենուան մտածութիւնները բացայայտող բառերուն շարուածքին, շարագրութեան բնական հիւսուածքին, ու իրերը բնականապէս յարմար՝ կարճ ու կենդանի խօսքերով ստորագրելու պարզ արհեստին համար: — Թողունք ազգային շատ հին երգերն, առակներն ու զրոյցները, ու առանձինն հին ազգային մատենագրի մը գրութիւնն միայն իբրեւ օրինակ մը յառաջ բերենք: Մեր Եզնիկ վարդապետին ան սքանչելի մատենան (ԵՉ ԱՂՆԴՊՊ), ուր իր փիլիսոփայական խորհուրդներն ու գաղափարները յատուկ հայ բառերով, հայկական ընտիր յօրինուածով, ու ազգին եւ ժամանակին նկարագիրը կամ ոգին կենդանի գոյներով նկարող բացատրութիւններով կը պարզէ, երբ որ Հայ մը կարեւոր մտադրութեամբ կարդալու ըլլայ՝ տարակոյս չկայ՝ որ միտքն ու սիրտը կը յափշտակի, քաղցր յիշատակներ մտքին մէջ կը զարթնուն, եւ կրնամ ըսել՝ որ այնպիսի խօսուածքին գեղեցկութիւնն՝ իր սրտին մէջ՝ ան լեզուով գրքեր գրուած օրերուն անցնելուն վրայ զգալի ցաւ ու տխրութիւն մը կը բերէ: Նոյնը կրնանք ուրիշ քանի մը հին ու ընտիր ազգային մատենագիրներնուս զրուցուածքին նկատմամբ ըսել:

2. Այս ու պայտիսի զգացմունքը կրթեալ ազգայնոց սրտին մէջ անշուշտ նոյն լեզուին վրայ ջերմ սէր մը կը բորբոքէ, որով կը ջանան անոր պահպանութեանն ու մշակութեանը համար ամէն կերպ խնամքն ու փոյթը ցուցնել ու ամէն կարեւոր միջոցները բանեցնել: Բայց մեր այն նախնեաց լեզուն գրոց բարբառ է, խորունկ ու ճիշդ կանոններով յորինուած, անիկայ ամէն տեղ, ամէն գրքի մէջ ու հասարակ ժողովրդեան համար շիկրմար գործածուիլ: Աստի գիտութեանց եւ բարձրագոյն ուսմանց մէջ այն հին ու պատուական գրաբար լեզուին ամէն կերպ առաջնութիւնն ու բարձրագոյն գահը տալէն ետքը, ժամանակին պարագայիցը հետեւելով աշխարհաբար լեզուն ալ գրաբարին հովանեացը տակ մշակելու, փայելաւորնելու եւ կատարելագործելու աշխատիլը մեր մասնաւոր պարտքը պիտ'որ սեպենք: Ղարձեմ որ ասանկ հասարակ ժողովրդեան բերանը խօսուող ու ըստ այլ եւ այլ գաւառաց այլ եւ այլ ազգեցութեան տակ իննող լեզուի մը մշակութեանն ու կատարելագործութեանը համար գրաբար լեզուին վրայ ցուցուած խնամքէն տարբեր փոյթ ու հոգածութիւն մը ի գործ դնելու հարկաւորութիւնն ամէն մտացի մարդ ինք իրմէ կը տեսնէ: Արովհետեւ ինչպէս աշխարհքիս շատ բաներուն մէջ կը պատահի սոյնպէս եւ լեզուներու մէջ ալ կը տեսնուի, որ որչափ աւելի կը տարածին ու հասարակ եւ ընդհանուր գործածելի կ'ըլլան, այնչափ ալ իրենց սկզբնական մարքութեանը մէջ շին կրնար մնալ. մանաւանդ՝ ի մասնաւորի լեզուի մը վրայ խօսելով՝ որչափ որ ստորին մարդկանն ու ստորին գործքերու մէջ կը գործածուի, այնչափ աւելի խանգարմունքի տակ կ'իյնայ: Բայց նոյն իսկ աս պարագան գտնէ ազգային ուսումնականաց՝ մանաւանդ մատենագիրներուն մտադրութիւնը զարթուցանելու ու լեզուին մարքութիւնը հոգալու.

այս թերն անոր մէջ անցմամբ ժամանակաց մտած ու
 ետեւէ ետեւ մտնող խանգարմունքները շիտակե-
 լու՝ սրբազրելու եւ անոր բոլորովին խափանուիլը
 արգելելու համար գրգիռ ու քաջալերութիւն
 պիտ'որ տայ: Աս բանս ալ (որովհետեւ խօսքեր-
 նիս հոս առանձինն աշխարհարար՝ կամ ժողովոր-
 դեան բերանը խօսուող եւ անոր մէջ հասարակ
 գործածուող լեզուին վրայ է,) չէ թէ երկայն ու
 խորունկ կանոններով լեցուած քերականութիւն-
 ներ շարագրելով պիտ'որ ընեն, որն որ գրարա-
 թի համար աւելի հարկաւոր է, հապա հասարա-
 կաց գործածութեան համար գրուած գրքերը,
 սրագիրներն ու լրագիրներն ըստ կարի մտքուր
 լեզուաւ ու ոճով գրելով: Ասանկով լեզուին մա-
 քութեանը ու պայծառութեանը ու անով անոր
 օրէ օր աւելի յարմար ու դիրքին կերպով ու
 միջոցներով տարածուելուն աստիճան աստիճան
 ճամբայ կը բանան. լեզուին գիտնական յառաջա-
 դիմութիւնը բարձրագոյն կարգերու ընթերցողաց
 (զպրատուններու վերին կարգերէն սկսելով՝) կը
 պահեն, ու հասարակ ժողովրդեան համար մայ-
 բնի պարզ լեզուին գործածութիւնը դիրքնցը-
 նելու՝ բաց առանց անոր յատուկ ոճերուն փաս-
 մը տալու՝ կ'աշխատին: Աեզուն պայծառացընելու
 ջանքը հասարակօրէն խորունկ ու բարձր սկզբամբ
 յառաջ երթալուն՝ ազգին վրայ ազդեցութիւնը
 քիչ կամ ոչինչ կ'ըլլայ. ուստի եւ բարի կամքով
 ու նպատակաւ աս բանիս ձեռք զարնող շատ գո-
 վելի անձանց աշխատութիւնն ու ջանքը ցանկա-
 ցեալ պտուղները չբերելէն զատ, շատ անգամ
 բոլորովին անպտուղ կը մնայ:

3. Աս կտորիս մէջ միտուընիս ճիշդ ու աղէկ
 բացայայտելու համար՝ պատշաճ կը համարինք
 հասակըս մեր ազգային ուսումնականաց ու մտան-
 նագիրներուն առանձինն յիշեցընել՝ որ որով-
 հետեւ երկու լեզու կամ իրարմէ ըստ իրաց

ինչ զատուած բարբառ ունինք, որ է գրաբար
ու աշխարհարար, պէտք է որ լեզուին մշակու-
թեանն ու անոր զուտ ու մաքուր ըլլալուն ետեւէ
կյնողները՝ վերը գրածներնուս համեմատ՝ ուսում-
նական ընթերցողներուն եւ խօսողներուն՝ ու հա-
սարակ կամ վարի կարգի խօսողներուն եւ ըն-
թերցողներուն մէջ եղած ու պահուելու խափրը
միտուընէն ամենեւին չհանեն: Աւ ինչպէս որ
գրուելու եւ կարդացուելու նիւթերը Գ՝ՆՆԷ՛ ու
Գ՝ՆՆԷ՛ կը բաժնուին, նոյնպէս իրենք ալ այն
նիւթերուն համեմատ՝ (ըստ որոց եւ ընթերցող-
ները կը բաժնուին) լեզուին յորինուածն ու ոճը
նկատեն, ու անոնց վրայ իրենց ջանքն ու աշխա-
տութիւնը կարգեն եւ ուղղեն: Աս նկատումն
ընելով՝ յայտնապէս ու ինք իրմէ միայն այն հնարքն
ու ճամբան իրենց դիւրին ու միանգամայն օգտա-
կար կ'երեւայ, որն որ գլխաւոր վախճաններնուն
հասնելու՝ այսինքն ազգային լեզուն պայծառացը-
նելու եւ մաքուր ոճով տարածելու համար մէկ
հասիկ միջոց է: Ինչու որ աս նկատումն իրենց
յայտնի կը ցուցրնէ՝ որ հասարակ ժողովրդեան
առջին անանկ դիւրին միջոցներ դնելու է ու ա-
նանկ կարճ ճամբայ բանալու է՝ որ դժուարու-
թենէ խրատելով ու յուսահատելով իրմէ պա-
հանջուածը կատարելէն ետք չկենայ: Ասով չի-
մացուիր՝ թէ ժողովուրդը թող տալու է՝ որ ինք
իրեն կամ ըստ պատահման առիթ մ'ունենալով
իր մայրենի լեզուն կամաց կամաց յառաջ տանի
ու սորվի, իրք թէ իր հասարակ ու ամենօրուան
գործքերուն մէջ իր լեզուին պահպանութեան ու
յառաջադիմութեանը մտադիր ըլլայ ու փոյթ տա-
նի: Ասիկայ անանկ ժողովրդենէ մը կրնայ յու-
սացուիլ, որն որ իր յատուկ հայրենեացը մէջ է,
որուն ընդհանուր ու տիրող լեզուն բուն իր ազ-
գային լեզուն է: Բայց օտար երկիրներ եւ պլա-
լեզու ազգաց մէջ ցրուած ժողովրդենէ մը, ինչ-

պէս որ մեր ազգին մեծագոյն մասին եղած է, չիկրնար յուսացուիլ՝ որ առանց մասնաւոր ջանքի ու յատուկ միջոցներու իր մայրենի ազգային լեզուն՝ չեմ ըսեր սկզբնական մարքութեամբն ըստ կարի պահէ, հապա եւ ոչ ամէն ատեն ու ամէն գործքի մէջ գործածելով՝ անոր անկորուստ մնալուն փոյթ տանի: Աւրեմն ասանկ ժողովրդեան մը իր լեզուն հաստատուն պահելու եւ ըստ կարի գործածելու կամ նաեւ յառաջ տանելու առիթներ ու միջոցներ գտնելը յարմար ու յաջողակ անձանց մտնութիւնքը՝ փոյթն ու ջանքը պիտ'որ ըլլայ, որոնք երբ որ ազգին օգուտն եւ աս կտորիս մէջ յառաջագէժ ըլլալն իրենց մասնաւոր զբաղմունքը՝ պաշտօնն ու պարտք կ'ընեն, միաբան խորհրդով ալ կրնան ամէն ատեն բաւական առիթ ու միջոց գտնել իրենց վախճանին՝ կատարելապէս ալ չըլլայ՝ գոնէ կարելի եղածին չափ հասնիլ:

4. Այս բանիս դիւրին ճամբայ մը ցուցնելու համար մենք հետեւեալ խորհրդածութիւնը կ'ընենք: Արչափ ազգասէր՝ ու մտաւոր եւ բարոյական կրթութիւն սիրող ու անոր բաղձացող անձինք կան ազգին մէջ, որոնք ազգին ամէն կարգի մարդկան մէջ կարեւոր կրթութիւնը խթանելու կը փափագին ու շատերն ալ ձեռքերնէն եկածին չափ կ'աշխատին: Արդ՝ աս բանս միայն բերնէ բերան խօսելով, կամ միայն բերնուց խրատներ տալով ու յորդորելով չիկրնար յաջողիլ: Ինչու որ ո՛վ կրնայ ամէն դի երթալ, ամէն տուն մտնել, ամէն մարդու հետ տեսնուիլ աս վախճանիս հասնելու, այսինքն հարկաւոր եղած կրթութիւնը տարածելու համար: Աւրեմն պէտք է որ այսպիսի փափագներով վառուած անձինք անանկ միջոցներ ձեռք առնեն, որ այն կրթութիւնը կարելի եղածին չափ ընդհանուր տարածելու եւ անով իրենց փափագանացը կա-

տարուից տեսնելու եւ իրենց ցանկացեալ վախ-
ճանին հասնելու կարող ըլլան: Եւ որն է աս
միջոցներուն գլխաւորը. պատասխանն ամէն մարդ
կրնայ գտնել ու տալ. աս միջոցն է ԳՐԻԳՐԸ,
որոնց մէջ ստորին կարգի կրթութենէ սկսելով
մինչեւ վերի կարգին համար հարկաւոր եղած
հրահանգներն ու կանոնները կրնան պատշաճ
կարգով աւանդուիլ, ճամբաները բաց ու յայտնի
ցուցուիլ, ու դիւրութիւնները զանազան կերպով
ամենուն առջին դրուիլ: Արդ որովհետեւ ասոր
վրայ՝ կարծեմ՝ ոչ որ կրնայ տարակուսիլ, որ քան
դարձեալ կը պարտաւորինք յայտնի տեսնել ու
վկայել՝ որ ազգը կրթեալ ընելու, կամ կրթու-
թիւնը ազգին մէջ տարածելու համար պէտք է
ազգային լեզուին դիմել, ազգային լեզուն ձեռք
առնել: Ինչու որ յայտնի բան մըն է՝ թէ ազգի
մը ընդհանրութիւնը բանի մը մէջ յառաջադի-
մութիւն չիկրնար ընել, կամ թէ ըսենք՝ իր մէջը
յառաջադիմութիւնն ընդհանր չիկրնար ըլլալ.
Բանի որ այդ յառաջադիմութեան միջոցն ընդ-
հանուր ու ամենուն միակերպ ծանօթ եւ գոր-
ծածելի չըլլար: Եւ ահա այս ընդհանր չիկրն
նցն իսկ ԳՐԻԳՐԸ - ԳՐԻԳՐԸ - ԳՐԻԳՐԸ - ԳՐԻԳՐԸ
որն որ եթէ ըստ պատշաճի տարածուած չըլլար՝
անով ըլլալու յառաջադիմութիւնն ալ կամ ան-
կատար եւ կամ շատ յամբարայլ կ'ըլլայ, ու
ազգին ընդհանրութեան օգտակար չըլլար, որով
եւ գրեթէ բոլորովին խախտուելու վտանգի մէջ
կ'ընայ:

Ն. Գուցէ ոմանք համարին ու ըսեն՝ թէ կրթ-
ութիւնն օտար ազգաց կարգաւորեալ գրքերէն
ու անոնց լեզուներուն մէջ վարժելով ալ կրնայ
ստացուիլ: Ասանկ անգէպ կարծիք մը ունեցողին
պատասխան տալու համար պէտք չէր ժամափա-
ճառ ըլլալ. բայց բոլորովին ալ անպատասխանի
թող տալ չուզելով՝ կ'ըսենք՝ որ օտար լեզունե-

բով ու օտար ազգաց գրքերովն եղած կրթութիւնն ու յառաջագիմութիւնը միշտ մասնական կը մնայ, ազգին ընդհանրութեանը վրայ մեծ ազդեցութիւն չընեն: Կրացրնէ անով ուսումնականք կը շահին, ունեցած անդէկութիւններն յառաջ կը տանին ու կը կատարելագործեն. բայց աս իրենց անդէկութիւններն ընդհանուր ազգին հաղորդելու, անոնք ազգին հասարակաց ստացուածք ընելու եւ անով անոր մտար հարստութեանն ու կրթութեանն աւելի հաստատութիւն ու անդրութիւն տալու համար պէտք է որ հասարակաց ու ընդհանուր միջոցի գիմուի, այն միջոցն աւելի գործածական ընելու եւ իրոք գործածելու աշխատուի: Ա՛յժէ մեր ազգային գրականութեան սահմաններն ընդարձակելու, ազգային ուսմանքն ու հայերէն գրքերը շառցրնելու վախճանը միայն ուսումնականաց ծառայութիւնն ու օգնութիւն մ'ընել ըլլար, կրնայինք ջանքերնիս այնչափ մեծ մտադրութեամբ բոլորովին ազգային լեզուին վրայ շամփոփել. որովհետեւ իրենք կարող էին ուրիշ լեզուներէն իրենց նպաստ ու գիւրութիւն հոգալ ու գանել: Բայց ազգային լեզուով ազգային գրականութիւնն առաջ տանելու եւ հարստացրնելու ջանքին բուն վախճանն է՝ ընդհանուր ազգին կրթութեանը օգնութիւնն ու օգուտ ընել, բոլոր ազգին՝ իր կրթութեանն ու յառաջագիմութեանը հարկաւոր ըլլող հրահանգները մատակարարել, իր պղտիկուց սորված ու գիտցած լեզուովն իրեն հետ գրքերու մէջ խօսելով զինքը լուսաւորել ու մտար հարստութեան ժառանգորդ ընել:

Յ. Ա՛ս բանիս ետեւէն իյնալու մեծ յորդոր մը կ'ըլլայ մեզի՝ թէ որ մեր միտքն ազգերնուս ուսումնականութեան ու լեզուներնուս ծաղկելուն Ոսկի գարին, այսինքն հինգերորդ դարին դարձունելու ըլլանք, որուն մէջ թէպէտ եւ մեր ի-

մաստուն նախնիք Յունաստանի, Ասորիքի, Եգիպտոսի ու Իտալիայի դպրոցներն օտար լեզուներ եւ ուսում սորվելու համար կը յաճախէին, յունարէնի ուսումն իրենց գլխաւոր գործք ըրած էին ու անիկայ քաջ գիտէին: Բայց այնչափ ուսմանց մէջ այդ յունարէնը, ասորերէնը, եւ այլն, իրենց վախճանը չէր, անով իրենց գործքը չէր լիննար, հապա անիկայ իրենց ձեռքը մինակ գործիք ու միջոց մըն էր ուսմունքն ու գրականութիւնն ազգին մէջ տարածելու, ազգն ուսմանց մէջ կրթելու համար: Եւ աս պատճառաւ ալ ամէն փոյթներնին իրենց մայրենի լեզուին վրայ կը դարձընէին. անով կը գրէին, անով կը թարգմանէին, ու անիկայ կատարեալ մաքրութեամբ ու վայելուչ ոճով տարածելու համար ընտիր մատեններ կը հանէին: Իրենց ճարտար թարգմանութիւններովը Յոյն, Ասորի ու Ղաթին իմաստնոց ու վարդապետաց հայերէն խօսիչ կու տային՝ որ Հայ ժողովուրդն իր հայ լեզուան անոնց գիտութիւնն ընդունելով՝ ազգովին իմաստնանայ: Եթէ հիմակու ատենս օտար լեզու՝ մանաւանդ գաղղիերէն սորվող ազգայինք այս մտքով ու փութով ոգեւորած ըլլային, եթէ այդ լեզուները միայն իբրեւ միջոց սորվելով ու դասատուներու մէջ սորվեցընելով միտուրնին բոլորովին ազգային մայրենի լեզուին վրայ հաստատած ըլլային՝ ոչ տրամելու եւ ոչ տրտունջ մ'ընելու պատճառ կ'ունենայինք:

7. Արանի թէ ազգային լեզուագէտներուն ամէնն ալ մեր աս խորհրդածութեան իրաւացի ըլլալը ճանչնային. երանի թէ մայրենի լեզուին իրենց մատակարարած բնական առաւելութիւնը տեսնէին. ան ատեն ամենայն յօժարութեամբ իրենց բոլոր փոյթն անոր վրայ կը դնէին ու միայն անով մատենագրելու համար ամենայն ջանքով կ'աշխատէին. ուսկից կրկին շահ յառաջ

կու գար, մէյ մը՝ որ հայ լեզուաւ գրելով՝ իրենց հայ ազգին ընդհանուր շահն ու յառաջագիմութիւնը կը հոգային, ու մէյ մ'ալ որ իրենց անձնական աշխատութեանը մասնաւոր դիւրութիւն մը կ'ըլլար: Ինչու որ, ինչպէս շատ աղուոր կը գրէ հմուտ բանասէր մը, «Ո՛վ որ իր լեզուէն դուրս ըլլող օտար լեզուաւ գիրք մը կը գրէ, պէտք է որ կամ կոչտ ու բիրտ ոճով գրէ, եւ կամ անտանելի աշխատութեամբ ու ինք իրեն բռնութիւն ընելով շարագրէ, ան ալ առանց յուսալու որ պիտ'որ կարող ըլլայ այն մատենագիրներուն ոճին վսեմութեանն եւ ազդուութեանը հասնիլ՝ որոնք իրենց սեփական ու մայրենի լեզուաւ գրած են: Արդ՝ ինչ օգուտ կ'ընէ (իր բնական) կրակը մարելն ու անոր ուժին ազդեցութիւնն ուշացընելը՝ մասնաւոր բառեր ու ոճեր փնտռելու եւ յարմարցընելու աշխատանաց պարտքին տակ մտնելով, որոնք ոչ երբեք այնպիսի դիւրութեամբ ու շուտութեամբ մարդուն միտքը կրնան գալ, որով որ իր բուն յատուկ լեզուին մէջ գանուածները կու գան,»: Ասիկայ բնութեան օրինաց եւ կարգին վրայ հիմնած ճշմարտութիւն մըն է. որովհետեւ լեզուն ներքին զգացմունքներուն յայտարարութիւնն է, զգացմունքները բնականապէս ամէն մարդու բնաւորութեան ներգործութիւններն են, բնաւորութիւնն ալ ինչպէս ամէն մէկ անհատի ըստ մասնաւոր ինչ տարբերութեանց յատուկ կ'ըլլայ, նոյնպէս եւ ըստ ընդհանուր հանգամանաց ամէն մէկ ազգի սեպական պէտք է որ ըլլայ. զոր օրինակ, ցրտային օդաբաժիններու ազգերը բոլորովին տարբեր բնաւորութիւն եւ ըստ այնմ եւս զգացմունք ունին, ջերմային երկիրներու ազգերն անոնցմէ շատ տարբեր բնաւորութեամբ կ'ըլլան եւ ըստ այնմ եւս զգացմունքներ կ'ունենան: Այսպէս ամէն մէկ ազգին լեզուն ալ անոր յատուկ բնաւորութեանը

Համեմատ յատուկ բացատրութիւններ, դարձուածներ, ոճեր եւ անոր սեպհական զգացմանցը յայտարար կազմութիւններ ունի: Արդ կրնայ ըլլալ որ օտար լեզու սորվող եւ օտար լեզուով խօսող ու գրող մը՝ անոր ամէն Հանդամանացն աղէկ թափանցէ ու անիկակ ըստ կարի կատարեալ ստացած ըլլայ, բայց միթէ արհեստի ստացուածը բնութեան մեր մտաց ու սրտին խորունկ կողմերը անկած ու Հաստատած պայմանին կրնայ Հասնիլ ու Հաւասարիլ:

8. Աս ասանկ ըլլալով՝ մեր ուսումնականներն ու մատենագիրները, ինչպէս նաեւ ազգին գրելխաւորները, որոնց փափագն ու ջանքն ազգին մէջ ուսումը, մտաւոր ու բարոյական կրթութիւնն ու գեղեցիկ եւ աղնուական ճաշակը՝ միշտ ազգային ոգին կենդանի պահելով՝ տարածել է, թէ որ ազգին մեծ բարերարութիւն մ'ընել կ'ուզեն՝ պէտք է որ իրենց ճարտարամտութիւնը, Հնարագիտութիւնը, փոյթն ու միանգամայն ազգեցութիւննին՝ ազգային մայրենի լեզուն ժողովորդեան մէջ ըստ կարի անկորուստ պահելով՝ պայծառացընելու եւ յոռաջ տանելու Համար յարմար ճամբաներ ու միջոցներ գտնելու մէջ ցուցընեն: Եւ ասոնք գտնելն որչափ որ ալ դժուարին երեւայ՝ իրօք շատ մեծ դիւրութիւններ կ'ունենայ, երբ որ ազգին ներկայ վիճակին ու դանուած տեղերուն պարագայից միտք կը դրուի, ու անոնց Համեմատ ճամբայ կը բռնուի: Յիրաւի ազգային Հասարակ լեզուաւ այլ եւ այլ փոքր գրքեր, պարբերական տետրակներ, օրագիրներ ու լրագիրներ հրատարակելը, դարձեալ՝ իւրաքանչիւր անձին իր խօսակցութեան ու գրուածքներուն մէջ իր մայրենի լեզուին վրայ մասնաւոր մտադրութիւն ու փոյթ ունենայն աս վախճանիս Համար օգտակար ու յարմար միջոցներ են: Բայց մայրենի լեզուն ընդհանուր ազգին մէջ ծաղկած պահելու եւ մշա-

կելու համար ամենէն աւելի կարեւոր ու ազդու եւ իբր միակ ընդհանուր միջոց է՝ անոր հիմնական ու շարունակեալ ուսումը դպրոցաց մէջ տղոցմէ սկսիլը:

Եւ ասոր ժամանակն է՝ տղուն (որչափ պզտիկ ըլլայ նէ՝ ըլլայ,) առջի հեղ դպրոց մտնելու՝ կամ վարպետի երթալու օրը: Յառաջ քան այրբնարանի թերթը կամ պնակն անոր ձեռքը տալը՝ իր լեզուին վրայ մտադրութիւն ընելու սկսիլ պէտք է: Աս բանս թէպէտ եւ աւելի վարժապետներու մասնաւոր ջանքէն շատ կախում ունի. բայց թէ որ մատաղ տղայ մը դպրոց մտած ատենն ասանկ կանոն մ'ընդունելու ըլլայ՝ որ հոն էր հոն էր լինելն ու պէտք էր իւրի. եւ ան կանոնին պահպանութիւնն իրմէ առջիններուն վրայ միշտ տեսնէ, ինքն ալ ասանց վարժապետին մասնաւոր հսկողութեանն ու ասանց դժուարութեան մը անոնց հետեւելու կը սկսի: Եւ երբ որ առաջին օրէն սկսած ամէն խօսքերը մայրենի լեզուով լսելու եւ ըսելու ըլլայ, կրնայ հաստատութեամբ յուսացուիլ՝ որ իր տարիքին ու լեզուին խօսելու յաջողակութեան հետ նաեւ մայրենի բարբառին ուսումն ալ յառաջ երթայ, ու իրեն հաստատուն եւ անկորուստ ստացուած ըլլայ: Աս կանոնն ու կարգը դպրոցաց մէջ ճշդիւ պահուելով՝ ազգին տղոցն ընդհանուր ու հաստատուն ճամբայ մը կը բացուի իրենց դպրոցական ընկերութեան մէջ՝ թէպէտ եւ երեսուն կամ քառասուն հոգիէ միայն բաղկացեալ ըլլայ՝ մի միայն ան ալ բուն իրենց ազգային մայրենի լեզուն խօսելու¹: Աւ

¹ Իսկեւ գաւառաբնակաց եւ ուսուցչաց մասնաւոր պարտքն է մասնաւոր թէ ամէն մէկ տղուն ճշտաց ներկայ գիծակին ու իրեն ալ ետքէն մտնելու գիծակին համար ինչ աստիճան յառաջադիմութիւն հարկաւոր է իր լեզուին մէջ, ու անոր համեմատ զինքը լեզուապիտանութեան մէջ կրթել: — Յայտնի է որ դպրոցներու մէջ մայրենի լեզունն է զաս ուրիշ հարկաւոր լեզունն ալ ստօկեցընելն ու արհամարհելն ու ոչ անտուտ բան կրնայ սեպտիլ: Բայց ար

որովհետեւ ամէն մարդկային գործ քիչ մը մտ-
դիր շարունակութեամբ ու անընդհատութեամբ
յառաջ տարուելու ըլլայ՝ միշտ յառաջագիմու-
թիւն կ'ընէ ու կատարելագործուելու ընթացքին
մէջ կը մտնէ, անոր համար տղայք միշտ ու ամէն
խօսքի մէջ իրենց մայրենի լեզուն բանեցրնելով՝
չատ պղտիկներն ու նոր աշկերաններն իրենցմէ
մեծերէն ու առաջ գացողներէն այն լեզուին մէջ
ամէն անհրաժեշտ կարեւոր բառերն ու բացա-
տրութիւններն առանց մասնաւոր աշխատութեան
ու իբր թէ առանց մասնաւոր ուսում մ'ընելու
կը սորվին. անոր մէջ անանկ կը վարժին՝ որ դրոյ-
րոցէն դուրս ալ ան լեզուն խօսելու ամենեւին
դժուարութիւն մը չեն իմանար, ու անանկով
վարժութիւններն կը շարունակեն:

Այսպէս լեզուին հայերէն բառերու եւ խօս-
քերու վարժած ըլլալով՝ ո՞վ շիտեաներ՝ թէ ան-
կից ետքը ձեռքերնին արուած գիրքն ինչչափ դի-
ւրութեամբ կը սկսին կարդալ, բառերը դիւրու-
թեամբ ու ճիշդ արտաբերել եւ անաշխատ հաս-
կընալ, հասկընալով կարդացած ատեննին ամե-
նեւին ձանձրութիւն չեն զգար եւ բաղձանքնին
կ'աւելնայ. ու վերջապէս մայրենի լեզուներնուն
քերականութիւնը սկսած ատեննին շատ մեծ օգ-
նութիւն կ'ըլլայ իրենց անիկայ դիւրաւ ու յա-
ջողութեամբ սորվելու: Իսկ եթէ խոհեմ վար-
պեաներն ու դաստիարակներն ալ աս բանիս մէջ
այն կարեւոր զգացումները կ'ունենան, որոնք ազ-

եւ իցէ ասար լեզուի ուսումը միշտ ազգային լեզուին ուս-
մանէ՝ եւ ուսանողներն ասոր մէջ բոլոր կարի կատարեալ
ու հիմամբ կրթուելէն ետքը պէտք է աւանդել. ասոր
ուսումը առաջին գլխաւոր ու անանօրինակ բանէլ, իսկ
մկալունց ուսումը՝ երկրորդական ու միայն բոլոր մաս-
նաւոր պարագայից հարկաւոր ըլլալը դիմաւորով՝ բոլոր պիտ
սկսել ու յառաջ տանել: Աս ընթացքը հիմակ ամէն կը-
թեալ ազգաց մէջ հաստատ կը պահուի, ու ամէն ազ-
գային զպրօցներու մէջ տղայք առաջին ու գլխաւոր սոր-
վելու նիւթը մայրենի լեզուին հիմնական ուսումն է. թե-
պէս եւ երկրին տիրող լեզուն տակից ըլլայ:

գին բարեքը խնամելու համար թէպէտ եւ ամէն
 մարդու՝ բայց մանաւանդ ազգին տղոցը վրայ վե-
 րակացութիւն ընող ու անոնց կրթիչ ըլլող ան-
 ձիւքներուն սեպհական պէտք է ըլլալ, ան ատենն
 ազգային լեզուն անշքանալու, մարելու եւ կոր-
 սուելու վտանգի մէջ չիյնալէն ի զատ, միշտ յա-
 ռաջ երթալու եւ ծաղկելու ընթացքին մէջ կը
 մնայ: —

9. Ազգային լեզուն անկորուստ պահելու եւ
 յարաջ տանելու համար գլխաւոր միջոց մ'ալ՝ ա-
 նոր մէջ ռուս լեզուի քաղաքի ու խառնե-
 լէն շէնքի կենտրոն է: — Արշափ որ մարդկային կրթ-
 թութիւնն ու մտաւոր լուսաւորութիւնը յարաջ
 կ'երթայ՝ այնչափ աւելի գաղափարները, գիւտերն
 ու արհեստները կը շահանան, որոնց ամէն մէկն
 իր յատուկ անունը պէտք է որ ունենայ: Այն
 ազգն որուն մէջ նոր գիւտ մը կը գտնուի ու նոր
 արհեստ մը կը հնարուի, պէտք է որ իր լեզուին
 մէջ անիկակ անուանելու՝ անոր սեպհական անուն
 մը դնելու համար բառեր գտնէ: Եթէ ազգին
 մէջ այնպիսի ճարտար ու սրամիտ անձիւք կը
 գտնուին՝ որ նոր գիւտ գտնելու նոր արուեստ մը
 հնարելու շափ միտութիւն կը հասնի՝ կը ճարտա-
 րէ, իրենց ազգային լեզուին հարուստ գանձին մէ-
 ջէն ան գիւտին ան արուեստին յարմար անուն
 գտնել հանելու համար ճարտար ու հմուտ լե-
 զուագէտներ ու բանասէրներ չգտնուիլն իրա-
 ցրնէ ազգին մեծ դժբախտութիւն ու անարդու-
 թիւն կ'ըլլար: Իսկ եթէ ազգին յարաջադիմու-
 թեանը համար օտար ազգէ մը նոր գիւտ նոր ար-
 հեստ մը առնուլ ազգին մէջ խոթելը կարեւոր
 կ'ըլլայ, միթէ հարկ է անիկակ այն ազգին բա-
 ռովն ու անունովն անուանել, կամ թէ գիւտին
 ու արհեստին հետ անունն ալ օտարէն առանց
 հարկի մուրալ ու առնուլ, միթէ նոյնն ազգային
 բառով ու անուամբ մը չիկրնար ճիշդ ու որոշ

բացայայտիլ: Թարգմանութիւնը, այսինքն օտար լեզուի մը խօսքն ու բառերն ազգային լեզուին յատուկ ոճովն ու բառերովը թարգմանելն ալ գեղեցիկ ու ընտիր արուեստ ու հմտութիւն մըն է. ուրեմն ո՛վ որ իր լեզուն աղէկ ու կատարեալ գիտէ՝ պէտք է որ սորված օտար լեզուէն իր լեզուին թարգմանելու, եւ ամէն բանն ու անունը՝ սրայիսի եւ իցէ նիւթի ու գիտութեան մէջ՝ ըստ ճիշդ նշանակութեան ազգային բառով ու անունով բացատրելու կարող ըլլայ: Մեր խօսքը հոս ազգային լեզուին ըստ կարի հմուտ ու վարժ եւ ուրիշ լեզուներու տեղեակ անձանց համար չէ, որոնց գիրք մը գրած ու թարգմանած ատենն՝ իրենց ազգային լեզուին՝ ըստ ոճոյն ու ըստ բառից եւ բանից՝ հաւատարիմ մնալու կամք ու ջանք ունենալուն վրայ չենք տարակուսիր: Խօսքերնիս՝ բաց ի փոքր փոքր գրութիւններու եւ օրագրերու մէջ աշխատողներէն՝ առհասարակ ամէն ազգայնոց համար է, զորոնք կը յորդորենք՝ որ ընտանի թղթոց ինչպէս նաեւ հասարակ խօսակցութեան մէջ լեզուին անխառն (իր յատուկ բառերովն առանց օտարալեզու բառերու) գործածութեան մտադիր ու զգուշաւոր ըլլան:

Մայրենի լեզուն խօսելու եւ բանեցընելու ատեն օտար բառեր գործածելը կամ արհեստագործական կը պատճառի, կամ անհրաժեշտ ու անհրաժեշտ , կամ անհրաժեշտ , եւ կամ (որ շատ արհամարհելի ու տխուր բան է,) անհրաժեշտ ու անկարգ անհրաժեշտ : Տե՛ղիք՝ կամ լեզուին կատարելապէս տեղեակ ու վարժ չըլլալու պատճառաւ խօսքին մէջ օտար բառեր խառնելը խափանելու համար ուրիշ պատշաճական ու գիւրին միջոց չիկրնար գտնուիլ, բայց եթէ ամէն մէկ խօսողին ու գրողին ջանքն ու գործունեայ կամքը, որն որ մարդկային գործոց մէջ ամէն դժուարութիւններուն կը յաղթէ, ու անհակառակելի ե-

բեցող արգելքները շարունակեալ եռանդով մէկ-
գի կ'ընէ կը բառնայ: Եթէ օտարք օտարաց լե-
զուն կը սորվին ու անիկայ գործածած ատեննին
կ'աշխատին որ իր մաքրութեամբն ու յատուկ ո-
ճերովը բանեցընեն, հապա որչափ եւս առաւել
իրաւունք է՝ որ իւրաքանչիւր դք իր ազգային լե-
զուն աղէկ գիտնալով՝ անխառն ու մաքուր խօ-
սելու եւ գրելու հմուտ ըլլայ ու պակասութիւն-
ները ճանչնալու եւ շիտակելու միջոցները բանե-
ցընէ, ի հմտագունից տեղեկանալով, լեզուն յա-
ճախ ու մտադրութեամբ գործածելով, ու չգիտ-
ցածը սորվելու եւ գիտցածը կատարելագործելու
ետեւէ ըլլալով: Այսպէս լեզուին մէջ օրէ օր
աւելի վարժելով, անիկայ կատարեալ կը գիտնայ,
անոր մէջ գիւրութեամբ ամէն խորհուրդները կը
բացատրէ ու օտար լեզուի մութացածոյ բառերը
գործածելու կարօտ չըլլար:

Լեզուի մէջ ~~անհարմարութիւն~~ ու ~~անհարմարութիւն~~
օտար բառեր խոթել ու գործածելուն գլխաւոր
պատճառն ըստ մասին դարձեալ տգիտութիւնն՝
այսինքն լեզուն աղէկ չգիտնալն է. բայց որով-
հետեւ բան մը չգիտնալէն աւելի ամօթ ու նա-
խատինք է՝ միջոց ու գիւրութիւն ունենալով՝
անհոգութեամբ անիկայ սորվիլ չուզելը. անոր
համար կարողութիւն ու ժամանակ ունեցող անձի
մը աս բանիս մէջ կամօք անհոգ ու անփոյթ
գանուիլը ու անկատար գիտցածը կատարելագոր-
ծելու մէջ թուլութիւն ցուցընելը յիրաւի նա-
խատինք կ'ըլլայ. եւ աս նախատինքը միայն իրեն
անձին վրայ չիմնար, հապա նաեւ ընդհանրապէս
ազգին ալ պատուաւոր բան մը չէ, մանաւանդ
թէ փնասակար է. որովհետեւ ազգ ըսածնիս մի
եւ նոյն ցեղէ յառաջ եկող մասնաւոր անձինք-
ներէ բաղկացեալ մեծ ընկերութիւն մըն է,
որուն մէկ գլխաւոր զօդն է ազգային լեզուն.
ուստի եւ այն մասնաւոր անձանց կատարելու-

թիւներն ու անկատարութիւնները մասամբ իմն
 ազգին կը համարուի, ազգին վրայ կ'երթայ. արդ
 եթէ ազգայինը ազգին միութեան զօղն ու կա-
 պը, եւ անով անոր գոյութիւնն ու պայծառու-
 թիւնը ինչ եւ իցէ պարագայի մէջ պահելու եւ
 յառաջ տանելու անհոգ ու անփոյթ կ'ըլլան,
 բոլոր ազգին չէ թէ միայն արհամարհուելուն
 պլ եւ քայքայելուն առիթ կու տան: Արեւմտ
 ազգային պատուոյն նախանձախնդիր ըլլողը պէտք
 է որ ազգային լեզուին ուսման, մաքուր գործա-
 ծութեան ու կատարեալ պահպանութեան մէջ
 ժիր ըլլայ, անիկայ չէ թէ միայն կրցածին չափ
 բանեցրնելու, հապա նաեւ իր յատուկ բառե-
 բովը գործածելու փոյթ տանի ու առիթ փնտռէ:
 Աս փոյթն ու ժրութիւնն առաւելապէս ազգային
 գպրոցներու մէջ մայրենի լեզուն ըստ կարի հի-
 մամբ սորված երիտասարդներէն կը պահանջուի,
 որ անոնցմէ դուրս ելլելէն ետքը սորվածնին ան-
 հոգութեամբ չմոռնան ու իրենց մաքուր լեզուն
 խառն զրուցուածքով չապականեն ու չաւրեն:

Մէջընդմէջ ալ ազգային լեզուին մէջ օտար
 բառեր խառնելու եւ բանեցրնելու մեծապէս կ'օգ-
 նէ: Իր լեզուն եւ օտար (մանաւանդ գտնուած
 երկրին մէջ աւելի գործածական ու իրր փրոզ
 կամ գլխաւոր ըլլող) լեզու մըն ալ գիացողը
 ազգայնոց հետ խօսած ատենն շատ անգամ իր
 սովորութեամբ աս ան օտար բառն իր լեզուին
 մէջ խառնելով խօսքը յառաջ կը տանի: Գիտենք
 որ շատերուն համար ոչ լեզուին անգէտ ըլլալն
 ու ոչ անհոգութիւնը՝ հապա միայն սովորութիւ-
 նը պատճառ կ'ըլլայ իր մայրենի լեզուին դէմ
 այս (կրնամ ըսել՝ ակամայ) անհատաարմութիւնն
 ու արհամարհութիւնն ընելու: Քայց որովհետեւ
 սովորութիւնն իրօք եւ ամէն ժամանակ անկարգ
 ու արհամարհելի ըլլող բանը ոչ երբեք կրնայ
 օրինաւոր եւ գովելի ցուցրնել, անոր համար լե-

զուի մը մարբութիւնը խանգարելու մէջ ալ ոչ զոր կրնայ անբասիր ընել. ու այսպիսի անկարգ ու ֆնասակար սովորութիւնը՝ ինչպէս կ'ըսուի՝ հակառակ սովորութեամբ յաղթելու եւ շիակելու ջանալն ամէն խոհեմ ու հասարակաց օգտին փափագող ազգայնոց պարտքն է, մանաւանդ ուր որ այն անկարգ սովորութեան շէտեւիլը կամաց կամաց ազգին մէջ բարեկարգութեան յառաջ երթալուն եւ ազգային ստացուածի մը՝ որ է մայրենի լեզուին՝ կորստեան վտանդէն ազատ մնալու պատճառ կ'ըլլայ:

Իսկ ինչն է՝ ուրիշ ու մանաւանդ անկարգ նորինքն լեզուին մէջ ստար բառեր խոթելը, կրթուած կամ լեզուադէտ երեւալու փափագով՝ երկու խօսքին մէկն ստար լեզուով ըսելը, մեծի ու պղտիկի հետ խօսուած ժամանակ ստար լեզուի բառ կամ ոճ մը բերնէն հանելը հիմակու առեւնները քիչ մը աւելի յաճախած ու իբր թէ անմեղ մոլութիւնի մը պէս եղած է՝ Ասիակ ինք իրմէ չէ թէ միայն արհամարհելի հապա նաեւ ծիծաղելի բան մ'ըլլալուն համար չենք ուզեր անոր վրայ երկայն խօսելով մեր ընթերցողները ձանձրացընել, մանաւանդ որ ապահով ենք թէ իրենց առջին աս նորասիրութիւնը չէ թէ միայն յարգ չունի, հապա նաեւ անկից ըստ կարի կը զգուշանան եւ ուրիշներուն ալ խրատ ու բարի օրինակ տալու կ'աշխատին որ չըլլայ թէ աս մոլութիւնը ազգին մէջ ճարակելու ընթացք

¹ Գերմանացի հմուտ բանասեր մը աննիւթիս վրայ խօսած առեւնը շատ ազեկ կ'ըսէ. «Թէ որ ազգայնոց մը Անգղիայէն կամ Պարզիսլանդի գրուած նամակին մէջ հանուշերը գործածուած ոճեր ու խօսքեր գտնելու ըլլաւ. յայտնի իմացիք՝ որ զրոյք կամ այնպիսի ոճերու սիրահարեալ ու անտեղեկ գուարճացող թեթեւամիտ անձ մըն է. եւ կամ համբակ մը: Բայց ես կ'ըսեմ՝ թէ իր ազգային լեզուն ու ստար լեզու մըն ալ ազեկ ու հիմամբ գիտցող խոհեմ մարդ մը պէտք է որ իր ազգային մարտը լեզուու խօսի:»


մը բռնէ, եւ ազգային լեզուին օրէ օր աւելի եւս անշքանալուն ու աւրուելուն ասիթ ըլլայ: —

10. Ար յուսանք՝ որ մեր այսչափ խօսքերը բաւականապէս կը յայտնեն՝ թէ ազգային լեզուին պահպանութեան ու յառաջադիմութեան համար մեր Ազգայնոց ամէն մէկուն՝ իր աստիճանին ու կարողութեան համեմատ՝ խնամք ու փոյթ ունենալն որչափ հարկաւոր է: Բայց համառօտ գրուածներնուս վախճան տալէն առաջ՝ հոս իբր վերջաբան՝ խորհրդածութիւն մ'ալ ընել պատշաճ կը տեսնենք: Կան երկիրներ, (Ահհաստան, Հունգարիա, Տրանսիլուանիա, եւ այլն,) ուր մեր Ազգայինք այլ եւ այլ նեղութիւններէն ու պատերազմական արկածներէն ստիպուելով՝ բազմութեամբ գացած ու հաստատուն բնակութեամբ մնացած են: Ի սկզբան ասոնք իրենց ազգային լեզուն աղէկ գիտէին ու երկայն ատեն՝ գոնէ իրարու հետ՝ անով իրենց ամէն գործքերը կը հոգային: Ազգային գաղտնաստանարաններ ունէին, ուր ամէն բան իրենց լեզուով կը խօսուէր ու կը գրուէր: Նաեւ սեպհական դպրոցներ ունէին, ուր մասնաւոր վարպետներ ազգային լեզուն տղոց անխափան կը սորվեցընէին: Բայց երբ որ գանուած տեղերնուն ազգաց լեզուներուն մէջ սկսան վարժիլ, իրենց լեզուին հետ ան ալ կը գործածէին. ասով տոհմային լեզուն սկսաւ օրէ օր ու անզգալարար նուազիլ ու ետքէն անշքանալ ու աւրուիլ: Իրենք թէ որ աս բանիս վրայ ազգային զգացմամբ մտադիր եղած ու կրցածնուն չափ ճար ու դարման ընելու փոյթ տարած ըլլային, փնասին առջեւն առնելը, լեզուն կորստեան վտանգէն ազատելը կարելի եւ թերեւս դիւրին կ'ըլլար: Բայց ափսոս որ անփոյթ՝ գուցէ նաեւ անհոգ գանուեցան. լեզուն սկսաւ աւրուիլ ու մարելու ճամբայ բռնել, երիտասարդաց մէջ կամաց կամաց անգործածելի ըլլալ, ու իր գործածութիւնը գրեթէ

միայն ծերերու եւ եկեղեցականներու մէջ մնաց։
 Ծերերը մեռան պակսեցան. իսկ եկեղեցականներն
 իրենց եկեղեցական պաշտամանց ու արարողու-
 թիւններուն մէջ անոր գործածութիւնն անկորուստ
 պահեցին, բայց ժողովրդեան հետ օտար՝ կամ
 երկրին լեզուովը կը խօսէին, ու ետքը ստիպե-
 ցան քարոզին ալ օտար լեզուաւ յօրինել ու
 բեմերէն ժողովրդեան ըսել։ Ասանկով տոհմային
 լեզունիս ան մաս մաս բաժնած ու ցրուած բազ-
 մութիւններուն մէջ (մանաւանդ Աեհաստան) գրե-
 թէ բոլորովին մարածի պէս է. եւ եթէ տեղ
 տեղ քանի մը պղտիկ քաղաքներու մէջ, ուր
 Հայք բազմութեամբ կը բնակին, կը գործածուի
 նէ, շատ անչափ կերպարանքի մէջ ու օտար աղ-
 զաց բառերովը խառնած է։ Տխուր ու ցաւալի
 պատահում։ — Հիմայ թէ որ աս ազգայնոց մէջ
 մտնենք ու իրենց հարցընենք՝ թէ ինչու համար
 իրենց մայրենի լեզուն չեն գիտեր, ինչու ուրիշ
 ազգաց պէս իրենց սեպհական լեզուն չեն գոր-
 ծածեր. պատասխան կու տան թէ մեր նախնի-
 ներն անիկայ պահելու եւ մշակելու չեն ջանացեր,
 ու տարուէ տարի անոր գործածութիւնը պակսե-
 լով, մենք ալ մեր մեծերէն ու ծնողացմէ օտար
 լեզու լսելով, ու գսրոցի մէջ մեր ազգային լե-
 զուն չսորվելով՝ անիկայ չենք գիտեր ու չենք
 հասկընար։ Աս պատասխանը կու տան ներքին ցաւ
 ու տրամութիւն մը ցուցընելով՝ որ հիմակուան
 կրթութեան ու յառաջագիմութեան ժամանակ-
 ները, ուր ամէն պղտիկ ազգ օտար տէրութեանց
 տակն ալ բլլալով՝ իր տոհմային լեզուն կը գոր-
 ծածէ ու ըստ կարի կը մշակէ, իրենք գրեթէ
 բոլորովին առանց սեպհական ազգային լեզուի մնա-
 ցեր են, կամ անիկայ չեն սորված չեն գիտեր։

Ահաւասիկ աս տխուր հետեւութիւնը կրնայ
 մեր յաջորդներուն համար ալ հանգիպիլ թէ որ
 հիմայ մենք ալ ազգային լեզուներնուս պահպա-

նութեան ու մշակութեան մէջ անհոգ ու անփոյթ գանուելով ու աւելի օտար լեզուներու փոյթ տանելով, անոր օրէ օր անշքանալուն ու մոռցուելուն ու վերջապէս կորսուելուն պատճառ տալու ըլլանք: Միթէ չենք գիտեր ու մեր ծերերէն չենք լսած՝ որ ասկից յիսուն վաթսուն տարի առաջ մեր տուներուն մէջ մինակ հայերէն խօսիլն անանկ հաստատուն սովորութիւն մըն էր, որ նոյն իսկ Յուդաններու քաղքին մէջ մանչ տղաք ու պատանիներն իսկ շուկայ երթալ սկըսելու ստեննին, այսինքն տասուերկու՝ տասնուչորս տարեկան եղած ժամանակնին դեռ միայն հայերէն գիտէին, ու շուկայ ելլելէն ետքը տաճկերէն լեզուի մէջ կը վարժէին: — Իսկ հիմակ ինչպէս է: . . . : Յիրաւի քսան քսանուհինգ տարիէն ի վեր ազգային լեզուաւ գրքեր աւելի յաճախելով ու լրագիրներն ալ շանալով եւ անոնց ընթերցուածը տարածուելով, մանաւանդ ազգային գպրոցներէն ելող անձինք բազմանալով, հայերէն հասկընալը՝ խօսիլն ու գրելը շատ յառաջ գնաց ու կ'երթայ, ու այլ եւ այլ տեղեր գոնէ աշխարհաբար լեզուն միութեան կամ միօրինակութեան կերպարանք մը ստանալու սկսած է: Բայց աս ընթացքը շարունակելու եւ օրէ օր աւելի յառաջ տանելու համար աւելի եւս ջանք ու խնամք ունենալ հարկաւոր է, որ վերը յիշուած պատահումը հանդիպելուն վախն ու վտանգը բոլորովն փարատի:



Յ Ա Ն Կ

ԳԼ. Ա.	Մարդկային լեզուին սկիզբը	2
ԳԼ. Բ.	Մարդկային նախաւոր լեզուին հանդամանքը	26
ԳԼ. Գ.	Մարդկային լեզուին սկզբնական միութիւնը	34
ԳԼ. Դ.	Մարդկային լեզուին խառնակութիւնն ու պլլ եւ պլլ լեզուներու բաժնութիւնը	50
ԳԼ. Ե.	Մասնաւոր լեզուաց ծաղուռն ու շամնալը, եւ իրենց մէջ մտած փոփոխութիւնները	78
ԳԼ. Զ.	Հին ազգաց իրենց լեզուին պահպանութեան ու գործածութեան համար ունեցած խնամքը	93
ԳԼ. Է.	Նոր ազգաց իրենց մայրենի լեզուն պահելու եւ ծաղկեցընելու համար ցուցըցած ջանքը	103
ԳԼ. Ը.	Ըզգային լեզուն անկորուստ պահելու եւ ծաղ- կեցընելու միջոցները	118

— Կ Ե Կ Ե Կ —

